

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱԾԻՐԻ ԶԱՂԱԶԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Գլխավոր տեղեկություն**

|                          |                                    |
|--------------------------|------------------------------------|
| Համար                    | N 1034-Ն                           |
| Տիպ                      | Որոշում                            |
| Ակտի տիպ                 | Հիմնական ակտ (18.10.2007-մինչ օրս) |
| Կարգավիճակ               | Գործում է                          |
| Սկզբնաղբյուր             | ՀՀՊՏ 2007.10.17/51.1 Հոդ.1064.1    |
| Ընդունող մարմին          | ՀՀ կառավարություն                  |
| Ընդունման ամսաթիվ        | 09.08.2007                         |
| Ստորագրող մարմին         | ՀՀ վարչապետ                        |
| Ստորագրման ամսաթիվ       | 18.09.2007                         |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 18.10.2007                         |

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2007 թվականի N 1034-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱԾԻՐԻ ԶԱՐԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 14.3-րդ և 17-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ)՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ գլխավոր հատակագծի իրականացման մոնիթորինգն ապահովել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Պետական քաղաքաշինական կադատորի վարման և քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի անցկացման կարգը հաստատելու մասին» N 802 որոշմամբ սահմանված կարգի:
3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումները՝ ըստ առաջնահերթության:
4. Առաջարկել Տաշիրի քաղաքապետին համայնքի զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման միջոցառումները՝ ըստ առաջնահերթության:
5. Սահմանել, որ գլխավոր հատակագծով նախատեսված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ըստ գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման հերթականության:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. սեպտեմբերի 18  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
օգոստոսի 9-ի N 1034-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱԾԻՐԻ ԶԱՐԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՏԵՋԱՏԱՅԻՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գ Լ ՈՒ Խ Ի

ՏԱԾԻՐԻ ԶԱՐԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՍՍԻՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

- I-1. Պատմական ակնարկ և նախնինում մշակված գլխավոր հատակագծերի հիմնադրույթների իրականացման վերլուծություն
  - I-1.1. Պատմական ակնարկ
  - I-1.2. Նախնինում մշակված գլխավոր հատակագծերի հիմնադրույթների իրականացման վերլուծություն
- I-2. Տաշիրի քաղաքային համայնքը Լոռու մարզի տարաբնակեցման համակարգում
- I-3. Տաշիր քաղաքի տարածքի համալիր գնահատականը
  - I-3.1. Տաշիր քաղաքի քաղաքաշինական զարգացման ռեժիմը
  - I-3.2. Տաշիր քաղաքի տարածքի բարենպաստության աստիճանը
    - I-3.2.1. Տարածքի գործոնային գնահատականն ըստ բնական պայմանների
      - I-3.2.1.1. Կլիմայական պայմաններ
      - I-3.2.1.2. Առողջարանային ռեսուրսներ
      - I-3.2.1.3. Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոգրաֆիկական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները:
        - I-3.2.1.4. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը
        - I-3.2.1.5. Տաշիրի քաղաքային համայնքի ինժեներական նախապատրաստման միջոցառումներ
      - I-3.2.2. Տարածքի գնահատականն ըստ հատակագծային պայմանների
        - I-3.2.2.2. Պատմամշակութային հուշարձաններ

Գ Լ ՈՒ Խ ԻԻ

ՏԱԾԻՐԻ ԶԱՐԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱԿԱՎՈՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

- II-1. Հեռանկարային զարգացման հայեցակարգ
  - II-1.1. Արդյունաբերության զարգացման հեռանկարները
  - II-1.2. Արդյունաբերության բազային, կոմպլեքսատեղծ ճյուղերի զարգացման պոտենցիալ հնարավորությունները
  - II-1.3. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հնարավորությունը
- II-1.4. Ռեկրեացիայի հեռանկարային քաղաքաշինական կազմակերպումը
- II-2. Բնակչություն և բնակելի ֆոնդ
  - II-3. Հասարակական սպասարկման ոլորտ
  - II-4. Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք
  - II-4.1. Քաղաքի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները
  - II-4.2. Հատակագծային հեռանկարային կառուցվածք
  - II-4.3. Քաղաքի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ
  - II-5. Տաշիրի քաղաքային համայնքի տրանսպորտային ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը
  - II-5.1. Արտաքին տրանսպորտ
  - II-5.2. Տրանսպորտային ուղիների զարգացման հեռանկարները
  - II-5.3. Ներքին տրանսպորտ
  - II-5.4. Տաշիր քաղաքի տարածքում ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումների հաշվարկ
- II-6. Ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը
  - II-6.1. Ջրամատակարարում
  - II-6.2. Ջրահեռացում (կոյուղի)
  - II-6.3. Էներգամատակարարում
    - II-6.3.1. Էլեկտրամատակարարում
    - II-6.3.2. Գազամատակարարում
    - II-6.3.3. Ջերմամատակարարում
  - II-6.4. Կապ
- II-7. Շրջակա միջավայրի պահպանություն
  - II-7.1. Շրջակա միջավայրի քաղաքաշինական Էկոլոգիական վիճակի վերլուծություն
  - II-7.2. Մթնոլորտային օդի պահպանություն
  - II-7.3. Մակերևութային և խորքային ջրերի պահպանություն
  - II-7.4. Տարածքային և հողային ռեսուրսների պահպանություն
    - II-7.4.1. Տարածքային ռեսուրսների պահպանություն
    - II-7.4.2. Հողաբուսական ծածկույթի պահպանություն
  - II-7.5. Պատմամշակութային հուշարձանների պահպանություն
- II-8. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ
- II-9. ՀՀ Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Գ Լ ՈՒ Խ ԻԻԻ

ՏԱԾԻՐԻ ԶԱՐԱՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

- III-1. Ընդհանուր դրույթներ
  - III-1.1. Գոտիավորման նախագծի իրավագործությունը
  - III-1.2. Գոտիավորման նախագծի հիմնական նպատակները
  - III-1.3. Գոտիավորման նախագծի կիրառման բնագավառը
  - III-1.4. Գոտիավորման համակարգի կառուցվածքը
  - III-1.5. Գոտիավորման նախագծի իրավական հիմքերն են
  - III-1.6. Գոտիավորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ
  - III-2. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր
  - III-2.1. Սահմաններ
  - III-2.2. Կլիմայական պայմաններ
  - III-2.3. Հողածածկույթ
  - III-2.4. Ինժեներատեխնիկական պայմաններ
  - III-2.5. Սեյսմատեկտոնական պայմաններ
  - III-2.6. Ինժեներական ենթակառուցվածքներ
  - III-3. Շրջակա միջավայրի պահպանություն
  - III-4. Գոտիավորման նախագծի կազմը
  - III-5. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները
  - III-6. Թույլատրելի օգտագործման ձևերի աղյուսակ
  - III-7. Գոտիներ
  - III-8. Կառուցապատման կանոններ
  - III-9. Տերմիններ և սահմանումներ
- ՏԱՇԻՐԻ ԶԱՆԳՆԱԿՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՈՒՑՆԱՀԵՐՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԾՁՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

| <b>ՏԱՇԻՐԻ ԶԱՆԳՆԱԿՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾ</b>  |    |
|---|----|
| ԶԱՆԳՆԱԿՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԴԻՐԸ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՐԱՆՄՈՐՏԱՑՅՈՒՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՑՅՈՒՆ ԿԱՊԵՐԸ | 1  |
| ԻՆՇԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՅԱԾՔՆԵՐ ԲԼՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ, ՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ   |    |
| ՏԱՐԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ԾՁՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾ (ՀԵՆԱԿԵՏԱՑԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ)  | 2  |
| ՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՎՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ   | 3  |
| ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ   | 4  |
| ԾՁՏԱԳՈՐԾ ՀԱՆԱՇՆՈՒՄԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԵՐ   | 5  |
| ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՅՈՒՐԱՐԶԻ ԶԱՐԿՆԱԳԻՐ  | 6  |
| ԼԱՆԴՇԱՖՏԱՑՅՈՒՆ ԿԱՇՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՐԱԿԱԳԻԾ   | 7  |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՆԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԱԳԻՐ)   | 8  |
| ՏՐԱՆՄՈՐՏԻ ՈՒՐԱԿԱԳԻԾ   | 9  |
| ԻՆՇԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՅԱԾՔՆԵՐԻ ՈՒՐԱԿԱԳԻԾ  | 10 |
| ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԻ ՊԱՀՊԱՆՎՈՒԹՅՈՒՆ և ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ   | 11 |
| ՌԵԿՐԵՑԻՎՆԵՐ ԵՆԹԱԳՈՏՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԱՑՅՈՒՆ ԶԱՆԳՆԱԿՆԻ ԿԱՇՄԱԿԵՐՊՈՒՄԸ  | 12 |
| <b>ՏԱՇԻՐԻ ԶԱՆԳՆԱԿՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ</b>  |    |
| ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ԳԾԱԳԻՐ   | 13 |
| ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐԻ ՆՇԱՀԱՐՄԱՆ ԳԾԱԳԻՐ   | 14 |
| ԻՆՇԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՅԱԾՔՆԵՐ   | 15 |

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Տաշիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագիծը՝ համատեղված քաղաքի գոտիավորման նախագծի հետ, մշակվել է ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով (պայմանագիր N ՄԲՄՇԶԲ-06/12-1 02.05.06):

Նախագծման համար ուղեցույց են ծառայել հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- Կարգ ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 609-Ն որոշմամբ):
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման և փոփոխման (հաստատված 14.05.01 N408 որոշմամբ):
- Տարբեր տարիներին նախագծային ինստիտուտներում մշակված Տաշիր (նախկին Կալինին) քաղաքի գլխավոր հատակագծերը, քաղաքի տարբեր թաղամասերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերը:
- ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Ջրային ռեսուրսների պետական կոմիտեի, ՀՀ Լոռու մարզպետարանի, Տաշիրի քաղաքապետարանի, տարբեր կազմակերպությունների Տաշիր քաղաքին վերաբերող ելակետային նյութերը, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:
- ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կադաստրային քարտեզները:
- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և Կառավարության կողմից հաստատված (10.04.03թ. N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» հիմնադրույթները:
- Տաշիր քաղաքի տարածքի սեյսմամիկրոշրջանացման քարտեզը՝ մշակված «Գեոհիսկ» գիտահետազոտական ընկերության կողմից:
- Նախագծում հաշվի են առնված նաև ՍԵՄԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայրցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումները և տարածքային պլանավորման փոխկապակցության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.
- Տնտեսության կայուն զարգացում, որն ընդգրկում է՝
  - Արդյունաբերության «բազային» կոմպլեքսաստեղծ ճյուղերը,
  - Գիտատար արդյունաբերական արտադրությունը,
  - Ագրարտադրական համալիրը,
  - Ռեկրեացիոն ոլորտը,
  - Բնապահպանական միջոցառումների իրականացումը:
- Քաղաքաշինության կայուն զարգացում, որն ընդգրկում է.
  - Բնակելի շինարարությունը,
  - Բնակելի-կոմունալ շինարարությունը,
  - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործումը,
  - Բնապահպանական միջոցառումների իրականացումը:
- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների զարգացում, որն ընդգրկում է՝
  - Տրանսպորտային ենթակառուցվածքը,
  - Ջրամատակարարման, ջրահեռացման համակարգը,
  - Էներգամատակարարման համակարգը,
  - Թափոնների ուտիլիզացիան,
  - Բնապահպանական միջոցառումների իրականացումը:

Տաշիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը քաղաքի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների ֆունկցիոնալ նշանակության որոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

**Գ Լ ՈՒ Խ Ի**

**ՏԱՇԻՐԻ ԶԱՆԳՆԱԿՆԻ ԳՈՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԻ ԶԱՆԳՆԱԿՆԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**

**1-1 Պատմական ակնարկ և նախկինում մշակված գլխավոր հատակագծերի հիմնադրույթների իրականացման վերլուծություն**

### I-1.1. Պատմական ակնարկ

Տաշիր քաղաքը նախկինում կոչվել է գյուղ Կորոնցովկա և հիմնադրվել է 1834 թ. Ռուսաստանից վերաբնակեցված ռուսների կողմից: 1935 թ. վերանվանվել է Կալինինո ի պատիվ Մ.Ի. Կալինինի, իսկ 1937 թ-ից եղել է Կալինինոյի վարչական շրջանի շրջկենտրոնը:

1961-1983 թթ. ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ:

1962-1964 թթ. Կալինինոյի շրջանը միացած է եղել Ստեփանավանի շրջանին:

1983-1995 թթ. ունեցել է շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ, միաժամանակ լինելով Կալինինոյի շրջանի շրջկենտրոնը:

1995թ.-ից Տաշիրը (Նախկին Կալինինո) քաղաքային համայնք է Լոռու մարզի կազմում:

Կալինինոյի շրջանի տարածքը մ.թ.ա. II-IV դդ. եղել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի մի մասը և մտել Հայոց Արտաշեսյան, ապա՝ Արշակունյաց թագավորության մեջ: IX դարից Գավառի տիրում էին Բագրատունիները: X դարում Տաշիր-Ձորագետի կամ Լոռու ֆեոդալական թագավորությունը հանդիսանում էր Անի-Շիրակի վասալը: Հետագայում Տաշիր գավառն անցնում է Պարսկաստանի և թուրք-սելջուկյան տարբեր ցեղապետերի տիրապետության տակ: XIX դարի սկզբին Տաշիրի մի մասը Կրասնայի հետ միասին մտնում են Ռուսաստանի կազմի մեջ: Մինչև սովետական կարգերի հաստատումը Տաշիրը մտել է Թիֆլիսի նահանգի Ղազախ-Շամշարի ոչխարանոցային մեջ: 1919թ.-ից մինչև 1920թ. Նոյեմբերը եղել է Լոռու «Չեզոք գոտու» մեջ:

Ղաշնակցական Հայաստանի և մենշևիկյան Կրասնայի միջև ծագած հակասությունների պատճառով Լոռին ժամանակավոր անջատվեց Հայաստանից: 1918 թ. Հայաստան նեխումած թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Կրասնայ կանգնեցնելու համար Լոռի մտան Կրասնայի մենշևիկյան կառավարության զորքերը: 1918թ. բռնկվեց հայ-վրացական պատերազմ Լոռու համար: 1919թ. հունվարին, Թիֆլիսում հայ-վրացական կոնֆերանսի որոշումով նախկին Բորչալուի գավառի Ալավերդու, Ռժուլուարի և Կորոնցովկայի (այժմյան Տաշիր) շրջանները «Չեզոք գոտի» ճանաչվեց և Լոռին վերածվեց անգլո-ամերիկյան ռազմական գաղութի:

1921թ. փետրվարին Սովետական զորքերի օգնությամբ Լոռին միացվեց Սովետական Հայաստանին:

1920թ. դեկտեմբերի 26-ի ՀՍՍՀ Հեղկոմի Դեկրետով վերացվել էր երկրի հին վարչատարածքային բաժանումը նահանգների և շրջանների, ստեղծվել էին 6 գավառ, իսկ 1921թ. հուլիսի 21-ի դեկրետով ստեղծվեց 8 գավառ, այդ թվում «Չեզոք գոտու» ազատագրված Լոռու գավառը, որի կազմում էր Տաշիրի (Նախկին Կորոնցովկա) գավառամասը: 1937թ. դեկտեմբերի 31-ի ՀՍՍՀ Կենտրոնական Նախագահության որոշումով կազմավորվում են վարչական շրջաններ, այդ թվում Կալինինոյի շրջանը՝ Կալինինո շրջկենտրոնով:

1961թ. ՀՍՍՀ-ի Գերագույն հորինողի որոշումով Կալինինոյի տրվում է քաղաքատիպ ավանի կարգավիճակ:

1983-1995թ.թ. Կալինինո շրջանային ենթակայության քաղաք էր: 1995թ. դեկտեմբերի 4-ի «Հ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Կալինինոյի, Ստեփանավանի, Գուգարքի, Թումանյանի, Սպիտակի վարչական շրջանների միավորումով կազմավորվել է Լոռու մարզը, որի կազմում է Տաշիր քաղաքային համայնքը (Նախկին Կալինինո):

### I-1.2. Նախկինում մշակված գլխավոր հատակագծերի հիմնադրույթների իրականացման վերլուծություն

Տաշիր քաղաքի առաջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1971 թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտում (Նախագծի գլխավոր ինժեներ Հովհաննիսյան Գ.Մ.):

Ըստ գլխավոր հատակագծի, քաղաքային տարածքը 1971թ. տվյալներով կազմում էր 495.34 հա, որից բնակելի գոտին՝ 243.92 հա, արդյունաբերական գոտին՝ 45.52 հա, կոմունալ-պահեստային գոտին՝ 39.60 հա, մնացածը՝ գյուղատնտեսական, անտառային և այլ հողեր: Ըստ 2000թ. համար մշակված հեռանկարի՝ քաղաքային տարածքը պետք է կազմեր 1275.0 հա, որից բնակելի տարածքը՝ 455.75 հա, արդյունաբերական տարածքը՝ 170.10 հա, կոմունալ-պահեստային գոտին՝ 39.60 հա:

Բնակչությունը 1971թ. կազմում էր 7.3 հազ. մարդ, իսկ հեռանկարային բնակչությունը 2000թ.-ին պետք է կազմեր 20.0 հազ. մարդ (հաշվարկված աշխատանքային հաշվեկշիռի մեթոդով):

Քաղաքի տարածքում, ըստ գլխավոր հատակագծի, ընդգրկված էին քաղաքի արևմտյան մասում տեղակայված անտառապաշտպան անտառաշերտը, ինչպես նաև արևելյան մասում գտնվող բլուրները, որոնց վրա նախատեսվում էր անտառ-այգի և հանգստի գոտի: Հանգստի գոտին, փաստորեն, շրջափակում էր քաղաքը արևմուտքից, արևելքից, հյուսիսից: Քաղաքից դուրս էր հանվում անասնապահական էքսպերիմենտալ բազան, գյուղատնտեսության օբյեկտները և հատուկ տարածքները: Արդյունաբերական, կոմունալ-պահեստային օբյեկտները, կենտրոնացվել էին քաղաքի արևմտյան և հարավային մասերում:

1976թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտում առաջին անգամ մշակվել է Կալինինոյի վարչական շրջանի «Շրջանային հատակագծման նախագիծը»: Ըստ նախագծի հիմնադրույթների 2000թ. Կալինինոյի շրջանի բնակչությունը կանխատեսվել էր 49.0 հազ. մարդ, իսկ Կալինինո շրջկենտրոնինը՝ 20.0 հազ. մարդ (առ 01.01.77թ. շրջանի բնակչությունը կազմում էր 34.2 հազ. մարդ, իսկ Կալինինո շրջկենտրոնինը՝ 8.9 հազ. մարդ):

Կանխատեսվում էր չեն իրականացել, քանի որ առ 01.01.2000թ. Կալինինոյի շրջկենտրոնի բնակչությունը կազմում էր 36.6 հազ. մարդ, Կալինինո շրջկենտրոնինը՝ 14.2 հազ. մարդ:

Տաշիր քաղաքի (Նախկին Կալինինո) երկրորդ գլխավոր հատակագիծը մշակվել է 1988թ. երկրաշարժից հետո, 1992թ.: Մինչ այդ քաղաքը հիմնականում կառուցապատվել է տարերայնորեն, որոշ հատվածներ՝ մանրամասն հատակագծման նախագծերով:

Ըստ գլխավոր հատակագծի հիմնադրույթների՝ ընդարձակվում էր քաղաքի տարածքը՝ 567.7 հա-ից հասցնելով 893.2 հա, իսկ բնակչությունը՝ 12700-ից մինչև 17000 մարդու (2000թ.-ի համար), 20000 մարդու (2010թ.-ի համար):

Նախատեսված էր զարգացնել արդյունաբերությունը, հիմնականում մեքենաշինությունը: Արդյունաբերությունում զբաղվածների թիվը 2010թ. պետք է հասցներ 3500 մարդու:

Գլխավոր հատակագծի հիմնադրույթներով քաղաքի հեռանկարային զարգացման համար ընտրվել են հարավ-արևելյան և հարավ-արևմտյան ուղղությունները: Քաղաքի ընտրված հատակագծային լուծումն ունի գծային քաղաքի հատուկ կառուցվածք, որտեղ արդյունաբերական և կոմունալ պահեստային գոտիները տեղադրված են բնակելի գոտուն զուգահեռ: Բնակելի կառուցապատումը նախատեսված է իրականացնել պետական և անհատական տիպերով, ընդ որում անհատական կառուցապատումն ապահովվել է 400 մ<sup>2</sup> տևամբներով:

1971 և 1988 թթ. մշակված գլխավոր հատակագծերի հիմնադրույթները (բնակչության, տարածքային, արդյունաբերության աճերը) հիմնականում չեն իրականացել սովետական շրջանի կանխատեսումային մեթոդների անկատարելիության և սոցիալ-տնտեսական փոփոխման, անցումային փուլի դժվարությունների պատճառով:

### I-2. Տաշիրի քաղաքային համայնքը Լոռու մարզի տարաբնակեցման համակարգում

Տաշիրի քաղաքային համայնքի տարածքը տեղակայված է Լոռու մարզի հյուսիսարևմտյան մասում, Ձորագետի ձախավայր վտակ Տաշիրի հովտում, Երևան-Ապարան-Սպիտակ-Ստեփանավան-Տաշիր-Կրասնայի սահման միջպետական ճանապարհի վրա:

Հաշվի առնելով Տաշիր քաղաքի տեղադրվածությունը մարզի ինտենսիվ յուրացված գոտում, մարզի ինժեներական, տրանսպորտային ենթակառուցվածքների ընդհանրությունը, ռեսուրսների համատեղ օգտագործման անհրաժեշտությունը, Տաշիր քաղաքի զարգացման տնտեսական և քաղաքաշինական ուղղությունները դիտարկվել են «Հ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» Լոռու մարզին վերաբերող հիմնախնդիրների հետ փոխկապակցված:

Մարզը կազմավորվել է 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Գուգարքի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի նախկին վարչական շրջանների ընդգրկումով: Մարզն ունի 113 համայնք, որից 8-ը՝ քաղաքային (Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Սպիտակ, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ) և 105-ը՝ գյուղական համայնք:

Մարզի տարածքն ըստ քաղաքաշինական-տնտեսական յուրացվածության աստիճանի բաժանվում է ինտենսիվ, թույլ յուրացված, ռեկրեացիոն-բնապահպանական, տարաբնակեցման համար անբարենպաստ գոտիների («Հ տարաբնակեցման գլխավոր նախագիծ» հիմնադրույթներ):

- Ինտենսիվ յուրացված գոտիները ձգվում են Փամբակ, Աղստև, Դեբեդ, Ձորագետ, Տաշիր գետերի հովիտներով, գոտիների տարածքները զբաղեցված են արժեքավոր գյուղատնտեսական հողերով, տարածված են խմելու հանքային ջրերի աղբյուրներ, արտազան ջրերի հորիզոններ, ինչպես նաև մետաղային, ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրեր, առկա են էկոլոգիկային կոնֆլիկտային իրավիճակներ:

- Գոտու համար սահմանված է զարգացման սահմանափակման ռեժիմ (բնակավայրերի, այդ թվում Տաշիր քաղաքի տարածքային աճի սահմանափակում, միջազգային տրանսպորտերի համապատասխանող տեխնոլոգիաներով արդյունաբերական օբյեկտների տեղադրում, գյուղատնտեսական արժեքավոր հողերի օտարման արգելում շինարարական նպատակների համար, բնապահպանական միջոցառումների լայն համալիրի կիրառում):

- Թույլ յուրացված գոտիները զբաղեցնում են ինտենսիվ յուրացված գոտիների հարող լեռնալանջերը (մինչը 2000-2100 մ սիշերը), որտեղ բնակվում է բնակչության 10.4 %-ը: Թույլ յուրացված գոտիներում սահմանված է առաջնահերթ զարգացման ռեժիմ (բնակավայրերի տարածքային աճ, ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, ինժեներական, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացում և կատարելագործում, բնապահպանական միջոցառումների իրականացում):

- Ռեկրեացիոն-բնապահպանական գոտին զբաղեցնում է մարզի տարածքի 26.3 %-ը, զբաղեցված է հիմնականում անտառտնտեսության հողերով (ըստ 1993թ. անտառային հողերի հաշվեկշիռի՝ 983 հա) և ռեկրեացիոն օբյեկտներով: Այժմ, երկրաշարժից հետո ընկած ժամանակահատվածում խիստ փոքրացել է անտառտնտեսության հողերում անտառածածկվածության տոկոսը (մոտ 40-50 %):

- Տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին սկսվում է 2000 մետրից մինչև լեռնագագաթները (2500-3550 մ) և զբաղեցնում է մարզի 18.5 %-ը: Գոտու ռեժիմը նախատեսում է անասնապահության և մետաղի և մետաղի ռեկրեացիայի զարգացում՝ բնապահպանական միջոցառումների կիրառումով (հակահեղեղային, պայքար ծյունահոսքերի դեմ, արոտների օգտագործման շեմային ժամկետների որոշում):

Մարզը ապահովված է հաղորդակցության ուղիներով: Մարզի տարածքով են անցնում Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք



| ամիսը | Քամու ուղղությունների կրկնելիություն % |          |              |              |          |              |          |              |              | Սնհողմու-թյունների կրկնելիությունը % | Քամու միջին ամսական արագությունը մ/վրկ | Քամու միջին տարեկան արագությունը մ/վրկ | Քամու միջին արագությունը (>15 մ/վրկ) օրերի քանակը | (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում |    |     |
|-------|--|----------|--------------|--------------|----------|--------------|----------|--------------|--------------|--------------------------------------|--|--|---|--|----|-----|
|       | Քամու միջին արագությունը մ/վրկ         |          |              |              |          |              |          |              |              |                                      |  |  |   | 20   | 50 | 100 |
|       | հս. արևելյան                           | արևելյան | հվ. արևելյան | հվ. արևմտյան | արևմտյան | հս. արևմտյան | արևմտյան | հվ. արևելյան | հվ. արևմտյան |                                      |  |  |   |  |    |     |
| Տաշիր | I                                      | 22/2.2   | 3/2.2        | 2/2.6        | 3/3.2    | 8/5.1        | 35/7.2   | 16/6.6       | 11/3.2       | 39                                   | 3.4                                    | 2.1                                    | 22  | 29   | 32 | 36  |
|       | IV                                     | 36/2.6   | 10/2.7       | 3/2.6        | 4/2.3    | 6/3.1        | 16/4.8   | 12/4.5       | 13/2.9       | 37                                   | 2.2                                    |  |   |  |    |     |
|       | VII                                    | 46/2.4   | 25/2.5       | 4/2.4        | 2/2.0    | 2/1.9        | 2/2.0    | 4/2.9        | 15/3.4       | 44                                   | 1.8                                    |  |   |  |    |     |
|       | X                                      | 4/2.2    | 8/2.3        | 3/1.8        | 3/1.3    | 5/2.5        | 14/4.4   | 10/3.6       | 17/2.1       | 42                                   | 1.6                                    |  |   |  |    |     |

**Հաշվարկային կլիմայական հարաչափեր  
Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը**

աղ. N 4-5

| Բնակավայրը | Օդի ջերմաստիճանը, 0 C |      |                      |      |                                 |                                       |  |                            |          |         | Մենացուրտ ամսվա խոնավությունը (%)       |                                      | Մթն. տեղումները և գրունտի սառածության խորությունը |  | Քամի                       |   |
|------------|-----------------------|------|----------------------|------|---------------------------------|---------------------------------------|--|----------------------------|----------|---------|---|--------------------------------------|---|--|----------------------------|---|
|            | Մենացուրտ օրվա        |      | Մենացուրտ հսգոր-թափի |      | Մենացուրտ ժամանակաշրջանի միջինը | Բացարձակ սեռականության տարբերությունը | Մենացուրտ ամսվա օրական միջին ամպիտուդը | Տևողությունը (օր)          |          |         | Տեղումների քանակը տեղում ամիսներին (մմ) | Գրունտի սառածության խորությունը (սմ) | Գերազանցող ուղղ. դեկտեմբեր-փետրվար ամիսներին      | Միջին արագությունները ըստ ուղղ. հունիսին (մ/վրկ) |                            |   |
|            | Սպասվածությունը       |      |                      |      |                                 |                                       |  | Միջին ջերմ. ժամանակաշրջանի |          |         |   |                                      |   |  | Միջին ջերմ. ժամանակաշրջանի |   |
|            | 0.98                  | 0.92 | 0.98                 | 0.92 | 0                               | 8                                     | 10                                     | 114/-3.0                   | 197/-0.1 | 223/1.0 | 69                                      | 58                                   | 143   | 71   |                            | - |
| Տաշիր      | -25                   | -22  | -21                  | -18  | -5.1                            | -34                                   | -                                      | 114/-3.0                   | 197/-0.1 | 223/1.0 | 69                                      | 58                                   | 143   | 71   | -                          | - |

**Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը**

աղ. N 4-6

| Բնակավայրի անվանումը | Օդի ջերմաստիճանը (0C) |      |                        |    |                             |    | ամենատաք ամսվա հարաբ. խոնավությունը (%) |                       | մթնոլորտային տեղումները (մմ)      |                               | քամի                                      |  |
|----------------------|-----------------------|------|------------------------|----|-----------------------------|----|---|-----------------------|-----------------------------------|-------------------------------|---|--|
|                      | ապահովվածությամբ      |      | բացարձակ առավելագույնը |    | ամենատաք ամսվա միջին արժեքը |    | միջին ամսական                           | միջին ամսական 0.15-ին | տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր | տեղումների օրվա առավելագույնը | գերազանցող ուղղ. հունիս-օգոստոս ամիսներին | միջին արագությունների նվազագույնը ըստ ուղղ. հուլիսին (մ/վրկ) |
|                      | 0.95                  | 0.99 | 22                     | 23 | 34                          | 22 |   |                       |                                   |                               |   |  |
| Տաշիր                | 22                    | 23   | 34                     | 22 | 12.2                        | 78 | 62                                      | 579                   | 116                               | -                             | -   | -  |

Այսպիսով, կլիմայական պայմանները բարենպաստ են բնակության համար, միայն սահմանափակ բարենպաստ է ձմռանային ամիսների քամու ռեժիմը: Հունվար ամսին քամու միջին արագությունները հասնում են 6.6-7.2 մ/վրկ՝ հարավ-արևմտյան և արևմտյան ուղղություններով: Ուղղությունների կրկնելիությունը ամսում կազմում է 16-350: Ամառային ամիսների քամու ռեժիմը բարենպաստ է, տատանվում է 2.0-3.4 մ/վրկ:

**I-3.2.1.2. Առողջարանային ռեսուրսներ**

Կլիմայաբուժության պայմանները տրված են «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության» ԳՀԻ հիմնականների համաձայն, ըստ որի կլիմայաբուժության օպտիմալ պայմանները որոշված են քամու, օդի ջերմաստիճանի և խոնավության միաստեղծ ազդեցությանը մարդու օրգանիզմի վրա (ջերմային զգացողություն): Ձերմային զգացողությունները որոշված են Էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճաններով (էԷՋ), ռադիացիոն Էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճաններով (ՌԷԷՋ), որտեղ հաշվի է առնված նաև ռադիացիոն ռեժիմը, էֆեկտիվ ջերմաստիճաններով՝ առանց քամու (ԷՋ):

Կլիմայաբուժության պայմանները ստորաբաժանվում են.

էԷՋ-ն < 8° C - ցուրտ պայմաններ

էԷՋ-ն 9-16° C - ինդիֆերենտ (չեզոք) պայմաններ

էԷՋ-ն 17-22° C - կոմֆորտային պայմաններ

էԷՋ-ն >23° C - գերտաքացման պայմաններ

Կլիմայաբուժության օդերևութաբանական պայմանները տարվա սեզոններին տարբեր են: Գարնան առաջին կեսին օդային միջավայրը դեռ այնքան սառն է, որ դրազվողոված կլիմայաբուժական պրոցեդուրաները բնական պայմաններում հնարավոր է չեն: Այս ժամանակահատվածը բնութագրվում է դիսկոմֆորտային պայմաններով, երբ գերիշխում են սառը պայմանները: Մայիս ամսից սկսած արևի ճառագայթային էներգիայի մուտքը ավելացման հետ աճում է ևս «բարեխառն» (էԷՋ 9-16°) օդային լուծանքների կրկնվածության տոկոսը, իսկ մայիսի 25-ից արդեն «կոմֆորտային» օդային լուծանքներ կարելի է ընդունել 10-12 օր: Հունիսի 15-ից «սառը» օդային լուծանքների տոկոսի նվազման հետևանքով աճում է «կոմֆորտային» (էԷՋ 16-22.5°) լուծանքների կրկնվածությունը, հասնելով 31 % (աղ. N 4-7): Այստեղ օդաբուժության կիրառման հնարավոր ժամանակաշրջանը բնական պայմաններում տևում է 5 ամիս՝ մայիսից մինչև սեպտեմբեր ներառյալ: Սակայն առանձին օրերին, երբ դիտվում են ամպամած և անձրևային եղանակներ, կլիմայաբուժության հնարավորությունը կրճատվում է: Սկսած հունիսի 15-ից մինչև սեպտեմբեր արևաբուժության կոմֆորտային պայմաններ դիտվում են 10-12 օր, երբեմն էլ դիտվում են դիսկոմֆորտային պայմաններ, երբ ՌԷԷՋ>23°-ից, սակայն սրանք աննշան տոկոս են կազմում (աղ. N 4-8.):

Աշնան սկզբին բարենպաստ և կայուն եղանակային ռեժիմը ստեղծում է օպտիմալ պայմաններ կլիմայաբուժության համար մինչև սեպտեմբերի վերջը: Առանձին օրեր, երբ եղանակային պայմանները բարենպաստ չեն, առաջարկվում է կլիմայաբուժությունը կազմակերպել առանձին տաղավարներում, անբարիներում, ժամանակակից սարքավորումներով համարված կլիմայաբուժության համար նախատեսված պատշգամբներում, մեկուսացված ապակեպատ խցիկներում:

Տաշիրի լանդշաֆտային պայմանները (անտառաշերտի պակաս) և լեռնագրությունը (սարահարթը շրջապատող լեռներ) պատճառ են հանդիսանում անընդհանուր դիտվող քամիների: Ամռանը օրվա ընթացքում զարգանում է լեռնահովտային, իսկ ձմռանը ֆյունային շրջանառությունը: Առաջարկվում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել քամու սառեցնող ազդեցությունը չեզոքացնելու վրա, ինչի հետևանքով մայիսի օդաբուժության «սառը» պայմանները 47 %-ից հասնում է 9 %-ի: Հուլիս-օգոստոս ամիսներին համապատասխանաբար տարբերությունը մեծանում է (աղ. N 4-7.): Այսինքն Տաշիրում ջերմային պայմանները բարենպաստ են, այստեղ քամու ազդեցությունն է բացասական, ինչը տարբերում է Տաշիրը մյուս շրջաններից, քանի որ քամին այստեղ օրվա ընթացքում ոչ շատ ուժեղ է, սակայն անընդհանուր դիտվում է, հատկապես ձմռան ընթացքում, այն դեպքում, երբ հանրապետության ամբողջ տարածքում, բացի բարձր լեռնային շրջաններից և լեռնանցքներից, իշխում է անտիցիկլոնային ռեժիմ՝ բարձր ճնշման դաշտ, որն էլ ուղեկցվում է անհողմ եղանակների գերակշռությամբ: Իսկ Տաշիրում և Ստեփանավանում վերը նշված պայմանների հետևանքով, հատկապես ձմռանը, եղանակը ձևավորում է ցածր ճնշման դաշտը:

Տաշիրում ակտիվ տարածքների դիտարկումների բացակայության պատճառով մեզ չհաջողվեց որոշել արևաբուժության պայմանները: Սակայն, հաշվի առնելով, որ արևի տաքացումից մարդու մաշկի ջերմաստիճանը բարձրանում է 6-80-ով, և կիրառելով Գ.Յուզգերիձեի մեթոդը, մեր կողմից որոշված և հաշվարկված են արևաբուժության լուծանքների պայմանները (աղ. N 4-8.): Արևաբուժությունը հնարավոր է կազմակերպել մայիսի 15-ից մինչև սեպտեմբեր ներառյալ «կոմֆորտային» գոնայում, իսկ քամու ազդեցության վերացման դեպքում՝ մայիսի 10-ից ամեն օր մինչև հոկտեմբեր ներառյալ, ժամը 13-ին, երբ ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությունն ավելի մեծ է: Ամբողջ տարվա ընթացքում ուլտրամանուշակագույն ճառագայթների բալանսը դրական է և դրանց «քաղցր» ամբողջ հանրապետությունում բացակայում է:

Արևափայլի տևողությունը տարեկան 2203 ժամ է: Այսպիսով, Տաշիրի տարածքային իր լանդշաֆտա-կլիմայական, եղանակային, կլիմայաբուժական պայմաններով յուրովի տարբերվում է մյուս շրջաններից: Ընդարձակ անտառային զանգվածները շրջապատող լեռների լանջերին, շրջանառության պրոցեսները օժանդակում են ամպամած և անձրևային տիպի եղանակների առաջացմանը, որն էլ իջեցնում է կլիմայաբուժության պայմանների կրկնվածության տոկոսը: Գարնանը գերիշխում են օդային լուծանքների «չափավոր սառը» պայմանները, ամռանը «կոմֆորտային» օդային լուծանքների կրկնվածությունը կազմում է 31 %, իսկ «չափավոր սառը» լուծանքներին, որոնք կրում են կոփող-մարդող բնույթ՝ 60 %: Արևաբուժության «կոմֆորտային պայմանները» հասնում են 43-51 %-ի: Անբարենպաստ եղանակների ժամանակ դրազվողոված կլիմայաբուժությունը կիրառել տաղավարներում, հատուկ խցիկներում: Օդային միջավայրի սառեցնող ազդեցության մեջ որոշակի դեր է խաղում քամին: Հետևաբար քամու սառեցնող ազդեցությունը վերացնող հատուկ սարքավորումների (վահաններ, անտառատնկումներ) կիրառման դեպքում, կարելի է ավելացնել «կոմֆորտային» օդային լուծանքների պայմանների տոկոսը, ինչի հետևանքով «կոմֆորտային» պայմանների կրկնվածության տոկոսը հուլիսին հասնում է մինչև 69 %: Ուրեմն քամու ազդեցությունը վերացնելուց հետո մայիսից մինչև հոկտեմբեր գերակայում են օդային և հատկապես արևային լուծանքների «կոմֆորտային» պայմանները:

Ցուրտ կիսամյակի ընթացքում կլիմայաբուժությունը կիրառվում է որպես կոփող, կանխարգելիչ մեթոդ մաքուր օդում զբոսանքների, խաղերի, սպորտային միջոցառումների, ինչպես նաև հատուկ պատշգամբներում բուժական քնի ձևով: Ամսվա 20-25 օրը լիովին պիտանի են ձմռանը ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության քջացումը թուլացնում է արևային լուծանքների արդյունավետությունը

և կլիմայաբուժության հիմնական ձևը հանգիստն է: Ձմեռային տաղավարներում խորհուրդ է տրվում օգտագործել հատուկ պոլիէթիլենային թաղանթներ, որոնք անցկացնում են ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթները, պահպանելով դրանց բուժական կենսաբանական ազդեցությունը: Ձմեռային կլիմայաբուժության մեջ կարելի է ընդգրկել դահուկային և սահնակային զբոսանքներ, սպորտային միջոցառումներ և մրցումներ:

Այսպիսով, Տաշիրի լանդշաֆտակլիմայական պայմանները միանգամայն բարենպաստ են բուժական հիմնարկների շուրջտարյա գործունեության համար և Տաշիրը համարվում է միջին լեռնային մերձարևադարձային գոտու առողջավայր՝ եղանակների չափավոր, համեմատաբար խոնավ տիպերով (ըստ Ուշվերիձեի):

Տաշիրում դիտվող օդերևութաբանական անոմալիան (ամռանը խոնավությունն ավելի մեծ է, քան ձմռանը) բարենպաստ պայմաններ է ստեղծում ամռանը շնչառական անբավարարություն ունեցող հիվանդների բուժման համար:

Ստորև բերվում են կլիմայաբուժության օդերևութաբանական պայմանները բնութագրող աղյուսակները.

**Օդաբուժության օդերևութաբանական պայմանները (%)**

աղ. N Վ-7.

| ամիսներ   | Էկվիվալենտ-Էֆեկտիվ ջերմաստիճան (ԷԷՅ) քառու առկայությամբ |       |        |       | Էֆեկտիվ ջերմաստիճան (ԷՅ) առանց քառու |       |        |       |
|-----------|---|-------|--------|-------|--------------------------------------|-------|--------|-------|
|           | < 80  | 9-160 | 17-220 | > 230 | < 80                                 | 9-160 | 17-220 | > 230 |
| մայիս     | 47  | 49    | 4      |       | 9                                    | 60    | 13     |       |
| հունիս    | 20  | 62    | 11     |       | 2                                    | 55    | 43     |       |
| հուլիս    | 6   | 60    | 30     | 4     |                                      | 24    | 62     | 7     |
| օգոստոս   | 6   | 60    | 31     | 1     |                                      | 33    | 60     | 2     |
| սեպտեմբեր | 20  | 60    | 19     | 1     | 3                                    | 57    | 39     | 1     |

**Արևաբուժության օդերևութաբանական պայմանները (%)**

աղ. N Վ-8.

| ամիսներ   | Ուղիագին-Էկվիվալենտ-Էֆեկտիվ ջերմաստիճան (ՈՒԷՅ) քառու առկայությամբ |       |        |       | Ուղիագին-Էֆեկտիվ ջերմաստիճան (ՈՒՅ) առանց քառու |       |        |       |
|-----------|---|-------|--------|-------|--|-------|--------|-------|
|           | < 80  | 9-160 | 17-220 | > 230 | < 80   | 9-160 | 17-220 | > 230 |
| մայիս     | 40  | 37    | 23     |       | 30   | 21    | 45     | 4     |
| հունիս    | 15  | 54    | 28     | 3     |  | 36    | 53     | 11    |
| հուլիս    |   | 35    | 43     | 22    |  | 27    | 58     | 15    |
| օգոստոս   |   | 38    | 51     | 11    |  | 29    | 61     | 10    |
| սեպտեմբեր | 7   | 38    | 46     | 9     | 2  | 30    | 58     | 10    |

Աղյուսակի տվյալներից երևում է, որ օդաբուժության և արևաբուժության կոմֆորտային պայմանները (ԷԷՅ-17-22<sup>0</sup>) քառու ազդեցությունը վերացնելուց հետո կարող են մեծանալ: Օրինակ՝ մայիս ամսին օդաբուժության կոմֆորտային պայմանները 4 %-ից կարող է հասնել 13 %-ի, իսկ արևաբուժության պայմանները համապատասխանաբար 23 %-ից կհասնի 45 %-ի (2%-1 օր):

Տաշիրը շրջափակող լեռները բարենպաստ են ձմեռային սպորտի տարբեր ձևերի կազմակերպման համար:

Ստորև բերված աղյուսակներում տրված են ձմեռային սեզոնը բնութագրող աղյուսակները:

**Դահուկային սեզոնի սկիզբը, վերջը և տևողությունն ըստ բարձրության**

աղ. N Վ-9.

| Բարձրությունը ծովի մակերևույթից (մ) | Սկիզբը |                    |                      | Վերջը  |                    |                      | Տևողությունը (օրեր) |                    |                      |
|-------------------------------------|--------|--------------------|----------------------|--------|--------------------|----------------------|---------------------|--------------------|----------------------|
|                                     | միջինը | հարավային լանջերին | հյուսիսային լանջերին | միջինը | հարավային լանջերին | հյուսիսային լանջերին | միջինը              | հարավային լանջերին | հյուսիսային լանջերին |
| 1800                                | 22.XII | 8.I                | 6.XII                | 21.III | 6.III              | 5.IV                 | 89                  | 57                 | 120                  |
| 1900                                | 17.XII | 2.I                | 2.XI                 | 27.III | 11.III             | 13.IV                | 100                 | 68                 | 132                  |
| 1950                                | 15.XII | 31.XII             | 30.XI                | 29.III | 13.III             | 15.IV                | 104                 | 72                 | 136                  |
| 2000                                | 11.XII | 25.XII             | 27.XI                | 1.IV   | 16.III             | 17.IV                | 110                 | 81                 | 141                  |
| 2100                                | 7.XII  | 20.XII             | 24.XI                | 7.IV   | 23.III             | 22.IV                | 121                 | 93                 | 149                  |
| 2200                                | 1.XII  | 10.XII             | 20.XI                | 13.IV  | 30.III             | 26.IV                | 133                 | 110                | 157                  |
| 2300                                | 24.XI  | 1.XII              | 17.XI                | 21.IV  | 9.IV               | 2.V                  | 148                 | 129                | 166                  |
| 2400                                | 19.XI  | 25.XI              | 13.XI                | 26.IV  | 16.IV              | 6.V                  | 158                 | 142                | 174                  |
| 2500                                | 15.XI  | 20.XI              | 10.XI                | 3.V    | 24.IV              | 11.V                 | 169                 | 155                | 182                  |
| 2600                                | 11.XI  | 16.XI              | 7.XI                 | 8.V    | 1.V                | 16.V                 | 178                 | 166                | 189                  |
| 2700                                | 7.XI   | 12.XI              | 3.XI                 | 17.V   | 9.V                | 22.V                 | 191                 | 178                | 200                  |
| 2800                                | 4.XI   | 8.XI               | 1.XI                 | 21.V   | 15.V               | 27.V                 | 198                 | 188                | 207                  |
| 2900                                | 1.XI   | 4.XI               | 28.X                 | 29.V   | 22.V               | 4.VI                 | 210                 | 199                | 219                  |
| 3000                                | 28.X   | 1.XI               | 25.X                 | 5.VI   | 30.V               | 10.V                 | 220                 | 210                | 228                  |

**Ձյունածածկույթի գոյացման և վերացման, կայուն ձյունածածկույթի առաջացման և քայքայման ժամկետները**

աղ. N Վ-10.

| Ձյունածածկույթով օրերի քանակը | Ձյունածածկ. գոյացման ժամկետները |     |     | Կայուն ձյունածածկույթի առաջացման ժամկետները |       |     | Կայուն ձյունածածկույթի քայքայման ժամկետները |     |      | Ձյունածածկույթի վերացման ժամկետները |       |     |
|-------------------------------|---------------------------------|-----|-----|---|-------|-----|---|-----|------|-------------------------------------|-------|-----|
|                               | միջին                           | վաղ | ուշ | միջին                                       | վաղ   | ուշ | միջին                                       | վաղ | ուշ  | միջին                               | վաղ   | ուշ |
| 72                            | 14.XI                           | 7.X | 7.I | 6.I   | 14.XI | -   | 8.III                                       | -   | 9.IV | 11.IV                               | 7.III | 8.V |

**Ձյունածածկույթի միջին տասնօրյակային բարձրությունը (սմ)**

աղ. N Վ-11.

| Լոյներ |   | դեկտեմբեր |   |   | հունվար |   |   | փետրվար |   |   | մարտ |   |   | ապրիլ |   |   | Ձյունածածկ տասնօրյակային առավելագույն բարձրությունը |       |        |         |   |
|--------|---|-----------|---|---|---------|---|---|---------|---|---|------|---|---|-------|---|---|---|-------|--------|---------|---|
| 1      | 2 | 3         | 1 | 2 | 3       | 1 | 2 | 3       | 1 | 2 | 3    | 1 | 2 | 3     | 1 | 2 | 3   | միջին | մաքսիմ | միևնիվ. |   |
|        |   |           |   |   |         |   |   |         |   |   |      |   |   |       |   |   |   |       | 17     | 37      | 2 |

**1-3.2.1.3. Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոգրաֆիկական, հիդրոերկրաբանական, ինժեներերկրաբանական, սեսվատեկտոնական պայմանները**

● Տաշիր քաղաքի տարածքը տեղադրված է Լոռու դաշտի հարավարևելյան մասում, Տաշիր գետի գետահովտում, Տաշիրի ֆիզիկաաշխարհագրական տեղամասում:

Տաշիրի տեղամասը մի տափարակ, համարյա չմասնատված հարթավայր է (1500-1700 մ), կազմված այլուվիալ-պրոյուվիալ նստվածքներից: Տեղ-տեղ հանդիպում են միևնույն 5-6 մ բարձրության թմբեր և բլրակներ՝ կազմված ավազաշերտերից և գլաքարերից:

Տաշիրի տեղամասը շրջափակված է հյուսիս-արևելքից՝ Վիրահայոց լեռներով, որի ամենաբարձր լեռը Լեջանն է, արևմուտքից՝ Ջավախքի լեռնավահանով, հարավից՝ Ջորագետով, որտեղից սկսվում է Լոռու դաշտի Ջորագետի տեղամասը:

Գարնասային առատ անձրևները (մայիսին 100-150 մմ), ամռան ցածր ջերմաստիճանները մեծացնում են հողի խոնավությունը, բարձրացնում ստորերկրյա ջրերի մակարդակը և զոգավոր ռելիեֆի պայմաններում առաջացնել են ճահճապատ տեղամասեր:

Տարածքը թույլ մասնատված է (0.2-0.6 կմ/կմ<sup>2</sup>), թեքությունները չեն գերազանցում 30-ը:

Տարածքով հոսում է Տաշիր գետը՝ Ջորագետի ձախափնյա վտակը, որը սկիզբ է առնում հունավ լեռներից, վերին հոսանքներով հոսում է խորը կիրճերով, իսկ քաղաքի տարածքի հարթ տարածքում հոսում է դանդաղ՝ առաջացնելով ճահճապատ տեղամասեր: Քաղաքի տարածքից դուրս գետի հունը Նորից Նեղանում է՝ առաջացնելով միևնույն 90 մ խորությամբ կիրճ: Գետը սնվում է գրունտային (միևնույն 30 %), ձնհալքի (20-25 %) և անձրևաջրերով (40-45 %):

Գարնասային հորդացումները սկսվում են ապրիլի կեսից և վերջանում հունիսի վերջին տասնօրյակում:

Այսպիսով, գեոմորֆոլոգիական տեսակետից հիմնականում բարենպաստ է շինարարության համար: Սահմանափակվող գործոն է համարվում հեղեղատների առկայությունը: Անհրաժեշտության դեպքում փոքր խորության հեղեղատները կարելի է լցնել հողաշերտով, տափանել և օգտագործել շինարարության համար, իսկ ավելի խորը հեղեղատները կարելի է օգտագործել խողովակաշարերի տեղադրման համար:

● Տաշիրի տեղամասը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Արտեզյան ավազանը գտնվում է Տաշիր գետի վերին հոսանքներում: Տեղամասը ներկայացված է այլուվիալ-դելյուվիալ նստվածքներով, որոնք ծածկում են լավային ապարների (բազալտներ, անդեզիտա-բազալտներ) հզոր շերտը: Արտեզյան ավազանում 2 ճշումային ջրային հորիզոնները հայտնաբերված են 70 մետրից մինչև 90 մետր խորությունների վրա:

Քաղաքային տարածքի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան մասերում գրունտային ջրերի մակարդակը բարձր է և տատանվում է 0-2 մետր:

Ստորերկրյա ջրերը խոշոր աղբյուրների ձևով (Սարատովկայի, Նովոսեցովոյի, Ակյուտինի, Կիզկալայի) դուրս են գալի Լոռու սարահարթում: Աղբյուրների հաշված և հաստատված պաշարները կազմում են 150.1 հազ. մ<sup>3</sup>/օր:

Այսպիսով, Տաշիր քաղաքի տարածքը հիդրոերկրաբանական տեսակետից բարենպաստ է շինարարության համար: Սահմանափակող գործոն է ցածրադիր տեղամասերում գետի և վտակների ողողահուններում ճահճացումները, որոնց դեմ պայքարելու հիմնական միջոցը մակերեսային ջրերի հավաքումն է և գետափերի ամրացումները:

● Տաշիր քաղաքի տարածքը ինժեներաերկրաբանական տեսակետից ներկայացված է մինչև 30 մետր հզորություն ունեցող հողմանհարված բազալտներով և անդեզիտա բազալտներով, որոնք որոշակի հաստվածներում ծածկված են 1-6 մ հզորություն ունեցող մակերեսային նստվածքներով: Մակերեսային նստվածքները ներկայացված են կավերով, կավաավազներով, ավազակավերով, խճային նստվածքներով՝ ավազակավերի և կավաավազների լցանյութերով (մինչև 30 %):

Գեոդինամիկ պրոցեսներից են Տաշիր գետի և վտակների հեղեղաբերությունը, ինչպես նաև մակերեսային հոսքերով պայմանավորված երոզիոն պրոցեսները:

Այսպիսով, ինժեներաերկրաբանական տեսակետից Տաշիր քաղաքի տարածքը հիմնականում (90 %) բարենպաստ է շինարարության համար:

Ինժեներաերկրաբանական տեսակետից սահմանափակ բարենպաստ տարածքներն են քաղաքի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան մասում գտնվող տեղամասերը (2-5 հա) գրունտային ջրերի բարձր մակարդակով՝ ներկայացված ավազակավային-տիղմային գրունտներով, ինչպես նաև բնակավայրի կենտրոնական մասում, գետի աջ ափին ընկած տեղամասը՝ (15 հա), ներկայացված թույլ կորոզմակությամբ ունեցող գրունտներով (տես «Ինժեներաերկրաբանական շրջանցում» քարտեզը):

● Քաղաքի տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարենպաստ են: Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի էվալյուացիայի արժեքների որոշումը:

Տաշիր քաղաքի տարածքում ակտիվ տեկտոնական ճեղքերը բացակայում են: Գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.2-0.25 գ, որը համապատասխանում է 8 և 8.25 բալի (գծագիր «Տարածքի համալիր գնահատական»):

(Հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները մանրամասն տրված են առանձին գրքով՝ մշակված «Գեոռիսկ» գիտահետազոտական ընկերությունում:)

### I-3.2.1.4. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը

Տաշիր քաղաքային համայնքի տարածքը գտնվում է Ջավախքի բնական լանդշաֆտային լեռնահովտային շրջանի, Լոռու դաշտի ենթաշրջանում, լեռնալեռնային-տափաստանային և մարգագետնատափաստանային լանդշաֆտային գոտում:

Լանդշաֆտային այս գոտու տարածքը, գտնվելով Ջավախքի լեռնավահանի և Վիրահայոց լեռների անկյունում, ծմռանը պաշտպանված է ցուրտ օդի ներխուժումից, բայց հանրապետության ամենախոնավ վայրերից է, տեղումների քանակը հասնում է 700 մմ:

Տարածված են հիմնականում սևահողեր և փետրախոտաշրջողային և լեռնաչորասեր խոտաբույսեր:

Գոտու տարածքը մի տափարակ, համարյա չմասնատված հարթություն է (1500-1700 մ), երբեմն հանդիպում են բլուրներ:

Այս գոտում առանձնացվում են.

- Տաշիր գետի ողողահունային լանդշաֆտներ,
- Գետի աջափնյա հարթ, քիչ թեքությամբ (մինչև 5 %) լանդշաֆտներ,
- Գետի ձախափնյա թեք, բլրապատ տարածքներ:
- Տաշիր գետի ողողահունը քաղաքի հիմնական կառուցապատված տարածքում կարգավորված է, ամրացված է հենապատերով:

Քաղաքի հարավային մասում ողողահունը լայնանում է, կան ճահճացված տարածքներ:

- Գետի աջափնյա հարթ, քիչ թեքությամբ լանդշաֆտները հիմնականում կառուցապատված են կամ գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողահանդակներ են.

- Գետի ձախափնյա թեք, բլրապատ տարածքները գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքեր են:

Հաշվի առնելով լանդշաֆտային գոտու ռելիեֆային պայմանների համարյա միօրինակությունը, լանդշաֆտների հետագա դասակարգման տարբերումից միավոր է ընդունվել լանդշաֆտի օգտագործման քաղաքաշինական ձևերը, ըստ որի տարբերակվում են.

- Կառուցապատված և կառուցապատման ենթակա հարթ լանդշաֆտներ,
- Ռելիեֆային նշանակության լանդշաֆտներ,
- Գյուղատնտեսական նշանակության լանդշաֆտներ,
- Դեզորդացվող լանդշաֆտներ:

● Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտները տարածված են Տաշիր գետի աջ և ձախ ափերին, հարթ տարածքների վրա՝ հյուսիսից հարավ ձգվելով 6 կմ, իսկ լայնությունը արևելք-արևմուտք ուղղությամբ կազմում է միջինը 1.5 կմ: Քաղաքը կառուցապատված է հիմնականում մենտներով՝ 1200 մ<sup>2</sup> հողամասերով: Հասարակական կենտրոնը և սպասարկման օբյեկտները գտնվում են տարածքի ուղիղ կենտրոնում, բայց քաղաքի ձգվածության պատճառով դժվարամատչելի են ծայրամասերում բնակվող բնակիչների համար:

Մարգարա-Էջմիածին-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման (M-3) միջպետական ճանապարհը անցնում է քաղաքի կենտրոնական փողոցով, որին արևմուտքից միանում է Երևան-Գյումրի-Վրաստանի սահման (M-1) միջպետական ճանապարհը:

Կառուցապատման համար պիտանի են քաղաքի կառուցապատված տարածքի հարավարևմտյան և հարավարևելյան մասերին հարող տարածքները, որոնք ծածկված են ցածրարժեք գյուղատնտեսական հողերով:

Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

- կառուցապատման կանոնակարգում՝ բնակչության և կառուցապատման համապատասխան խոտաբույսերի կիրառումով,
- Հարմարավետ կապերի ստեղծում, միջպետական տարանցիկ ճանապարհի դուրս բերում քաղաքի տարածքից,
- Տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների սանալիայանման գոտիների պահանջների կիրառում:

- Ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառում (մակերեսային ջրերի հեռացում, հակահեղեղային միջոցառումներ, ուղղաձիգ հատակագծում):

- Ռելիեֆային նշանակության լանդշաֆտներն ընդգրկում են քաղաքի հյուսիսարևմտյան մասի անտառապուրակային գոտին և գետի աջափնյա վտակների հեղեղային հոսքերը հավաքող սելավատարի (լեռնային առու), պահպանական նշանակության անտառի և կառուցապատված տարածքների միջև ընկած չկառուցապատված հատվածները:

Ռելիեֆային նշանակության լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

- Ջրային նոր մակերեսների ստեղծում, գոյություն ունեցող ջրային մակերեսների մաքրում ճահճային բուսականությունից,
- Անտառածածկ տարածքների մեծացում,
- Ռելիեֆային օբյեկտների տեղադրում:

- Քաղաքը շրջապատող գյուղատնտեսական հողահանդակները հիմնականում բարձրարժեք վարելահողեր են (57-90 բայ), որոնք ըստ ՀՀ հողային օրենսգրքի արգելվում է օգտագործել ոչ գյուղատնտեսական նպատակներով:

Ցածրարժեք գյուղատնտեսական հողատեսքեր կան քաղաքի հյուսիսային, հարավարևմտյան և հարավարևելյան մասերում (23-30 բայ): Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների օգտագործման ռեժիմը նախատեսում է.

- Հարուստիկական միջոցառումների համալիր կիրառում (հիմնականում վիսաստուների դեմ պայքարի նպատակով թունաքիմիկատների կիրառման սահմանափակում՝ աստիճանաբար անցնելով կենսաբանական մեթոդների կիրառմանը, պարարտանյութերի պահեստավորում, դրանց օգտագործման թույլատրելի չափանիշների որոշում և այլն):

- Դեզորդացվող լանդշաֆտը քաղաքի հարավ-արևելյան մասում գտնվող բազալտի հանքավայրն է, որի առանձին հատվածները շահագործելուց հետո անհրաժեշտ է ենթարկել ռեկուլտիվացիայի:

### I-3.2.1.5. Տաշիրի քաղաքային համայնքի ինժեներական նախապատրաստման միջոցառումներ

Լոռու հարթավայրը հանդիսանում է Տաշիր գետի հիմնական ջրհավաք ավազանը: Գետը հոսում է հարթավայրի արևելյան եզրով, իսկ գետի աջափնյա վտակները հոսում են հարթավայրի ամբողջ տարածքով հիմնականում արևմուտք-արևելք ուղղությամբ:

Քաղաքի բնակելի տարածքի մեծ մասը տեղադրված է գետի աջ ափին, ուստի հորդառատ անձրևների և գարնանային խնոտնիվ ձնհալի ժամանակ ջրհեղեղները վնասում են քաղաքային տնտեսությանը: Ներկայումս, «Էկոպրոյեկտ» ՄՊՀ-ի կազմած մի նախագծով կառուցվում է ջրահեռացման մի համակարգ, որի նպատակն է կտրել ջրերի հոսքը քաղաքի հարավարևելյան մասում և այն ուղղել քաղաքի վերջում Տաշիր գետը թափվող մի վտակի մեջ: Սելավատարը սկսվում է Տաշիրից դեպի Գյումրի գնացող ճանապարհից: Սելավատարի երկարությունը 3.5 կմ է, լայնությունը՝ 3 մ, բարձրությունը՝ 2 մ: Սելավատարը հեղեղումներից կպաշտպանի մոտ 1000 անհատական բնակարան և տնամերձ (տրված է «Տարածքի համալիր գնահատականը» գծագրի վրա):

1983 թ. գարնանային վարարումների ժամանակ Տաշիր գետը հունից դուրս է եկել և մեծ վնաս հասցրել քաղաքային տնտեսությանը, չնայած գետը երկված է ափային հենապատերով, որոնք միջև հեռավորությունը հավասար է 21 մ: Գետի ափերից դուրս գալու հիմնական պատճառներն են.

- Գետի հունը լցված է աղբով, ինչը փոքրացնում է հունի կտրվածքը և խանգարում ջրի հոսքին:
- Ափամերձ պատերը տեղ-տեղ քանդված են, ինչը առիթ է տալիս ջրի արտահոսքին: Հետևաբար, անհրաժեշտ է մաքրել գետի հունը աղբից: Քաղաքի սահմաններում գետը վերածվել է աղբավայրի և քաղաքից դուրս գալիս այն նման է կոյուղու: Այսպիսով, նախագծով նախատեսվում է մաքրել գետը ջրաբերունկներից և վերականգնել հենապատերը և կամուրջները:

### I-3.2.2. Տարածքի գնահատական ըստ հատակագծային պայմանների

Տաշիր քաղաքի տարածքը գնահատվել է ըստ ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման պայմանների, հաղորդակցության ուղիներով ապահովվածությամբ, պատմամշակութային հուշարձանների առկայությամբ և դրանց նշանակությամբ:

- Ջրամատակարարման աղբյուրների առկայության տեսանկյունից Տաշիր քաղաքը գտնվում է բարենպաստ պայմաններում: Քաղաքի շրջակայքում գտնվող Լոռու հանքավայրի Նովոսելցովոյի, Աքսյուտինի, Սարատովկայի աղբյուրների պաշարները բավարար են ապահովելու քաղաքի խմելու և տեխնիկական նշանակության ջրի նաև հեռանկարային պահանջները: Անբավարար վիճակում է ջրամատակարարման ամբողջ ցանցի և օրվա կարգավորիչ ջրամբարների տեխնիկական վիճակը:
- Անհրաժեշտ է ջրամատակարարման ամբողջ համակարգի վերազինում (ներքին ցանցի բարելավում, գոտիավում և կառուցում): Տաշիր քաղաքի ջրամատակարարման բարելավման աշխատանքներն ընդգրկված են «Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» վարկային ծրագրում: Նախագծային աշխատանքների ավարտման ժամկետը 01.12.2006թ. (ըստ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի տվյալների):
- Անբավարար է համարվում քաղաքի կոյուղացման համակարգը: Կոյուղացված են միայն վարչական և Նախկին պետական բազմահարկ բնակելի շենքերը: Բնակչության մեծ մասն օգտվում է բակային հորերից: Կոյուղու հոսքային ջրերն՝ առանց մաքրվելու, թափվում են Տաշիր գետը:
- Տաշիր քաղաքի 2.2 կմ կոյուղու ցանցը շահագործվում է ավելի քան 30 տարի: Կոյուղու ցանցը գտնվում է անբավարար վիճակում և հրատապ վերանորոգման կարիք ունի: Վերջին տարիներին հաճախ են տեղի ունենում վթարներ և կենցաղային ու արտադրական կեղտաջրերն՝ առանց մաքրման, լցվում են Տաշիր գետը:
- Անհրաժեշտ է Տաշիր քաղաքի ջրահեռացման ցանցի բարելավում (գոյություն ունեցող կոյուղացանցի վերանորոգում, նոր կոյուղու ցանցի, կոլեկտորի և նոր մաքրման կայանի կառուցում):
- Ջրահեռացման համակարգի հրատապ բարելավումը նպատակ ունի նաև Տաշիր գետի ամբողջ աջափնյա մասում Լոռու խմելու ջրերի հանքավայրն աղտոտումից ապահովելը:
- Քաղաքի էներգետիկ բազան ունի բավարար ռեզերվային հզորություններ նոր շինարարության տեղադրման ժամանակ: Մայրուղային գազամուղի ազդեցության գոտին չի գերազանցում 10 կմ-ը, իսկ բարձր լարման 220 և 110 կվ էլեկտրահաղորդման գծերն անցնում են քաղաքի տարածքով:
- Անվտանգությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բարձրավիճակում էլեկտրահաղորդման գծերի դուրսբերում քաղաքի տարածքից: Էլեկտրահաղորդման և գազամատակարարման համար վերջ նշված հզորությունները բավարար են և արտաքին ցանցի ընդլայնման կարիք չի զգացվում: Հետագա շինարարության իրականացման և քաղաքի գազամատակարարման կենցաղային կարիքները բավարարելու համար անհրաժեշտ է համակարգի վերազինում և բնակելի տների (բազմահարկ և սակավահարկ) գազֆիկացման ապահովում:
- Ջրամատակարարման համակարգի վերականգնումը նախատեսվում է հիմնականում լոկալ ջեռուցիչներով և կաթսայատներով (մանրամասն տրված է «Ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը» ենթագլխում):
- Տաշիր քաղաքը գտնվում է հաղորդակցության ուղիներով ապահովվածության սահմանափակ բարենպաստ գոտում: Քաղաքի տարածքում են հատվում Գյումրի-Սպիտակ-Վրաստանի սահման (M-1) ճանապարհի ճյուղավորությունը (Վարդաղբյուր-Տաշիր հանրապետական նշանակության ճանապարհը) և Մարգարա-Էջմիածին-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական ճանապարհները (M-3):
- Քաղաքը տարածաշրջանի մյուս բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության, ցածր տեխնիկական կարգերի (4-5 կարգ) ճանապարհներով: Երկաթգծի ամենամոտ կայարանը (Թումանյան) գտնվում է 50 կմ հեռավորության վրա:
- «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» արդեն նախատեսված է Տաշիր քաղաքի շրջանցումը «Ապարան-Արջուտ-Ամրակից-Ուռուտ-Պրիվոլոյե-Վրաստանի սահման» ուղղությամբ:
- Հաղորդակցության ուղիների բարելավման միջոցառումներն ավելի մանրամասն տրված է «Տրանսպորտի հեռանկարային զարգացումը» ենթագլխում և համապատասխան գծագրում:

**I-3.2.2.1. Պատմամշակութային հուշարձաններ**

Լոռու մարզը շատ հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք հիմնականում կուտակված են Ձորագետի և Դեբեդի հովիտներում:

Տաշիր քաղաքում և շրջակայքում նույնպես կան հուշարձաններ, որոնք տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.Ա 3-2 հազարամյակ, 10-14 դար և ժամանակակից): Հուշարձանների պահպանվածության աստիճանները նույնպես տարբեր են՝ սկսած ավերակներից մինչև վերականգնվածները:

Տաշիր քաղաքի և շրջակայքի հուշարձանները հիմնականում հանրապետական նշանակության են և կարող են ընդգրկվել ՀՀ տուրիստական ռազմավարական նշանակություն ունեցող երթուղիներում:

Ստորև աղյուսակում տրվում է Տաշիր քաղաքի և շրջակայքի հուշարձանների ցուցակը.

աղ. N Վ-12.

| N   | Հուշարձանը                             | Ժամանակահատվածը   | Գտնվելու վայրը                                      | Նշանակությունը | Ծանոթություն |
|-----|--|-------------------|---|----------------|--------------|
| 1   | Ամրոց                                  | Ք.ա. 3-2 հազ.     | քաղաքից 1 կմ արլ.                                   | <              |              |
| 2   | Բերդաքաղաք                             |                   | Տաշիր կամ Կզկալա վայրում                            | <              |              |
| 3   | Գյուղատեղի                             |                   | Տաշիր գետի ծախ ափին, Խճուղու մոտ                    | <              |              |
| 4   | Գյուղատեղի                             |                   | քաղաքից արլ. ճանապարհի ծախ կողմում                  | <              | ավերված      |
| 5   | Գյուղատեղի                             | միջնադար          | քաղաքից հս-արլ. Տաշիր գետափի ափին                   | <              | «Գայրի» վայր |
| 5.1 | Եկեղեցի «Միլիտկա»                      | 10-12 դդ.         |   | <              |              |
| 6   | Դամբարանադաշտ                          | Ք.ա. 2 հազ. 1 կես |   | <              |              |
| 7   | Եկեղեցի                                | 13-14 դդ.         | Տաշիր բերդի արլ. կողմի ձորում քաղաքից մոտ 1 կմ արլ. | <              | ավերված      |
| 8   | Կամուրջ                                |                   | Տաշիրի ձորում                                       | <              | ավերված      |
| 9   | Հուշարձան II աշխարհամարտում զոհվածների | 1961թ.            | քաղաքի մեջ  | <              |              |
| 10  | Ջրաղաց                                 |                   | Տաշիր գետի ձորում                                   | <              |              |
| 11  | Քարայր-կացարան                         |                   | Տաշիր գետի ձորում                                   | <              |              |
| 12  | Քարայր-կացարան                         |                   | Ձորագետի ձորում                                     | <              | ամրացված     |

**Գ Լ ՈՒ Խ II**

**ՏՄՇԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

**II-1. Հեռանկարային զարգացման հայեցակարգ**

Տաշիր քաղաքի, ինչպես և Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքների տնտեսական և տարածքային զարգացման հիմնախնդիրները քաղաքաշինական գործունեության ներկա փուլի առավել սուր և բարդ պրոբլեմներից են: Այս կապակցությամբ քաղաքի զարգացման հիմնախնդիրները դիտարկվել են հետևյալ գործոնների հետ փոխկապակցված.

- Քաղաքի դիրքը և դերը Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի տարաբնակեցման համակարգում,
- Բնակչության աճի դինամիկան,
- Տարածքային ռեսուրսների օգտագործման տենդենցները և արդյունավետությունը,
- Տրանսպորտային կապերի առկայությունը, դրանց կատարելագործման հնարավորությունները,
- Տրանսպորտային բարենպաստ մատչելիության գոտում գտնվող ռեսուրսային պոտենցիալի օգտագործման հնարավորությունները և արդյունավետությունը,
- Տնտեսության տարբեր ճյուղերի փոխկապակցվածության, գերակա ճյուղերի զարգացման խնդիրները,
- Ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման հնարավորությունները:

● Տաշիր քաղաքը, գտնվելով Լոռու մարզի ինտենսիվ յուրացված գոտում, Լոռու ընդարձակ սարահարթի վրա՝ շրջապատված ՀՀ ամենաարժեքավոր գյուղատնտեսական հողերով, կարող է վերածել Լոռու մարզի ագրոարդյունաբերական խոշոր կենտրոնի:

● Տաշիր քաղաքը, գտնվելով հզոր հանքահումքային բազա ունեցող Լոռու մարզի կենտրոնական մասում, Արմավիրի, Ստեփանավան, Վանաձոր, Ախթալա քաղաքների ազդեցության ոլորտներում, տնտեսության գերակա ագրոարդյունաբերական ճյուղից բացի կարող է զարգանել արդյունաբերական «բազային» ճյուղերի վերջնական արտադրանքը օգտագործող արտադրություններ՝ առաջնությունը տալով գյուղատնտեսական պարարտանյութերի արտադրությանը:

● Տաշիր քաղաքի դիրքը Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման (U-3) միջպետական ճանապարհի և Գյումրի-Վարդաղբյուր-Տաշիր հանրապետական նշանակության ճանապարհների խաչմերուկում կարող է վերածել տուրիստական ենթակենտրոնի՝ կապելով Շիրակի, Լոռու մարզերը Վրաստանի հետ:

Սահմանափակող գործոն է ճանապարհների ցածր տեխնիկական կարգերը: Անհրաժեշտ է ճանապարհների վերանորոգում՝ բարձրացնելով տեխնիկական կառուցողականները, ինչպես նաև տեղական նշանակության ճանապարհային խոշոր կենտրոնի:

- Այսպիսով, Տաշիրի քաղաքային համայնքի հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են.
  - Ագրոարդյունաբերական համալիրի ձևավորում և զարգացում,
  - Արդյունաբերության «բազային» ճյուղերին սպասարկող արտադրության, գիտատար արտադրական օբյեկտների ձևավորում և

զարգացում,  
- Ռեկրեացիոն ոլորտը և այն սպասարկող արտադրության զարգացում:

### II-1.1. Արդյունաբերության զարգացման հեռանկարները

Սույն նախագծով արդյունաբերության հեռանկարները դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) ռեսուրսների, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունով, որոնցից կարևորագույնն են.

- Տարածաշրջանի հումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը արդյունաբերության «բազային» ճյուղերի զարգացման համար:
  - Տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրության օգտագործումը՝ ագրոարդյունաբերական ճյուղի զարգացման համար:
  - Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմամբ:
- Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիաներով արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ համեմատաբար արագ և փոքր ծախսերով յուրացնել նոր տեխնոլոգիաները և նորարարությունները, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման արդիական ձևերին:
- Գիտատեխնիկական ճյուղի արդյունաբերական օբյեկտների տեղադրում:
  - Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծում:
  - Արդյունաբերական օբյեկտներում ժամանակակից, միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառում:
  - Աշխատունակ բնակչության բարձր ներուժի օգտագործում:
  - Իրավական և գործարարական տեղեկատվական կենտրոնի ստեղծում՝ բնակչությանը, հիմնականում ներդրողներին իրազեկելու նպատակով:

### II-1.2. Արդյունաբերության «բազային» կոմպլեքսատեղծ ճյուղերի զարգացման հնարավորությունները

Անցած սոցիալ-տնտեսական փուլում Տաշիր (Կալինին) քաղաքում գործում էին մեքենաշինության (կազմում էր արդյունաբերական արտադրանքի 45.9 %), թեթև արդյունաբերության (կազմում էր արդյունաբերական արտադրության 30.8 %), սննդի, էներգետիկայի և այլ ճյուղերի արդյունաբերական օբյեկտներ՝ 1560 աշխատատեղերով:

Այժմ այդ օբյեկտները սեփականաշնորհված են և չեն գործում: Զգործող արդյունաբերական օբյեկտներում նոր արտադրություններ դնելու և վերագործարկելու նպատակով սույն նախագծով կատարված է հանքահումքային ռեսուրսների վերլուծությունը և տրվել է գնահատական: Տաշիրի տարածաշրջանն ունի որոշ հեռանկարներ՝ կապված ոսկի-պղինձ-բազմամետաղային հանքավայրերի ոչ մետաղային հումքի օգտագործման հետ:

Որպես առաջնահերթ արդյունաբերական կենտրոն կարող է հանդիսանալ Պրիվոլնո հանքային դաշտը, որն ընդգրկում է Զերեմշա գետի ավազանը և Պրիվոլնի գյուղի տարածքը՝ զբաղեցնելով Յագարաշ լեռան արևմտյան լանջերը: Այստեղ հայտնի է հստակ շահագործված «Մեղնայա գորա» տեղամասը, որից արդյունահանվել է տեղում մշակվել է պղնձի հանքաքար, և մի շարք տեղամասերում (Զերեմշա, Կլոր բլուր, Կյուչնիյ և այլն) արդյունահանվել է ոսկի-բազմամետաղային հանքաքար, որոնք նույնպես մշակվել են տեղում: Պրիվոլնի հանքային դաշտի հանքերնակույծներն են հանքավայրերի արդյունաբերական շահագործման հեռանկարները վերագնահատված են և ներկայումս այս հանքավայրերը գտնվում են «Metal Prince» ընկերության տնօրինության տակ: Անհրաժեշտ է նշել, որ Պրիվոլնո դաշտից արդյունահանված պղնձի հանքաքարը կամ լավագույն դեպքում պղնձի խտանյութը, եթե ինարկե իրականացնում տեղում հանքահարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը, կտեղափոխվեն «ԱՄ» ընկերությանը պատկանող՝ Ավաբերդու հանքահարստացուցիչ ֆաբրիկա կամ պղնձածուլական գործարան: Ինչ վերաբերում է բազմամետաղային հանքաքարին (պղինձ, կապար, ցինկ), ապա հանքաքարը կամ լավագույն դեպքում խտանյութերը կտեղափոխվեն «Metal Prince» ընկերությանը պատկանող Ալթայայի հանքահարստացուցիչ ֆաբրիկա, իսկ հեռագայում խտանյութերը կօտարվեն: Եթե Պրիվոլնո հանքային դաշտում, ինչպես նախատեսվում է, կառուցվի հանքահարստացուցիչ ֆաբրիկա, ապա բազմամետաղային խտանյութերը կօտարվեն՝ մինչև Ավաբերդում կամ Ալթայայում կստեղծվեն համապատասխան մետալուրգիական արտադրություններ:

Տաշիրի տարածաշրջանը մեծ հեռանկարներ ունի պարարտանյութերի արտադրության գործում, ինչպես նաև տեղական նյութից վառելահումքի պատրաստման բնագավառներում: Վերջինս, հատկապես, վերաբերում է տորֆերից (Կալինին, Սարատովկա, Մեծավան) և ցածրորակ ածուխներից և այլով թերթաքարերից (Նորաշեն) վառելիքային բրիկետներից պատրաստմանը՝ տեղական սպառման նպատակով: Միաժամանակ հնարավոր է այդ նյութերից պատրաստել նաև պարարտանյութեր: Նկատի ունենանք, որ ինչպես տորֆերը, այնպես էլ Նորաշենի ածուխները և այլով թերթաքարը մետաղաբեր են և չի բացառվում, որ բարձր տեխնոլոգիաների ներդրման դեպքում կապահովվի հումքի ռացիոնալ օգտագործումը, որի նպատակը կլինի ստանալ նաև թանկարժեք մետաղներ: Այդ հետազոտությունները ներկայումս տարվում են հանրապետությունում և հեռանկարային են:

Տաշիրի տարածաշրջանի համար սկզբունքային նշանակություն ունեն կալիում պարունակող դիոխտ-դացիտային տուֆերը, որոնք մեծ տարածում ունեն Սարատովկա-Սվեդոլով գյուղերի շրջանում և ըստ անցկացված արդյունաբերական փորձարկումների հանդիսանում են էժան, բարձրորակ պարարտանյութեր՝ հացահատիկային և բանջարաբուստանային կուլտուրաների համար:

Տարածաշրջանը բավականին հարուստ է շինանյութերով, որոնցից ուշադրության են արժանի բազալտների, անդեզիտների, անդեզիտադացիտների, ֆելցիտային տուֆերի, տուֆաավազաքարերի, հրաբխաավազաքարերի, կավերի, հրաբխային ավազների և հրաբխային խարամների զգալի պաշարները, որոնք կարող են լիովին ապահովել ինչպես տարածաշրջանի, այնպես էլ շրջակա բնակավայրերի և արդյունաբերական ձեռնարկությունների շինարարական նյութերի պահանջարկը:

Տաշիրի տարածաշրջանում ըստ առաջնահերթության անջատվում են Պրիվոլնո՝ հանքային, Կալինինոյի՝ վառելիքապարարտանյութային և Մեծավանի՝ շինանյութերի, պարարտանյութերի և գորոքաքարերի հնարավոր արդյունաբերական կենտրոնները:

Տաշիրի տարածաշրջանում ստեղծվող, ինչպես նաև Նոռո մարզում գոյություն ունեցող հանքահումքային կենտրոնների վերջնական արտադրանքը կարող է օգտագործվել Տաշիր քաղաքի արդյունաբերական օբյեկտների չօգտագործվող ծավալներում՝ շրջապատին նվազագույն վնաս հասցնող արտադրության կազմակերպումով:

Հեռանկարում առանձնացված է արդյունաբերական տարածք (տրված է «Հեռանկարային հատակագծային կառուցվածք» ենթազգյուրով և համապատասխան գծագրում):

### II-1.3. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հնարավորությունները

Նախկին սոցիալ-տնտեսական փուլի պետական-այլանային օրենքներով գործող ագրոարդյունաբերական համալիրը փլուզվել է: Այժմ գործում են այդ համալիրի նոր ստեղծված պանրի, կարագի արտադրության մի քանի փոքր օբյեկտներ:

Տաշիրի տարածաշրջանը հարուստ է գյուղատնտեսական հողահանդակներով, հատկապես արոտներով: Խիստ զարգացած է եղել անասնապահությունը (1988 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է 4774 գլուխ): Հիմնական մասնագիտացումներն են՝ կաթնային տավարաբուծությունը, բուսաբուծությունը (կերային կուլտուրաներ, հացահատիկ, կարտոֆիլ):

Գյուղատնտեսության զարգացման և ճյուղի ապրանքային արտադրությունը կազմակերպելու, հողային ֆոնդի ռացիոնալ օգտագործման նպատակով նպատակահարմար է իրականացնել փոքր (50-60 հա), միջին (150-200 հա) չափի ֆերմերային տնտեսությունների ստեղծումը՝ կոոպերացիայի փայտափրական սկզբունքներով միավորելով և խոշորացնելով հողերը, որը կպահանջի իրագործել ագրո-գոտտեխնիկական, մեխորատիվ միջոցառումներ: Նշված միջոցառումները կնպաստեն նաև վերջին 10-15 տարիներին շրջանառությունից դուրս մնացած հողերը օգտագործել նպատակային նշանակությամբ:

Տաշիր քաղաքում ագրոարդյունաբերական համալիրի զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմինների և ներդրողների համագործակցությունը՝ տարածաշրջանային և միջմարզային տնտեսական կապերի ստեղծումով: Ագրոարդյունաբերական համալիրի արտադրանքը կարող է սպասարկել նաև նախատեսվող ռեկրեացիոն ոլորտին:

### II-1.4. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

Տաշիրի քաղաքային համալիրի տնտեսության զարգացման ճյուղերից նախատեսվում է նաև ռեկրեացիոն ոլորտը, հիմնականում տուրիզմի ճյուղը:

Տաշիր քաղաքը գտնվում է «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծով» նախատեսված Ձորագետի ռեկրեացիոն գոտու հյուսիսային ծայրամասում՝ Տաշիր գետի հովտում, որտեղ նախատեսվում է կազմակերպել Տաշիրի ռեկրեացիոն ենթագոտին: Ենթագոտին ընդգրկում է Տաշիր գետի միջին, ստորին հոսանքները՝ հյուսիսից շրջափակելով անտառ-այգով, լճակներով, արևմուտքից՝ պաշտպանական նշանակության անտառաշերտերով, արևելքում՝ ցածր հարաբերական բարձրության լեռնաշղթաներով:

- Ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպման համար ակտիվ գործնական են՝
- Քաղաքի դիրքը տուրիստական ռազմավարական նշանակության Կրաստանի սահման-Տաշիր-Ստեփանավան-Վանաձոր-Գյումրի-Թուրքիայի սահման ավտոմայրուղու վրա՝ իր ճյուղավորություններով դեպի հանրապետության մյուս մարզերը:
  - Տաշիր քաղաքի շուրջտարյա կլիմայաբուժության բարեխառն պայմանները (օդաբուժություն, արևաբուժություն):
  - Ձմեռային սպորտի կազմակերպման հնարավորությունները:
  - Պատմամշակութային հուշարձանների առկայությունը,

- Ռեգերվային տարածքների առկայությունը:
  - համելու ջրի մեծ պաշարները:
  - Տեղական բնակչության կարծառու հանգստի կազմակերպման անհրաժեշտությունը:
- (Ռեկրեացիոն ռեսուրսների բնութագիրը, ռեկրեացիայի տարբեր ձևերի կազմակերպման բարենպաստության աստիճանը տրված է «Տարածքի համալիր գնահատականը» գլխում՝ I-3.2.1.2., I-3.2.1.4., I-3.2.2.):
- Հաշվարկված է ռեկրեացիոն ենթագոտու ֆունկցիոնալ տարրողունակությունը (տեղացի և եկվոր բուժվողների, հանգստացողների, տուրիստների ընդհանուր քանակը, որոնք կարող են միաժամանակ օգտվել ռեկրեացիոն տարածքներից և ռեսուրսներից՝ առանց խախտելու բնապահպանության սահմանված կանոնները և հանգստացողների հոգեբանական կոմֆորտը):
- Ենթագոտու ֆունկցիոնալ տարրողունակության որոշման համար հիմք են ծառայել.
- Կլիմայաբուժության համար բարենպաստ օդերի թիվը յուրաքանչյուր ամսում,
  - Ռեկրեացիայի տարբեր ձևերի կազմակերպման համար հողատարածքների միջինացված չափերը,
  - Բնական լանդշաֆտների բեռնվածության թույլատրելի նորմերը ռեկրեացիայի կազմակերպման համար,
  - Գետի լողափի չափերը,
  - Ճանաչողական տուրիզմի օբյեկտների առկայությունը, որանց կուտակման հենակետային վայրերը:
- Ստորև բերված աղյուսակում տրված են ռեկրեացիոն համալիրների միջինացված տեխնիկական ցուցանիշները.

աղ. N Հ-1.

| N | Ռեկրեացիոն համալիր  | Տարածք (հա) տարրողունակություն (հազ. մարդ) | 1 մարդ/տեղ (մ2) | Լանդշաֆտներ                  | Լանդշաֆտի թույլատրված բեռնվածությունը (մարդ/հա) |
|---|---------------------|--|-----------------|------------------------------|---|
| 1 | Կլիմայաբուժություն  | 60.0<br>5.0                                | 120             | մերձձային, մերձգետային լողափ | 1000-2000                                       |
| 2 | Հանգիստ, տուրիզմ    | 30.0<br>2.5                                | 100             | անտառ-այգի                   | 20  |
| 3 | Ճանաչողական տուրիզմ | 25.0<br>3.0                                | 100             | մարգագետին-այգի              | 70  |
| 4 | Եռնադահուկային      | 40.0<br>5.0                                | -               | անտառ-մարգագետին             | 30  |

- Այսպիսով, ռեկրեացիոն ենթագոտու ֆունկցիոնալ տարրողունակությունը կկազմի 0.8-1.0 հազ. տեղ:
- Տաշիրի ռեկրեացիոն ենթագոտու օգտագործման քաղաքաշինական ռեժիմը նախատեսում է.
- Ռեկրեացիոն օբյեկտների լայն շինարարության (շուրջտարայ կլիմայաբուժական առողջարաններ, հանգստյան տներ, կենպիսակներ, մոթելներ, տուրիստական հանգրվաններ, վրանային հանգրվաններ և այլն):
  - Սպասարկման և մշակույթի օբյեկտների շինարարության (հյուրանոցներ, ռեստորաններ, սննդի օբյեկտներ, զվարճանքի տներ, թանգարաններ և այլն):

- Ինժեներական, տրանսպորտային, տեխնիկական ենթակառուցվածքների զարգացում և կատարելագործում:
  - Բնապահպանական միջոցառումների լայն համալիրի կիրառում.
  - Անտառածածկ տարածքների մեծացում,
  - Անտառի որակական կազմի (բույսերի) բարելավում,
  - Անտառահատման արգելում,
  - Ինժեներական նախապատրաստման, բարեկարգման աշխատանքների իրականացում (հակահեղեղային):
- Ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպումը կնպաստի.
- ՀՀ տուրիստական քաղաքականության ռազմավարական ուղղությունների իրականացումը հետևյալ երթուղիներով՝
  - Վրաստանի սահման-Տաշիր-Ստեփանավան-Վանաձոր-Գյումրի-Թուրքիայի սահման,
  - Վրաստանի սահման-Տաշիր-Ստեփանավան-Վանաձոր-Սևանի ավազան՝ ճյուղավորվելով դեպի Արցախ և Պարսկաստանի սահման:
- Վերը նշված երթուղիներից Տաշիրից կարող են ճյուղավորվել հետևյալ տեղական ուղղությունները.
- Տաշիր-Նորաշեն-Ապավեն-Արծնի-Սարչապետ-Պրիվոլնոյե-Կրուգլայա Շիշկա-Տաշիր,
  - Տաշիր-Բլազդոդարնոյե-Դաշտաղեն-Չյունաշող-Մեծավան-Տաշիր:
- Ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպումը կնպաստի նաև.
- Տեղական բնակչության ամենօրյա և կարճատև հանգստի կազմակերպմանը,
  - Նոր տիպի առողջարանների ստեղծմանը (օդաբուժություն, արևաբուժություն),
  - Նոր աշխատատեղերի ստեղծմանը,
  - Կրթական մակարդակի բարձրացմանը,
  - Բժշկական սպասարկման կատարելագործմանը,
  - Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներմուծմանը,
  - Տարածաշրջանի գյուղական բնակավայրերի խոշորացմանը:

## II-2. Բնակչություն և բնակելի ֆոնդ

Տաշիր քաղաքի բնակչությունը (ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2001թ. մարդահամարի տվյալների) կազմում է 9.5 հազ. մարդ, իսկ 01.01.06թ. կազմել է 13.3 հազ. մարդ:

Տաշիր քաղաքի բնակչության թվաքանակի դինամիկան 1990-2000թ. ժամանակահատվածում տրված է ստորև բերված աղյուսակում:

աղ. N Հ-2.

| Տարեթիվը           | Բնակչությունը (հազ. մարդ) |
|--------------------|---------------------------|
| 1990               | 13.5                      |
| 1991               | 13.2                      |
| 1992               | 13.5                      |
| 1993               | 14.3                      |
| 1994               | 14.3                      |
| 1995               | 14.2                      |
| 1996               | 14.2                      |
| 1997               | 14.3                      |
| 1998               | 14.3                      |
| 1999               | 14.3                      |
| 2000               | 14.2                      |
| 2001 թ. մարդահամար | 9.5                       |

Ինչպես երևում է աղյուսակից, բնակչության քանակը նվազել է կտրուկ և հասել 9.5 հազարի, իսկ մինչև 01.01.2006թ. տեղի է ունեցել բնակչության աճ՝ հասնելով մինչև 13.3 հազ. մարդու:

Բնակչության հեռանկարային քանակը հաշվարկված է 25.0 հազ. մարդ՝ քաղաքապետական տարածքի դեմոգրաֆիական տարրողունակության մեթոդով (ըստ «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթների):

Բնակչության աճի համար ժամկետներ չեն նախատեսված, այն կախված է քաղաքի, մարզի, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերից:

Քաղաքի բնակելի ֆոնդը կազմում է 732380 մ<sup>2</sup>: Բնակչության միջին ապահովվածությունը բնակելի մակերեսով՝ 55.0 մ<sup>2</sup>: Քաղաքը կառուցապատված է հիմնականում 1-2 հարկանի տնամերձ հողամասերով տներով (2775 հատ) և 40 հատ բազմաբնակարան շենքերով, ընդ որում առանձնատներում բնակվում է 8847 մարդ, իսկ բազմաբնակարան շենքերում՝ 4538 մարդ:

## II-3. Հասարակական սպասարկման ոլորտ

Նոր սոցիալ-տնտեսական փուլում հասարակական սպասարկման ոլորտի օբյեկտների նպատակամղված զարգացումն ընթացել է հիմնականում բուժական և կրթական ցանցերի վերականգնման ուղղությամբ, մեծ մասամբ արտասահմանյան և տեղական ներդրողների միջոցներով:

Կուտուր-կենցաղային օբյեկտների ցանցն ընդլայնվում է շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Հասարակական սպասարկման օբյեկտների հեռանկարային տեղադրման գոտիները տրված են գոտիավորման նախագծում:

Սպասարկման հաստատությունների ցուցանիշները և հողամասերի չափերը\*  
(Հեռանկարային բնակչության հաշվառումով)

| հի | Անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Չբաղեցրած տարածք (հա) |
|----|-----------|------------|--------|-----------------------|
| 1  | 2         | 3          | 4      | 5                     |

*Կրթության հիմնարկություններ*

|  |   |   |   |                             |
|--|---|---|---|-----------------------------|
| 1  | Մանկական նախադպրոցական հիմնարկություններ, այդ թվում   | տեղ                                       | 3383  | 10.1                        |
|  | ա) ընդհանուր տիպի   | -/-                                       | 2786  | 8.3                         |
|  | բ) մասնագիտացված  | -/-                                       | 119   | 0.4                         |
|  | գ) կազմակերպչ-առողջարարական   | -/-                                       | 478   | 1.4                         |
| 2  | Նախադպրոցականների համար ծածկած լողավազաններ   | օբյեկտ                                    | ըստ նախագծային առաջադրանցի  | -                           |
| 3  | Հանրակրթական դպրոցներ, այդ թվում  | աշակերտ                                   | 1756  | 8.7                         |
|  | ա) I-VIII դասարաններ  | -/-                                       | 1756  | -                           |
|  | բ) IX-XII դասարաններում   | -/-                                       | 1317  | -                           |
| 4  | Մասնագիտացված**   | -/-                                       | ըստ նախագծային առաջադրանցի  | ըստ նախագծային առաջադրանցի* |
| 5  | Մանկապատանեկան սպորտային դպրոց**  | -/-                                       | 10  | -/-                         |
| 6  | Սրվեստի մանկական դպրոց, երաժշտական, գեղարվեստական պարարվեստի դպրոց**  | -/-                                       | 12  | -/-                         |
| 4  | Գիշերօթիկ դպրոցներ  | -/-                                       | ըստ նախագծային առաջադրանցի  | -/-                         |
| 5  | Միջնակարգ մասնագիտական և մասնագիտատեխնիկական ուսումնական հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ | սովորող                                   | ըստ նախագծային առաջադրանցի՝ հաշվի առնելով քաղաք-կենտրոնի և դրա ազդեցության գոտու այլ բնակավայրերի բնակչությունը | -                           |
| <i>Ստորաբաժանական, սոցիալական օպահովության հիմնարկություններ</i>   |   |   |   |                             |
| 6  | Գիշերօթիկ տներ մեծահասակների, հաշմանդամների համար   | տեղ                                       | ըստ նախագծային առաջադրանցի  | -/-                         |
| 7  | Հատուկ տիպի բնակելի տներ և բնակարաններ ծերերի, վետերանների, հաշմանդամների ու միանյութիների համար                    | տեղ                                       | ըստ նախագծային առաջադրանցի  | -/-                         |
| 8  | Ստորաբաժանական ստացիոնարներ /հիվանդանոց/  | մահճակալ                                  | տարրորությունը և կառուցվածքը որոշվում է առողջապահական մարմնի կողմից և ներկայացվում է նախագծման առաջադրանքում    | -/-                         |
| 9  | Պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, առանց ստացիոնարի դիսպանսերներ  | հեղթում հաճախում                          | -/-   | -/-                         |
| 10   | Շտապ բուժական օգնության կայաններ  | ակտուսեցնա                                | 3   | 0.15                        |
| <i>Առողջարանակրթորտային և կազմակերպչական, հանգստի և տուրիզմի հիմնարկություններ</i>                                     |   |   |   |                             |
| 11   | Առողջարանակրթորտային և կազմակերպչական, հանգստի և զբոսաշրջության հիմնարկություններ, հյուրանոցներ                     | տեղ                                       | ըստ նախագծային առաջադրանցի  | ըստ նախագծային առաջադրանցի* |
| <i>Մարմնակրթական, սպորտային կառույցներ</i>   |   |   |   |                             |
| 12   | Մարմնակրթական-սպորտային կառույցներ, այդ թվում   | հա  | -   | 17.5                        |
|  | ա) ընդհանուր օգտագործման սպորտային դահլիճներ  | մ <sup>2</sup>                            | 1750  | ըստ նախագծային առաջադրանցի* |
| 13   | Ընդհանուր օգտագործման բաց և ծածկած լողավազաններ   | մ <sup>2</sup>                            | 625   | -/-                         |
| <i>Մշակույթի և արվեստի հիմնարկություններ</i>   |   |   |   |                             |
| 14   | Համերգային դահլիճներ  | տեղ                                       | 87  | -/-                         |
| 15   | Պարային դահլիճներ   | -/-                                       | 150   | -/-                         |
| 16   | Կինոթատրոններ   | -/-                                       | 625   | -/-                         |
| 17   | Թատրոններ   | -/-                                       | 125   | -/-                         |
| 18   | Քաղաքային գրադարաններ   | ընթացատեղ                                 | 50  | -/-                         |
| <i>Սնունդի, հասարակական սննդի և կենցաղային սպասարկման հիմնարկություններ</i>  |   |   |   |                             |
| 19   | Շուկայական համալիրներ   | մ <sup>2</sup> ամևտրական մակերես          | 600   | 0.4                         |
| 20   | Հասարակական սննդի ձեռնարկություններ   | տեղ                                       | 1000  | 1                           |
| 21   | Կենցաղային սպասարկման ձեռնարկություններ   | աշխատատեղ                                 | 225   | -                           |
| 22   | Կոմունալ սպասարկման ձեռնարկություններ, այդ թվում  |   |   |                             |
|  | ա) վկացատներ  | կգ սպիտակեղեն                             | 3000  | ըստ նախագծային առաջադրանցի* |
| 23   | Քիմիաբանական կետեր  | -/-                                       | 285   | -/-                         |
| 24   | Քաղաքային բաղնիք  | տեղ                                       | 125   | 0.3                         |
| <i>Կառավարման կազմակերպչություններ և հիմնարկություններ, վարկաֆինանսական հիմնարկություններ և կապի ձեռնարկություններ</i> |   |   |   |                             |
| 25   | Կապի հանգույց   | Ըստ Կապի նախարարության կողմից և կանոնների |   |                             |
| 26   | Բանկի բաժանմունք  | Ըստ նախագծային առաջադրանցի*               |   |                             |
| 27   | Կառավարման կազմակերպչություններ և հիմնարկություններ   | -/-                                       |   |                             |
| 28   | Քաղաքային դատարան   | տեղ                                       | -   | -                           |
| 29   | Իրավաբանական կոնսուլտացիա, նոտարական գրասենյակ  | -/-                                       | -/-   | ըստ նախագծային առաջադրանցի* |
| <i>Բնակելի-կոմունալ տնտեսության հիմնարկություններ</i>  |   |   |   |                             |
| 30   | Հրշեջ դեպո  | հրշեջ ավտոմեքենա                          | 5   | 0.6                         |
| 31   | Հյուրանոցներ  | տեղ                                       | 150   | 0.45                        |
| 32   | Հանրային զուգարաններ  | սարք                                      | 25  | -                           |
| 33   | Սվախարանային թաղանթի գերեզմանատուն  | հա  | -   | 10.0                        |

\*- Строительные нормы и правила, Градостроительство, Планировка и застройка городских и сельских поселений СНиП 2.07.01.-89, Москва, 1989 г.  
 \*\*- միևնույն շենքային համալիրում տեղակայված (արտադրողական կենտրոն)

## II-4. Քաղաքային տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք

### II-4.1. Քաղաքի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները

- Քաղաքի հատակագծային հեռանկարային կառուցվածքի ձևավորման մեթոդական հիմք են ծառայել. «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթներով ամրագրված քաղաքի տարածքային աճի սահմանափակման սկզբունքը,
  - Սեյսմիկ վտանգի պայմաններում քաղաքի բոլոր կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիությունն ու կայունությունն ապահովող սկզբունքները (բնակելի գոտու ռեզիլիենտությունը և սեյսմիկ վտանգի համապատասխանեցված խտություններ, ներքին ռեզերվային տարածքների ընդգրկում, կանաչ գոտու ընդլայնում),
  - Հին և նոր թաղամասերի հատակագծային օրգանական կապերի ապահովումը՝ ընդգրկելով քաղաքի գործառական տարածքում ռեզերվացիայի կազմակերպման համար բարենպաստ տեղամասերը:

### II-4.2. Հատակագծային հեռանկարային կառուցվածք

Տաշիր քաղաքի գոյություն ունեցող գծային հատակագծային կառուցվածքը ձևավորվել է Երևան-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի երկարությամբ նախկին Վորոնցովկա գյուղի կառուցապատման աստիճանական ընդլայնման ճանապարհով: Ընդ որում ընդլայնումը հիմնականում իրականացվել է Տաշիր գետի աջափնյա հատվածում, հետագայում կառուցապատումն անցել է նաև ձախ ափը: Տաշիր քաղաքի ներկայիս տարածքը հյուսիսից-հարավ ձգվում է 7-8 կմ միջին լայնությամբ՝ 1.5 կմ:

Քաղաքի փողոցային ցանցը հիմնականում կանոնավոր է՝ հյուսիս-արևմուտք ուղղությամբ ձգվող երկայնական փողոցներով, որոնք հատվելով լայնակի ուղղությամբ ձգվող փողոցների հետ, առաջացնում են տարբեր չափերի ուղղանկյուն թաղամասեր: Միայն քաղաքի հյուսիսային ծայրամասում փողոցային ցանցը կտրուկ փոխում է իր ուղղությունը՝ թեքվելով դեպի հյուսիս-արևելք դարձյալ իրար զուգահեռ ձգվող փողոցներով:

Փողոցային ցանցն անկանոն է քաղաքի ծայր հարավային մասում՝ կապված տարածքի ճահճացումների հետ: Կառուցապատումը հիմնականում իրականացված է 1-2 հարկանի մենատներով՝ տարբեր տարիներին տարբեր չափի տրամադրված տնամերձ հողամասերով (1200-400 մ<sup>2</sup>): Բազմահարկ կառուցապատումը (40 շենք) կենտրոնացված է քաղաքի կենտրոնական, հարավ-արևմտյան, հյուսիս-արևմտյան հատվածներում:

Արդյունաբերական-արտադրական և կոմունալ պահեստային օբյեկտները հիմնականում տեղաբաշխված են քաղաքի արևմտյան, հյուսիսային, հարավային մասերում: Քաղաքի արևելյան մասով անցնում են բարձրավոլտ էլեկտրական գծեր, որոնք խանգարում են կառուցապատման կանոնակարգմանը:

Քաղաքի հասարակական կենտրոնի շուրջը ձևավորվել է հասարակական կանաչ գոտին: Ուսումնական հաստատությունները տեղակայված են տարբեր թաղամասերի բարենպաստ մատչելիության գոտիներում: Տաշիր քաղաքի հատակագծային կառուցվածքը կազմակերպված է Տաշիր գետի ափին, ընդ որում բնակելի կառուցապատման գերակշիռ մեծամասնությունը տեղակայված է գետի աջափնյա հարթ տարածքում և միայն փոքր հատվածը՝ ձախ ափում:

Քաղաքն ունի ընդհանուր ձգվածություն գետի երկայնքով՝ ձևավորելով քաղաքի գծային կառուցվածք: Փողոցային ցանցը կազմակերպված է կանոնավոր, ուղղանկյուն հատակագծման սկզբունքներով, գետին զուգահեռ և ուղղահայաց փողոցների փոխհատումով՝ ձևավորելով գրեթե միևնույն չափերի ուղղանկյուն թաղամասեր:

Քաղաքը բաժանված է երկու թաղամասերի նաև գետին ուղղահայաց ուղղությամբ՝ արևելյան կողմի զույգ բլուրների միջին մասով անցող առանցքով, որի շուրջ էլ ձևավորված է կենտրոնական ճեմուղին: Այդ առանցքը կենտրոնական հարապարակի մակարդակում շարունակվում է ճեմուղուն ուղղահայաց՝ գետին զուգահեռ ձգվող հիմնական զբոսայգով (քաղաքի հասարակական նշանակության կանաչապատ տարածքի հիմնական շերտը):

Այս առանցքի վրա, երկու բլուրների միջև ընկած տարածքում և տեղակայված քաղաքի տարանջատված արդյունաբերական գոտու հյուսիսային հատվածը՝ քամիների վարդի հիմնական ուղղությունների հաշվառմամբ: Ներկայումս արդյունաբերական տարածքների զգալի մասը անգործության և մատակարար կամ գործում է չնչին հզորությամբ: Որպես հեռանկարային պահուստ առաջարկվում է պահպանել արտադրական տարածքները՝ հասցնելով առավելագույն հզորությունների կամ վերապրոֆիլավորելով: Հարավային գոտում է տեղակայված արդյունաբերության երկրորդ հատվածը: Որոշ արդյունաբերական օբյեկտներ տեղակայված են բնակեցման գոտում: Վերջիններս առաջարկվում է վերապրոֆիլավորել անվտանգ, փոքր սանիտարական գոտիներ պահանջող արտադրությունների կամ աստիճանաբար տեղափոխել հյուսիսային և հարավային արդյունաբերական տարածքներ:

Ներկայումս քաղաքի կառուցապատված տարածքում է հայտնվել նաև գլխավոր էլեկտրական իջեցնող «Տաշիր» ենթակայանը և բարձր լարման էլեկտրագծերը: Նպատակահարմար է դուրս բերել դրանց դեպի գերեզմանոցի հարակից կամ Նախկին ՇՄՇ12-ի հարակից տարածք և ազատված տարածքներն օգտագործել որպես պահուստ՝ քաղաքի հեռանկարային զարգացման համար:

Հասարակական բնօրյակ օբյեկտները կենտրոնացած են գլխավոր հրապարակի, Ջահուկյան փողոցի շուրջ: Երևանյան փողոցի (Ներկայումս միջպետական նշանակության մայրուղու) որոշ հատվածը ձևավորված է որպես առևտրի համաքաղաքային գոտի:

Կառուցապատման գերակշիռ մասը ձևավորված է անհատական բնակելի տներով և միայն աննշան մասը՝ բազմահարկ շենքերով, որոնք տարալուծված են անհատական կառուցապատման մեջ: Քաղաքի կենտրոնական հատվածում տեղակայված անհատական բնակելի ֆոնդի զգալի մասն ունի մշակվածության բարձր տոկոս (80-90 %):

Ուսումնականության և կենցաղ-սպասարկման օբյեկտները հավասարաչափ բաշխված են քաղաքի տարածքում: Հեռանկարային հատակագծային կառուցվածքով առաջարկվում է միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի տեղափոխել քաղաքի տարածքից՝ ազատելով քաղաքի կենտրոնական հատվածը տարանցիկ երթևեկության պատճառով առաջացող անհարմարությունից՝ աղմուկից, վիբրացիայից և արտանետումներից: Տարանցիկ երթևեկությունը Նախատեսվում է առաջնահերթ կազմակերպել գետի երկու ափերով՝ առանձնացված ուղղություններով, իսկ ուշ հեռանկարում այն դուրս է բերվում քաղաքից՝ դեպի արևելք (տես «Տրանսպորտի հեռանկարային զարգացումը» գծագիրը):

Քաղաքի կենտրոնական փողոցների երկարությամբ անհատական բնակելի կառուցապատումից առաջարկվում է առանձնացնել առավել պահպանված թաղամասերից մեկը և համապատասխան վերանորոգման և բարելավման աշխատանքներից հետո՝ պահպանել այն որպես արգելոցային տարածք՝ ներկայացնելով քաղաքի կառուցապատման ավանդույթները, առավել արժեքավոր կառույցներում կազմակերպելով քաղաքի պատմության, ավանդույթների, տարազանի, կերակրատեսակների և այլնի հետ ծանոթացման ցուցադրահրապարակներ:

Մնացած հատվածների կառուցապատումը մշակվածության տոկոսին համապատասխան աստիճանաբար փոխարինել:

Կենտրոնական գոտուց և ճեմուղուն հարակից առավել արժեքավոր հատվածներում առավել բարձր խտությամբ բազմաբնակարան կառուցապատմամբ, որն աստիճանաբար կմարի ըստ հարկաբանության դեպի ծայրամասերը, ընդ որում Նորացնելով հնացած ֆոնդը: Կենտրոնական փողոցների անմիջականորեն հարող հատվածը կազմակերպել խառը կառուցապատմամբ՝ հասարակական նշանակության և առևտրի կառույցներով, ապահովելով սակայն հիմնական ճանապարհներից ապահով և անվտանգ մոտեցումները, ավտոկայանատեղերը:

Հեռանկարային կառուցապատման համար տարածքներ են առաջարկված քաղաքի արևելյան, հյուսիսարևմտյան, արևմտյան (պաշտպանական անտառներից մինչև հեղեղապաշտպան (եռնային առուն ընկած տարածք)) և հյուսիսային հատվածներում: Հարավային հատվածում տեղաբաշխված ազատ տարածքները ներկայումս աջափնյա լանջերի մակերեսային հոսքի, արտեզյան ջրերի և գետից ներծծվող ջրերի առկայության հետևանքով գտնվում է ճահճապատ վիճակում: Գետի աջափնյա վտակների հակահեղեղային միջոցառումների (եռնային առուն) իրականացմամբ չորացվող տարածքները ևս առաջարկվում է օգտագործել որպես պահուստ՝ առանձին, ինքնաբավարար, բազմաբնակարան և անհատական կառուցապատմամբ թաղամասի ձևավորման համար:

Ջահափնյա (արևելյան) և աջափնյա (հյուսիսարևմտյան) թաղամասերը նախատեսվում է կառուցապատել հիմնականում անհատական հողամասերով առանձնատնային կառուցապատմամբ՝ նախապես կատարելով գոյություն ունեցող քամապաշտպան անտառատնկումների՝ դեպի հյուսիս ընդլայնման աշխատանքներ՝ գերակշիռ քամիներից նախատեսվող կառուցապատումը պաշտպանելու համար:

Քաղաքի հասարակական նշանակության կանաչապատ տարածքները կազմում են մոտ 10 հա: Քաղաքի հեռանկարային բնակչության՝ հասարակական նշանակության կանաչապատ տարածքների պահանջը միջին չափի քաղաքի համար կկազմի 7 ք.մ. յուրաքանչյուր բնակչի հաշվով՝ համաքաղաքային նշանակության կանաչ տարածքների, և 6 ք.մ.՝ ներթափանցանկային նշանակության կանաչապատ տարածք: Այսպիսով, ստացվում է 17.5 հա համաքաղաքային նշանակության, և 15 հա ներառումնապային նշանակության կանաչապատ տարածքներ:

Հաշվի առնելով գոյություն ունեցող հասարակական նշանակության 10 հա կանաչ տարածքները, կստացվի հեռանկարային 7.5 հա համաքաղաքային նշանակության կանաչի պահանջ, որը նախատեսվում է իրականացնել քաղաքի հյուսիսային հատվածում մասնակիորեն ձևավորված պուրակի հետագա կազմակերպումով (ջրային մակերեսներ, սպորտային կառույցներ, մարզահրապարակներ, որոնք գրեթե բացակայում են քաղաքի գոյություն ունեցող հատակագծային կառուցվածքում՝ ըստ ՀՀՇՆ 3-9.02-98 նորմատիվային պահանջների):

Ուսումնականության օբյեկտների ներկայիս քանակը և տեղաբաշխումը բավարարում է գոյություն ունեցող բնակչության պահանջները: Հեռանկարային պահուստների կառուցապատման դեպքում նախատեսվում է 2 դպրոցի և 4 մսուր մանկապարտեզների տեղադրում «Վրացական» և հարավային թաղամասերում:

Քաղաքի հյուսիսային ճահափնյա տարածքում առաջարկվում է կազմակերպել նաև տրանսվաճառային գոտի՝ աշխուժացնելու շրջակա գյուղերի և քաղաքի միջև առևտրա-գործարարական կապերը (հաշվի առնելով նաև Կրասնոնի սահմանի մոտիկությունը, մաքսատան անկայությունը Տաշիր-Վրաստան ճանապարհին և հնարավոր հեռանկարային զարգացումները):

### II-4.3. Քաղաքի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ

Հաշվի առնելով գերակշռող գործառական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքային տարածքը բաժանված է հետևյալ հիմնական գոտիների.

- **Բնակավայրերի հողեր**, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.
    - բնակելի կառուցապատման,
    - հասարակական կառուցապատման,
    - խառը կառուցապատման,
    - ընդհանուր օգտագործման հողերի,
    - այլ հողերի:
  - **Արդյունաբերության և այլ արտադրական նշանակության հողեր**, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.
    - արդյունաբերական օբյեկտների,
    - գյուղատնտեսական արտադրական օբյեկտների,
    - պահեստարանների:
  - **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր:**
  - **Հատուկ պահպանվող տարածքների հողեր**, որոնք ըստ գործառական նշանակության դասակարգվում են հետևյալ օժանդակ գոտիների.
    - բնապահպանական,
    - առողջարարական նպատակներով նախատեսված,
    - հանգստի համար նախատեսված,
    - պատմական և մշակութային:
  - **Հատուկ նշանակության հողեր:**
  - **Անտառային, ջրային և պահուստային հողեր:**
- Հաշվի առնելով հիմնական գոտիների քաղաքաշինական, բնապահպանական, սեյսմատեկտոնական, ինժեներաերկրաբանական և այլ բնօրյակ սահմանափակումները, վերջիններս դասակարգվել են ըստ գործառական նշանակության և թույլատրված օգտագործումների, հողամասերի ծավալատարածական չափորոշիչներին.
- **Բնակելի կառուցապատման գոտիները** նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակվելու տարածքն ըստ ծավալատարածական (օժանդակ) գոտիավորման բաժանվում է ցածր խտության, միջին խտության, բարձր խտության բնակելի գոտիների:
    - Ծածր խտության բնակելի գոտիները նախատեսված են տնամերձ հողամասեր ունեցող 1-2 հարկանի առանձնատներով կառուցապատման համար: Այս գոտիներն առանձնացված են հիմնականում արդեն կազմավորված առանձնատնային կառուցապատում ունեցող թաղամասերի հետագա զարգացման և կանոնակարգման համար: Այս գոտիներում բնակչության խտությունը չպետք է գերազանցի 100 մարդ/հա:
      - Միջին խտության բնակելի գոտիները նախատեսված են բազմահարկ և առանձնատներով խառը կառուցապատման տարածքների համար: Բնակչության խտությունը չպետք է գերազանցի 200 մարդ/հա:
      - Բարձր խտության բնակելի գոտիներն ընդգրկում են բազմահարկ տներով կառուցապատված տարածքները: Բնակչության խտությունը չպետք է գերազանցի 300 մարդ/հա:
    - Բնակելի գոտու ռեժիմը նախատեսվում է շինությունների (բնակելի տներ, սպասարկման օբյեկտներ) համապատասխան խտությունների պահպանման, սանիտարական պահպանման գոտիների սահմանում, ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում:
  - **Հասարակական կառուցապատման (գործառական) զարգացման գոտիները** նախատեսված են բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև համաքաղաքային նշանակության գործառական կազմակերպման համար, վարչական և տեղական

կառավարման շենքերի կենտրոնացման, գործարարական, ֆինանսական գործունեությունը քաղաքի տարածքում կենտրոնացնելու համար՝ քաղաքի զարգացմանը զուգընթաց:

● **Խառը կառուցապատման գոտիները** նախատեսված են ինչպես բնակելի, այնպես էլ հասարակական կառուցապատման համար, առանց որևէ մեկի զերակայություն:

● **Ընդհանուր օգտագործման գոտիները** նախատեսված են բնակչության ժամանցի և կապերի (տրանսպորտային և հեռիտոն) կազմակերպման համար:

● **Այլ հողերը** նախատեսված են որպես պահուստներ՝ հեռանկարային կառուցապատման համար (քաղաքի հյուսիսային, արևմտյան, հարավարևմտյան և հարավարևելյան հատվածները): Քաղաքը շրջապատող անտառային և գյուղատնտեսական հողերը, որոնք կարող են ծայրահեղ իավիճակների դեպքում օգտագործվել իրատապ միջոցառումների իրականացման համար, նախատեսված են որպես բուֆերային գոտիներ:

● **Արդյունաբերության և այլ արտադրական նշանակության տարածքները** նախատեսված են արդյունաբերական, արտադրական և պահեստային օբյեկտների, դրանց ենթակառուցվածքների առաջնային տեղակայման համար: Գոյություն ունեցող արդյունաբերական և արտադրական օբյեկտները պահպանվում են: Գոտու ռեժիմը նախատեսում է առաջավոր, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառում (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների վնասագերծում, փակ ցիկլեր և այլն):

● **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների տարածքները** նախատեսված են համապատասխան ենթակառուցվածքների, դրանց համապատասխան կառուցվածքների տեղակայման համար: Գոտու ռեժիմը նախատեսում է սանիտարական և անվտանգության գոտիների սահմանում և պահպանում և հատուկ իրավական ռեժիմների (սերվիտուտների) կիրառում: Սանիտարական գոտիները նախատեսվում է կանաչապատել՝ աղմուկի ազդեցությունը և մթնոլորտային օդի, հողային և ջրային ավազանների աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

● **Հատուկ պահպանվող տարածքների հողերը** նախատեսված են ռեկրեացիոն հանգստի, բուժ-առողջարարական (կլիմայաբուժություն, օդաբուժություն), զբոսաշրջություն, սպորտային գործունեության կազմակերպման համար:

● **Գոտին ընդգրկում է քաղաքի տարածքում տեղակայված պատմական արժեք ներկայացնող հուշարձանները, պաշտպանական նշանակության անտառները, նախատեսվող սահմանափակումներ՝ դրանց ընկալման, ազդեցության գոտիների քաղաքաշինական կազմակերպման և բնապահպանական նկատառումներով:**

● **Հատուկ նշանակության գոտին** ընդգրկում է քաղաքի տարածքում տեղակայված գինվորական օբյեկտները, դրանց սպասարկող ենթակառուցվածքների տարածքները: Գոտու ռեժիմը՝ ըստ վարչական պատկանելիության:

● **Անտառային, ջրային և պահուստային հողերը** ընդգրկում են անտառատնտեսությանը պատկանող (ինչպես անտառապատ, այնպես էլ ոչ անտառապատ) տարածքները, գետերը, ոռոգման ջրանցքները, աղբյուրապատման կառուցվածքները, դրանց սանիտարական գոտիները: Գոտու ռեժիմները տրված են նախագծի համապատասխան բաժիններում:

## II-5. Տաշիրի քաղաքային համայնքի տրանսպորտային ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը

### II-5.1. Արտաքին տրանսպորտ

Տաշիր քաղաքը տեղակայված է Լոռու սարահարթի արևելյան կողմում, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: Տաշիրը սահմանային քաղաք է, քաղաքից մինչև Վրաստանի սահման ուղիղ գծով կազմում է ընդամենը 10 կմ: Քաղաքի ամբողջ երկարությամբ անցնում է Մ-3 միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ճանապարհը: Մայրուղու Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման հատվածը III կարգի է: Մ-3 մայրուղին, մինչև Ստեփանավան բարեկարգ վիճակում է: Ներկայումս ավարտված է նաև Ստեփանավան-Տաշիր տեղամասի Նորոգումը: Ճանապարհը ծայր ստիճան անբարեկարգ է Տաշիր-Վրաստանի սահման հատվածում: Դրությունը Նույն է նաև սահմանից այն կողմ, Վրաստանի տարածքում:

Սահմանների ազատության պայմաններում աշխույժ առևտուր ու եռուզեռ էր տիրում Հայաստանի հյուսիսային բարձրադիր շրջանների և Վրաստանի հարավային շրջանների միջև: Այդ անցուղարձը կազմել է օրական 136 ավտոմոբիլ:

Տաշիր քաղաքի տարածքում Մ-3-ին է միանում Հ-31 հանրապետական նշանակության Վարդաղյուր-Տաշիր 45.3 կմ երկարությամբ ճանապարհը: Այն կապում է Շիրակի դաշտավայրը Լոռու հարթավայրին: Դեռևս խորհրդային տարիների ճանապարհին անբարեկարգ վիճակում էր, չնայած կարևոր ռազմավարական նշանակությանը: Շիրակի դաշտավայրին մոտենալիս ճանապարհն անցնում է Ջավախեթի և Բազումի լեռնաշղթայի մի թումբով, որի բարձրակետը ծովի մակերևույթից կազմում է 2320 մ, իսկ 2200 մետրից բարձր Նիշերով անցած ուղին մոտ 20 կմ է:

Հասկանալի է, որ ճանապարհի պահպանման և շահագործման պայմանները չափազանց անբարենպաստ են, սակայն դա Շիրակի և Լոռու մարզերը կապող սահմանամերձ միակ ուղին է:

Տաշիրը հանգուցային քաղաք է, որտեղից սկիզբ են առնում շրջակա գյուղերը տանող ևս 4 ճանապարհ:

Պետք է նշել, որ շրջանի տեղական նշանակության ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում, իսկ տեղ-տեղ նույնիսկ անանցանելի են: Դա բերում է կոլոսալ վնասներ, ինչպես նաև տնտեսության առաջընթացի խոչընդոտման: Ցածրանում է նաև տարածաշրջանի ներդրումային գրավչությունը:


Մոտակա երկաթուղին անցնում է բավականաչափ հեռավորությամբ, Սպիտակ-Վանաձոր-Վլավերդի ուղղությամբ, այնպես որ քաղաքը երկաթուղային փոխադրումներից, կարելի է ասել, զրկված է:

Քաղաքից ընդամենը 6-7 կմ դեպի հարավ ընկած է Ստեփանավանի օդանավակայանը, որտեղից, ցավոք սրտի, թռիչքներ են կատարվում միայն Ռուսաստանի Դաշնության մի քանի քաղաքներ:

### II-5.2. Տրանսպորտային ուղիների զարգացման հեռանկարները

Համաձայն «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» Հյուսիս-Հարավ հիմնական ուղղությունը դիտարկվող շրջանի տարածքով պետք է անցնի Ստեփանավան, Ռուստա, Պրիվոլնոյե բնակավայրերի շրջանցումով:

Վրաստանի սահմանագլխին, Սոմխեթի լեռնաշղթայի տակով ճանապարհը պետք է անցնի թունելով:



Քանի որ Մ-3 ճանապարհը ներկայումս անցնում է Տաշիրի ամբողջ երկարությամբ, ապա բնական է, որ տարանցիկ երթևեկությունը կխանգարի տեղական երթևեկությանը: Սակայն, այսօրվա դրությամբ, տարանցիկ տրանսպորտի անցուղարձը դեռևս չնչին է, և քաղաքը շրջանցող ճանապարհի կարիք չի զգացվում: Հետագայում, երբ քաղաքի կենտրոնական փողոցով երթևեկության ժամային անցուղարձը կկազմի 15 ավտոմոբիլ 1 ժամում, արդեն հարկ կլինի քաղաքը շրջանցող ճանապարհ կառուցել, նպատակահարմար է արևելյան կողմից: Հանապարհի երկարությունը կկազմի 9.0 կմ և կպահանջվի ներդրել մոտ 1 միլիարդ դրամ:

### II-5.3. Ներքին տրանսպորտ

Տաշիր քաղաքի փողոցային ցանցն ուղղանկյունաձև է: Քաղաքը ձգված է միջպետական նշանակության Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ճանապարհի երկարությամբ: Համաքաղաքային նշանակության փողոցային ցանցը պատկերված է զծագրում: Մայրուղային փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 10.62 կմ: Բնակելի 1 կմ<sup>2</sup> տարածքին ընկնում է 0.4 կմ երկարությամբ մայրուղային փողոց: 2006 թ. օգոստոս ամսին կատարվել է համաքաղաքային նշանակության փողոցներով տրանսպորտային միջոցների անցուղարձի հաշվառում: Երթևեկության քարտեզումը ցուցադրված է զծագրում, հաշվառման արդյունքները բերված են աղյուսակում:

**Տաշիր քաղաքի համաքաղաքային նշանակության փողոցներով տրանսպորտի անցուղարձը 2006 թ. և հեռանկարային 2016 թ. աղ. N Հ-3.**

| Փողոցի անվանումը | Երկարությունը, մ | Երթևեկային մասի լայն., մ | Մայրերի լայն., մ | 2006 թ.                  |                        | 2016 թ.                  |                        |
|------------------|------------------|--------------------------|------------------|--------------------------|------------------------|--------------------------|------------------------|
|                  |                  |                          |                  | Երթ. անցուղարձը, ավտ/ժամ | Բեռվածության մակարդակը | Երթ. անցուղարձը, ավտ/ժամ | Բեռվածության մակարդակը |
| 1                | 2                | 3                        | 4                | 5                        | 6                      | 7                        | 8                      |
| I հատված         | 1170             | 13.0                     | 2x2.0            | 110                      | 0.07                   | 259                      | 0.17                   |
| II հատված        | 1100             | 13.0                     | 2x2.0            | 150                      | 0.10                   | 354                      | 0.24                   |
| III հատված       | 950              | 12.5                     | 2x8.0            | 185                      | 0.12                   | 436                      | 0.29                   |
| IV հատված        | 1100             | 12.5                     | 2x8.0            | 140                      | 0.09                   | 330                      | 0.22                   |
| V հատված         | 1280             | 12.5                     | 2x8.0            | 88                       | 0.06                   | 208                      | 0.14                   |
| 2                | 450              | 7.0                      | 2x1.5            | 24                       | 0.02                   | 57                       | 0.06                   |
| 3 I հատված       | 800              | 7.0                      | 2x1.0            | 21                       | 0.02                   | 50                       | 0.05                   |
| II հատված        | 800              | 7.0                      | 2x1.0            | 22                       | 0.02                   | 52                       | 0.05                   |
| 4 I հատված       | 300              | 13.5                     | 2x7.5            | 69                       | 0.05                   | 163                      | 0.11                   |
| II հատված        | 600              | 13.5                     | 2x7.5            | 34                       | 0.02                   | 80                       | 0.05                   |
| 5                | 850              | 9.0                      | 2x1.5            | 25                       | 0.03                   | 59                       | 0.06                   |
| 6                | 300              | 9.0                      | 2x1.5            | 12                       | 0.01                   | 28                       | 0.03                   |
| 7                | 400              | 9.0                      | 2x1.5            | 32                       | 0.03                   | 76                       | 0.08                   |
| 8                | 520              | 9.0                      | 2x1.5            | 16                       | 0.02                   | 38                       | 0.04                   |

Աղյուսակից հետևում է, որ այսօրվա դրությամբ քաղաքի բոլոր մայրուղային փողոցներն աշխատում են ազատ ռեժիմով: Աղյուսակի վերջին պտույտներում բերված են 2016թ. այդ փողոցների անցուղարձերը տրանսպորտի տարեկան 10 % աճի դեպքում: Պարզվում է, որ այդ դեպքում էլ քաղաքի փողոցները կաշխատեն ազատ ռեժիմով, այսինքն թերբեռնված:

Համեմատելիս, Տաշիրը տարանցիկ քաղաք է, և տարանցիկ երթևեկությունը քաղաքացիներին անհարկի անհարմարավետություն է պատճառում: Մոտակա հեռանկարում տարանցիկ երթևեկությունը քաղաքի կենտրոնական փողոցից կարելի է դուրս բերել և տանել Տաշիր գետի աջ և ձախ ափերով անցնող փողոցով: Այդ փողոցն այսօրվա դրությամբ անբարեկարգ է, առանց պատվածքի: Որպեսզի այն դառնա տարանցիկ, պետք է Ստեփանավանի կողմից երկարացնել 650 մետրով և տրանսպորտային հանգույցով (շեփոր տիպի) միացնել կենտրոնական փողոցին: Մյուս ծայրից փողոցը պետք է շարունակել Տաշիր գետի ափով մինչև Մ-3 ճանապարհի հետ միանալը: Այսպիսով, Գետափնյա փողոցը տարանցիկ դարձնելու համար հարկ կլինի կառուցել երկու կամուրջ, երկու ուղեկամուրջ և 2.25 կմ նոր ճանապարհ:

Ավելի ուշ կարելի է կառուցել նաև մոտ 5 կմ երկարությամբ նոր ճանապարհ, որով լիովին կլուծվի քաղաքի շրջանցման հարցը: Քաղաքում ուղևորատար հասարակական տրանսպորտ այսօրվա դրությամբ չի աշխատում:

Այս տարի քաղաքի մի քանի փողոցներ մասնավոր ներդրումների հաշվին վերանորոգվում են: Մյուս փողոցները անբարեկարգ են: Երբեմնի ասֆալտի պատվածքից հետք անգամ չի մնացել: Տեղ-տեղ ավտոմոբիլները երթևեկում են մայրերով:

Այս երևույթի պատճառով, բացի այն բանից, որ փողոցները չեն նորոգվում, ճանապարհային ջրահեռացման բացակայությունն է: Հայտնի է, որ Լոռու բարձրավանդակը, որտեղ է գտնվում է քաղաքը, հայտնի է իր խիստ կլիմայով և տեղումների առատությամբ: Իսկ քանի որ քաղաքի տարածքի մեծ մասը տեղավորված է հարթավայրում, ջրահեռացման բացակայության պայմաններում, փողոցների պատվածքը արագորեն շարքից դուրս է գալիս:

Տաշիր գետի ափամերձ փողոցի վերակառուցումից հետո համաքաղաքային նշանակության փողոցների ընդհանուր երկարությունը կկազմի 15.02 կմ, իսկ դրանց խտության ցուցանիշը հավասար կլինի 2.6 կմ/կմ<sup>2</sup>:

**II-5.4. Տաշիր քաղաքի տարածքում ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումների հաշվարկ**

Ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումներից մարդու առողջության համար ամենավտանգավորներն են. ածխածնի մոնօքսիդը - CO՝ ազոտի օքսիդները - NO<sub>x</sub> տարատեսակ ածխաջրածինները - C<sub>m</sub>H<sub>n</sub> կոշտ արտանետումները-ծանր մետաղները և դրանց միացությունները Տարեկան կտրվածքով նյութի արտանետումները հաշվված են հետևյալ բանաձևով. Q=365 T (q<sub>վ</sub>K<sub>վ</sub> + q<sub>բ</sub>K<sub>բ</sub>) N T<sub>ա</sub>f<sub>բ</sub>f<sub>լ</sub> / V [մգ/տարեկան] որտեղ T- օրվա մեջ տրանսպորտի ակտիվ աշխատանքի ժամերն են, q<sub>վ</sub> և q<sub>բ</sub> - մարդատար և բեռնատար ավտոմոբիլի՝ տվյալ նյութի արտանետման չափն է մեկ վայրկյանում, K<sub>վ</sub> և K<sub>բ</sub> - մարդատար և բեռնատար ավտոմոբիլների քանակն է հոսքում, N - փողոցով տրանսպորտի ժամային անցուղարձ է, f<sub>ա</sub>, f<sub>բ</sub> և f<sub>լ</sub> - գործակիցներ են, որոնք հաշվի են առնում հոսքի արագության, ծովի մակարդակից տեղանքի բարձրության և փողոցների թեքության ազդեցությունը արտանետումների վրա, L - փողոցի երկարությունն է, V - տրանսպորտային հոսքի միջին արագությունն է: Հաշվարկները ցույց են տալիս, որ վերը թվարկված թունավոր նյութերի արտանետումները Տաշիր քաղաքում տարեկան կազմում են. ածխածնի մոնօքսիդ (CO) - 138 տ ազոտի օքսիդներ (NO<sub>x</sub>) - 6.6 տ ածխաջրածիններ (C<sub>m</sub>H<sub>n</sub>) - 13.7 տ կոշտ նյութեր - 0.19 տ

**II-6. Ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը**

Ինժեներական ենթակառուցվածքների ուղղաձեռն կառուցումը համար դրապես ելակետային տվյալներ օգտագործվել են՝ - Տաշիր քաղաքի հատակագծային հորինվածքը կատարված «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից: - ՀՀ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ հյուսիսարևելյան տարածքային մասնաճյուղի «Տաշիր» ենթատեղամասի տվյալները քաղաքի առկա ջրամատակարարման և կոյուղացման վիճակի վերաբերյալ: - ՀՀ «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ «Դեբետ» մասնաճյուղի «Տաշիր» ցանցի տվյալները (N 047 28.06.06 թ.): - «Հայռուսագազարդ» ՓԲԸ Լոռի Գ.Գ.Մ. «Տաշիր» տարածքային տեղամասի տվյալները (N 19/41 27.06.06 թ.) քաղաքի գազամատակարարման առկա վիճակի մասին: - ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և համաճարակային տեսչության Լոռու մարզային կենտրոնի տվյալները Տաշիր քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ: - ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նամակը (N16- ԳԱ 08/889 05.06.06 թ.) քաղաքի ջրամատակարարման բարելավման նախագծման նախաշնչային փաստաթղթերի կատարման ժամկետների վերաբերյալ:

**II-6.1. Ջրամատակարարում**

Տաշիր քաղաքի խմելու-կենցաղային և արտադրական օբյեկտների խմելու որակի ջրամատակարարումն իրականացվում է Ակյուտինի և Բազումի աղբյուրների համակարգերով, ըստ որում՝ Ակյուտինի աղբյուրներից մեխանիկական եղանակով, Բազումի աղբյուրներից՝ ինքնահոս: Քաղաք մտնող ընդհանուր ջրաքանակը վերը նշված երկու աղբյուրներից կազմում է 79.0 /լ/րկ: Ակյուտինի համակարգի ջրատարը կառուցվել է 1994 թ. պողպատե խողովակներով (d=320 մմ, երկարությունը՝ 9.5 կմ): Բազումի համակարգի ջրատարը կառուցվել է 1968 թ. պողպատե և չուգունե խողովակներով (d=319 մմ, երկարությունը՝ 35 կմ): Երկու համակարգի ջրագծերում մեծ են հոսքակորուստները և դրանք կարիք ունեն վերանորոգման, վերակազմման: Բնակավայրի ջրմուղի ներքին բաշխիչ ցանցը նույնպես կարիք ունի վերակառուցման և վերակազմման, իսկ որոշ հատվածներում՝ շրջանցման: Կորուստները ցանցում հասնում են մինչև 65 %-ի: Ջրմուղի գործող ներքին ցանցի 4.5 կմ-ը կարիք ունի հիմնախորհրդան: Քաղաք մուտք գործող Ակյուտինի աղբյուրի ջուրը մղվում է ՕԿԶ, որը սնում է բնակավայրի տարածքի 60 % սպառողներին: Բազումի

համակարգի ջուրն ուղղակի միացվում է մնացած 40 % տարածքի ջրամատակարարման ցանցին:

Գործող ՕԿՁ-ի ծավալը 2000 մ<sup>3</sup> է: Նախկինում գործող 2x350 մ<sup>3</sup> ծավալով ՕԿՁ-ները չեն գործում, կարիք ունեն վերակառուցման: Մուտք գործող ջրերից աղտահանում կատարվում է միայն Ակյուտինի աղբյուրների գլխամասային կառույցներում՝ հեղուկ քլորով: Բազումի համակարգի ջրերը չեն վարակագրվում: Անհրաժեշտ է կառուցել քլորակայան:

**Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ժամանակաշրջանի ջրապահանջը և ջրահեռացման քանակը**

Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու, տնտեսակենցաղային, արտադրական այն ձեռնարկությունների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր, ինչպես նաև բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության մեկ մարդու միջին օրական ջրապահանջի քանակը, համաձայն ներկայումս գործող նորմերի, ընդունված է 200 լ/օր: Չունենալով արտադրական ձեռնարկությունների արտադրանքի տեսակետով և քանակի վերաբերյալ տվյալներ, որոնք հիմնականում չեն գործում, արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրի քանակն ընդունված է բնակչության հաշվարկային ջրապահանջի 25 %-ի չափով:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկված է համաձայն գործող նորմերի պահանջների (25-50 հազ. բնակչությամբ բնակավայրերի համար, միաժամանակյա արտաքին հրդեհների քանակը 2x20 լ/վրկ, իսկ ներքին հրդեհների համար՝ 2x2.5 լ/վրկ):

Հակահրդեհային նպատակների համար ընդհանուր ջրապահանջը կազմում է՝ 2x20+2x2.5=45 լ/վրկ: Հրդեհի տևողությունն ընդունվում է 3 ժամ:

$$Q=(45 \times 3 \times 3600):1000=486 \text{մ}^3$$

Հակահրդեհային ջրապահանջի վերականգնումը 24 ժամվա ընթացքում, որի համար անհրաժեշտ է՝

$$Q=(486 \times 1000):24 \times 3600=5.6 \text{ լ/վրկ}$$

Այդ նպատակով ընդհանուր ջրամատակարարման պահանջարկում հաշվարկված է 5.6լ/վրկ լրացուցիչ ջրաքանակ: Խմելու, տնտեսական, արտադրական ձեռնարկությունների և հակահրդեհային կարիքների համար պահանջվող միջին օրական ջրաքանակի հաշվարկը:

աղ. N Հ-4.

| N | Ջրապատրոհները                      | քանակը (հազ.) | ջրապատման նորման լ/օր | ջրապահանջը         |       | ջրահեռացում        |       |
|---|------------------------------------|---------------|-----------------------|--------------------|-------|--------------------|-------|
|   |                                    |               |                       | մ <sup>3</sup> /օր | լ/վրկ | մ <sup>3</sup> /օր | լ/վրկ |
| 1 | Բնակչություն                       | 25.0          | 200                   | 5000.0             | 58.0  | 5000.0             | 58.0  |
| 2 | Արտադրություն                      | 25 %          |                       | 1250.0             | 14.5  | 1000.0             | 11.5  |
| 3 | Հակահրդեհային կարիքներ<br>Ընդամենը |               |                       | 486.0              | 5.6   | -                  | -     |
|   |                                    |               |                       | 6736.0             | 78.0  | 6000.0             | 69.5  |
| 4 | Կորուստներ 20 %<br>Ամբողջ          |               |                       | 1347.0             | 16.0  | -                  | -     |
|   |                                    |               |                       | 8083.0             | 94.0  | 6000.0             | 69.5  |

\* Արդյունաբերության համար հաշվարկված ջրապահանջը հետագայում անհրաժեշտ կլինի ճշտել: Այսպիսով, ըստ կատարված հաշվարկների հեռանկարային ժամանակաշրջանի համար Տաշիր քաղաքի խմելու որակի ջրապահանջը կազմում է 8083.0 մ<sup>3</sup>/օր (94.0 լ/վրկ): Կեղտաջրերի քանակը 6000.0 մ<sup>3</sup>/օր (69.5լ/վրկ): Քաղաքի հեռանկարային զարգացման խմելու որակի ջրապահանջը կբավարարվի Ակյուտինի և Բազումի աղբյուրների համակարգերից: Ակյուտինի աղբյուրներից պոմպի միջոցով, Բազումի աղբյուրներից՝ ինքնահոս, անջատելով Բազումի ջրատարի N 3 մարիչ հորը:

**Ջրամատակարարման համակարգը և գոտիները**

Տաշիր քաղաքի ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է՝ բնակչության խմելու-կենցաղային, արդյունաբերական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Հաշվի առնելով քաղաքի կառուցապատված տարածքի և ներկայացվող նոր գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման ենթակա տարածքների նիշերի ոչ մեծ տարբերությունը (1520մ-1485մ=35 մ), ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար քաղաքի ջրամատակարարման ցանցը հետագայում ևս նախատեսվում է մեկ գոտիանի: Ջրամատակարարումը կիրականացվի ներկայումս գործող 2x2000 մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ներից, որոնց հատակի նիշը 1553 մ է:

Ըստ կատարված հաշվարկների, Տաշիր քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու, ինչպես նաև հակահրդեհային ջրաքանակ պաշարելու համար անհրաժեշտ է ունենալ 6700 մ<sup>3</sup> ընդհանուր տարողությամբ ՕԿՁ-ներ: Ստորև բերվում է հաշվարկը.

- կարգավորման ծավալը  $W_{կ} = 9886 \times 0.3 = 2966 \text{ մ}^3$
  - հակահրդեհային կարիքներ  $W_{հհ} = 486 \text{ մ}^3$
  - վթարային  $W_{վթ} = (9886 \times 8):24 = 3295 \text{ մ}^3$
- Ընդհանուր ծավալը  $W_{ընդ} = 2966 + 486 + 3295 = 6682.0 \text{ մ}^3$

Ներկայումս գործող ՕԿՁ-ների ծավալը  $2 \times 2000 = 4000 \text{ մ}^3$ , չգործող ՕԿՁ-ների ծավալը  $2 \times 350 = 700 \text{ մ}^3$ , նախատեսվում է վերագործարկել: Նախատեսվում է հաշվարկային ժամանակաշրջանի համար կառուցել ևս մեկ հատ 2000 մ<sup>3</sup> ծավալով ՕԿՁ:

Այսպիսով, քաղաքի ընդհանուր օրվա կարգավորիչ ջրամբարների ծավալը կլինի  $3 \times 2000 + 2 \times 350 = 6700 \text{ մ}^3$ , հատակի նիշը՝ 1553 մ, իրենց անհրաժեշտ սանպահպանության գոտիով:

**II-6.2. Ջրահեռացում (կոյուղի)**

Քաղաքը ներկայումս կոյուղացված է: Կոյուղու փողոցային ներքին ցանցը կառուցվել է 1960-1991 թթ., ասբոցեմենտե խողովակներով, տրամագծերը՝ 150-400 մմ, ընդհանուր երկարությունը՝ 15.2 կմ: Կոյուղու գլխավոր կոլեկտորը կառուցվել է 1995 թ., ասբոցեմենտե խողովակներով, երկարությունը՝ 11.6 կմ, տրամագիծը՝ 700 մմ: Կոյուղու տեխնիկական վիճակը խիստ անբավարար է, հաճախակի են խցանումները, կան կոտրված խողովակներ:

Հիմնականում ենթակա հատվածների ընդհանուր երկարությունը 6600 մ է: Ներկայումս քաղաքը չունի կոյուղու կեղտաջրերի մաքրման կայան: Կեղտաջրերն առանց մաքրման և վարակագրման թափվում են Տաշիր գետը՝ համաճարակային հիվանդությունների լուրջ վտանգ առաջացնելով:

«Հայկոմուննախագիծ» ինստիտուտի կողմից 1990 թ. նախագծված 10.0 հազ. մ<sup>3</sup>/օր հզորությամբ մաքրման կայանի շինարարությունը չիրականացավ՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով (կայանը նախատեսված էր շրջակա բնակավայրերի ընդգրկման հաշվառումով): Վերը նշված նախագծով մաքրման կայանը նախատեսվում էր Տաշիր գետի ձախ ափին: Անավարտ մնաց նաև գետի աջ ափին կառուցվող պոմպակայանի շենքի շինարարությունը:

Նկատի ունենալով տարածքի ավելի մեծ թեքությունը (ավելի քիչ հողային աշխատանքների կատարում), սույն ուրվագծով նախատեսվում է նոր մաքրման կայանի կառուցում՝ գետի աջ ափին: Անհրաժեշտ է կատարել մաքրման կայանի վերանախագծում հզորությունն ընդունելով 6.0 հազ. մ<sup>3</sup>/օր՝ նկատի ունենալով ջրամատակարարման նորմերի ներկայիս ընդունված քանակները:

Ըստ կատարված նախնական հաշվարկների, քաղաքի մաքրման ենթակա կեղտաջրերի միջին օրական քանակը հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար կազմում է 6000 մ<sup>3</sup>/օր:

Փողոցային և միջօրային սանիտարիան կոյուղատարներով կենցաղային և արտադրական կեղտաջրերը կհավաքվեն, կենթարկվեն լրիվ կենսաբանական մաքրման, որից հետո միայն կթափվեն Տաշիր գետը՝ պահպանելով շրջակա միջավայրի պահպանության սանիտարական պայմաններն ու պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով «Մակերևութային ջրերը հոսքային ջրերով աղտոտումից պահպանելու կանոններ»-ի պահանջները:

Արդյունաբերական ձեռնարկությունների կեղտաջրերն անհրաժեշտության դեպքում միայն կմիացվեն քաղաքի կոյուղու ցանցին: Համաձայն ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի N16-ԳԱ 08/889 05.06.06 գրության, Տաշիր քաղաքի ջրամատակարարման բարելավման աշխատանքներն ընդգրկված են համաշխարհային բանկի «Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» վարկային ծրագրում: Նախատեսված նախագծմանախահաշվային կատարածքների կատարման ժամկետը՝ մինչև 2006 թ. վերջը:

**Նախագծային առաջարկություններ**

Քաղաքի ջրամատակարարման վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է.  
 - Ջրամատակարարման գործող համակարգերի՝ գլխամասային կառույցների, սնող ջրատարների վերակառուցման և վերականգնման

աշխատանքներ՝ վերացնելով կորուստները:

- Ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում՝ ըստ սույն նախագծով առաջարկված ջրամատակարարման գոտիավորման:
- Պահանջվող անհրաժեշտ տրամագծերի ճշտում՝ ըստ ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցի ջրագծերի հիդրավիկական հաշվարկի:

հաշվարկի:

- Ջրասպառողների անընդմեջ անհրաժեշտ ճնշում և ջրաբանակ ապահովելու համար իրականացնել օրվա կարգավորիչ ջրամբարների համապատասխան ծավալներ՝ իրենց սանալահպանման գոտիներով:

- Քաղաքի էլյուտրացված տարածքների, ինչպես նաև սույն գլխավոր հատակագծով նախատեսվող կառուցապատման տակ դրվող տարածքների կոյուղացում:

- Վթարված և շարքից դուրս եկած կոյուղագծերի և դիտահորերի վերակառուցում:

- Նոր մաքրման կայանի նախատեսում (նախագծված մաքրման կայանի վերանախագծում) գետի աջ ափին՝ քաղաքի հարավային մուտքի մոտ, 6.0 հազ. մ<sup>3</sup>/օր հզորությամբ:

- Նախքան Տաշիր գետը լցնելը՝ կեղտաջրերի լրիվ մաքրում և վնասագերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պահպանելու պահանջները:

### II-6.3. Էներգամատակարարում

#### II-6.3.1. Էլեկտրամատակարարում

Ներկայումս Տաշիր քաղաքի էլեկտրամատակարարման գլխավոր աղբյուր է հանդիսանում «Տաշիր» 110/35/10 կվ լարման, 2x10000 կվա հզորությամբ տրանսֆորմատորներով ենթակայանը: Կապը հանրապետության էլեկտրահամակարգի հետ իրականացվում է «Վանաձոր-2» 220/110/35/10 կվ լարման 2x125 Մվա հզորությամբ ենթակայանից՝ 110 կվ լարման մոտ 50 կմ երկարությամբ երկշրջա օդային գծերով: Քաղաքի բնակելի հասարակական, արտադրական օբյեկտների և արտաքին լուսավորության պահանջները բավարարվում են վերը նշված գլխավոր «Տաշիր» ենթակայանից: Էլեկտրամատակարարման բաշխիչ ցանցի 10 կվ լարման օդային գծերի երկարությունը 21.8 կմ է, մալուխային գծերինը՝ 0.3 կմ, 0.4 կվ լարման մալուխային գծերի երկարությունը 12.0 կմ, իսկ օդայինը՝ 62.4 կմ: Քաղաքում գործող 10/0.4 կվ լարման ենթակայանների քանակը 50 հատ է, որից 4 հատը՝ երկտրանսֆորմատորային, 46 հատը՝ մեկ տրանսֆորմատորային, ընդհանուր հզորությունը՝ 16.0 ՄՎա:

Էլեկտրաէներգիայի տարեկան գումարային ծախսը կազմում է 5950.0 հազ. կվտ.ժամ, որից կոմունալ-կենցաղայինը՝ 5400.0 հազ. կվտ. ժամ/տարի, իսկ արտադրական կարիքներինը՝ 550.0 հազ. կվտ. ժամ/տարի: Քաղաքի էլեկտրամատակարարման տեխնիկական վիճակը բավարար է:

#### Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը հաշվարկային ժամանակաշրջանի համար

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հիմք է հանդիսացել ներկայացվող գլխավոր հատակագծի տվյալները, ըստ որի Տաշիր քաղաքի բնակչության հեռանկարային ժամանակաշրջանի քանակը 25.0 հազար է:

- Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշվված է որպես հզորությունների գումար.
- Կոմունալ-կենցաղային պահանջների, հասարակական, կուլտուր կենցաղային շինությունների, ինչպես նաև արտաքին լուսավորության:
- Արդյունաբերական ձեռնարկությունների բեռնվածությունների:

Կոմունալ-կենցաղային, հասարակական, կուլտուր-կենցաղային շինությունների, արտաքին լուսավորության, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքների պահանջարկների հաշվարկը կատարված է համաձայն գործող նորմերի, ըստ որի մեկ մարդուն տարեկան հասանելի էլեկտրաէներգիայի խոշորացված ցուցանիշն ընդունված է 1700 կվտ ժամ/տարի, իսկ տարվա ընթացքում օգտագործվող ժամերի քանակը՝ 5200:

Արտադրական ձեռնարկությունների կողմից պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը հետագայում կճշտվի, քանի որ հիմնականում չեն գործում չկա տվյալներ նրանց արտադրանքի, տեսականու քանակի վերաբերյալ:

#### Տաշիր քաղաքի էլեկտրաէներգիայի գումարային պահանջարկի հաշվարկը՝ զարգացման հաշվարկային ժամանակաշրջանի համար աղ. N <5.

| N | Սպառողները                            | քանակը հազ. | մեկ մարդու համար պահանջվող էլ.էներգիայի քանակը կվտ/ժամ/տարի | Էլ.էներգիայի գումարային ծախսը հազ.կվտ ժամ/տարի | Տարվա օգտագործվող ժամերի քանակը ժամ | մասնիկ պահանջվող հզորությունը կվտ |
|---|---------------------------------------|-------------|---|--|-------------------------------------|-----------------------------------|
| 1 | Բնակչությունը                         | 25.0        | 1700  | 42500.0  | 5200                                | 8773.0                            |
| 2 | Կորուստները և չնախատեսված ծախսեր 30 % |             |   | 12750.0  |                                     | 2632.0                            |
|   | Ընդամենը                              |             |   | 55250.0  |                                     | 11405.0                           |
| 3 | Արտադրություն                         |             |   | 1200.0   |                                     | 2281.0                            |
|   | Ամբողջը                               |             |   | 56450.0  |                                     | 13686.0                           |

Ըստ կատարված հաշվարկների քաղաքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար պահանջվող հզորությունը կազմում է մոտ 14.0 ՄՎա.

- կոմունալ-կենցաղայինը՝ 11.4 ՄՎա,
- արտադրական կարիքներինը՝ 2.3 ՄՎա:

Վերը նշված պահանջարկը, ինչպես ներկայումս, այնպես էլ հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար, կբավարարվի գործող «Տաշիր» ենթակայանից, որի ընդհանուր հզորությունը 20.0 ՄՎա է:

#### Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերագինում ժամանակակից պահանջների համապատասխան:
- Համակարգի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար համակարգում 2-3 բաշխիչ կետերի իրականացում, 10/0.4 լարման ցանցային ենթակայանների անցում երկտրանսֆորմատորային կայանների:
- Նոր թաղամասերի համար անհրաժեշտ 10 կվ և 0.4 կվ լարման ցանցի նախատեսում:
- Փայտյա հենասյուների, 10 և 0.4 կվ լարման մալուխային գծերի փոխարինում նորերով:

#### II-6.3. 2. Գազամատակարարում

Տաշիր քաղաքը գազիֆիկացված է: Գազամատակարարումն իրականացվում է ՀՀ գազամատակարարման համակարգի Կրաստան-Ալավերդի-Վանաձոր բարձր ճնշման գազատարի «Հեր-հեր» գլխից սկիզբ առնող 219 մմ տրամագծով գազատարի Հերիեր-Ստեփանավան-Տաշիր հատվածից:

Համաձայն «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի Տաշիր մասնաճյուղի գրավոր տվյալների 27.06.06 թ. N 19/14 շահագործվող գազատարների ընդհանուր երկարությունը 29.6 կմ է, գործող գազակարգավորիչ կետերի քանակը 11 հատ է, որից 3 գլխ, իսկ 8-ը պզկ:

Գազաօգտագործման ընդհանուր քանակը 2005 թ. դրությամբ կազմել է 2526.0 հազ. մ<sup>3</sup>, որից կոմունալ կենցաղային կարիքների համար՝ 1945.0 հազ. մ<sup>3</sup>, արտադրական կարիքների համար՝ 581.0 հազ. մ<sup>3</sup>: Բաժանորդների ընդհանուր քանակը՝ 2296:

Ներկայումս քաղաքում գործող կաթսայատներ չկան:

#### Գազի ծախսը հաշվարկային ժամանակաշրջանի համար

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել. - Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:

- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Հասարակական նշանակության օբյեկտների և բնակչության սպասարկման ձեռնարկությունների համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Արտադրական ձեռնարկությունների պահանջարկը հետագայում կարիք ունի ճշգրտելու, քանի որ ներկայումս դրանք հիմնականում չեն գործում:

Գազամատակարարման աղբյուրը, ինչպես ներկայումս, այնպես էլ հետագայում կլինի «Տաշիր» գազաբաշխիչ կայանը:

Ըստ կատարված նախնական հաշվարկների, Տաշիր քաղաքի գազի տարեկան ծախսը հեռանկարային ժամանակաշրջանի համար կազմում է 5300.0 հազ.մ<sup>3</sup>, որից կոմունալ-կենցաղային կարիքների համար՝ 3500.0 հազ. մ<sup>3</sup>, արտադրական կարիքների համար՝ 1800.0 հազ. մ<sup>3</sup>:

#### Նախագծային առաջարկություններ

Ներկայացվող գլխավոր հատակագծի ուրվագծով քաղաքի բնակչության կենցաղային, տնտեսական, ինչպես նաև արտադրական կարիքների բավարարման համար շենքերի արդյունք է հանդիսանում բնական գազը, ինչի արդյունավետ և անվտանգ շահագործման համար առաջարկվում է.

- Գազափոխարման համակարգի վերակառուցում և վերազինում:
- Միջբնակարանային ցանցի անվտանգ շահագործում և հուսալիության բարձրացում:
- Գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի բարելավում:
- Շխառատար ուղիների համախառն ստուգումներ:
- Գազասպառման ճշգրիտ և թափանցիկ հաշվառում:
- Կառուցապատման տակ դրվող տարածքների գազամատակարարման նախագծանախահաշվային փաստաթղթերի կատարում և իրականացում:

### II-6.3.3. Ձերմամատակարարում

Մինչև 1991 թ.-ը Տաշիր քաղաքում գործել է կենտրոնացված շենքային համակարգ: Հարկաշատ բնակելի հասարակական շենքերի շեռուցման կարիքներն իրականացվում էր հինգ փոքր հզորության կաթսայատներից, տեղակայված «Տուլա-3» տիպի կաթսաներով: Արդյունաբերական օբյեկտների (Եմալապատ ամանեղենի գործարան և պանրի գործարան) շենքամատակարարումն իրականացվում էր սեփական կաթսայատներից «Տուլա-3» տիպի կաթսաներով:

Շուրջ 15 տարի չի գործել քաղաքի շենքային համակարգը, շարքից դուրս են եկել ամբողջ արտաքին և ներտնային շենքային ցանցերը, թալանվել են կաթսայատները, սպառել են շահագործման գերնորմատիվային ժամկետները: Համակարգի գործունեության ընթացքում սպառողների կողմից կային մշտական բողոքներ, մեծ էին շենքային կորուստները: Դրանք հասնում էին 30-40 %-ի, ինչի հետևանքով կաթսայատներում ավել գազ էր այրվում, որն էլ իր հերթին բերում էր օրական գումարային ծախսերի, ինչպես նաև օդի աղտոտվածության: Ցածրահարկ բնակելի շենքերի և առանձնատների շեռուցումը, ինչպես նախկինում, այսպես էլ ներկայումս, իրականացվում է բնակարանային փոքր հզորության կաթսաներով կամ գազավառարաններով:

Տաք ջրի ստացումն իրականացվում է գազասարքավորումների միջոցով կամ էլեկտրականությամբ: Ելնելով իրավիճակից, բարձրահարկ բնակելի և հասարակական շենքերի շեռուցումը նախատեսվում է իրականացնել լուրջ շեռուցման համակարգով, կառուցելով առանձին կաթսայատուն մեկ կամ մի քանի շենքերի համար՝ կարճ շենքային ցանցերով:

### Նախագծային առաջարկություններ

Այսպիսով, Տաշիր քաղաքի բազմաբնակարան, քրթեջային, հասարակական, առողջապահական, մշակութային, վարչական շենքերի շեռուցման կարիքների բավարարումը նախատեսվում է ապակետրոնացված շենքամատակարարման համակարգով:

- Կառուցել առանձին փոքր հզորության կաթսայատուն մեկ կամ մի քանի շենքերի համար՝ կարճ արտաքին ցանցերով:
- Հնարավոր տարբերակ է նաև շենքերում սպառող շենքերի տանիքներում փոքր հզորության կաթսայատուն տեղադրումը, որով կբավարարվի տվյալ շենքի շենքային ծախսերը՝ չունենալով արտաքին շենքային ցանց:
- Վերը նշված դեպքերում, ինչպես նաև առանձին բնակարաններում շենքային կարիքները ապահովելու համար փոքր հզորության կաթսայի կամ վառարանի տեղադրման դեպքում անվտանգության պահանջների խստագույն պահպանում:

### II-6.4. Կապ

Տաշիր քաղաքի հեռախոսային կապն իրականացվում է «Արմենթել» ՓԲԸ-ի «Տաշիր» մասնաճյուղի 3100 համարով ավտոմատ կայանի միջոցով: Կայանում գործում է 2800 համար: Կայանի հզորությունը կմեծացվի պահանջարկի դեպքում:

### II-7. Շրջակա միջավայրի պահպանություն

#### II-7.1. Շրջակա միջավայրի քաղաքաշինական-էկոլոգիական վիճակի վերլուծություն

● Շրջակա միջավայրի պահպանության հիմնական պահանջները սկզբունքորեն կիրառվել են նախագծման ընթացքում: Յուրաքանչյուր քաղաքաշինական-հատակագծային լուծում (քաղաքային տարածքի աճի սահմանափակում, անտառատնտեսության և գյուղատնտեսական հողերի առավելագույն պահպանում, բնական լանդշաֆտների գնահատում, բնական ռեսուրսների պոտենցիալ հնարավորությունների բացահայտում, ռեկրեացիոն գոտիների կազմակերպում, ինժեներական պաշտպանության միջոցառումների մշակում, ինժեներական, տրանսպորտային, տեխնիկական ենթակառուցվածքների կատարելագործում) իր մեջ ներառում է շրջակա միջավայրի բարելավման, տարածքային և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմունքները:

● Շրջակա միջավայրի պահպանության հիմնական սկզբունքները (կառուցապատման համար տարածքների բարեկապատության աստիճաններ, գեոդինամիկ պրոցեսներ և երևույթներ, սեյսմատեկտոնական պայմաններ, լանդշաֆտների դասակարգում և գնահատում) դիտարկված են նաև «Տարածքի համալիր գնահատական» (I-3.1, I-3.2) և «Քաղաքի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում» ենթադրվածներում:

- Սույն ենթագլխում տրված են շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները՝ հաշվի առնելով.
  - Անտրոպոգեն բեռնվածության չափը (մթնոլորտային օդի, հողածածկույթի, մակերևութային և խորքային ջրերի, բնական այլ տարբեր աղտոտվածության աղբյուրները և աղտոտվածության բնութագրիչը):
  - Բնական միջավայրի ինքնամաքման հատկանիշները:

#### II-7.2. Մթնոլորտային օդի պահպանություն

Տաշիր քաղաքի տեղադրվածությունը Լոռու դաշտի հյուսիսային մասում, Տաշիր գետի լայն գետահովտում, շրջափակվածությունը խոնավ լեռների (Մովսեթի) ճյուղավորություններով, անհողմությունների կրկնախողովունով (ծմռանը՝ 39 %, գարնանը՝ 37 %, ամռանը՝ 44 %, աշնանը՝ 42 %), բարձր հարաբերական խոնավությունը (միջին տարեկան՝ 74 %), քամու գերակշռող ուղղությունները գետահովտի ուղղությամբ (հյուսիսային, հարավարևմտյան), փոքր արագությունները (2.1 մ/վրկ) պայմանավորել են մթնոլորտի աղտոտվածության միջին պոտենցիալ (ամռանը՝ 4 կարգի, ծմռանը՝ 4-5 կարգի), որը սահմանափակում է շրջակա միջավայրը (հատկապես մթնոլորտային օդը) աղտոտող արդյունաբերական օբյեկտների տեղադրումը:

Ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի բնակավայրի գոյություն ունեցող (9.5 հազ.) և հեռանկարային (25.0 հազ.) բնակչության քանակով նախագծում հաշվարկվել է օդն աղտոտող տարրերի միջինացված քանակները.

աղ. N <6.

| Բնակչության քանակը | Կոնցենտրացիան օդում մգ/մ <sup>3</sup> |                |               |      |
|--------------------|---------------------------------------|----------------|---------------|------|
|                    | ծմբական գազ                           | ագոտի երկօքսիդ | ածխածնի օքսիդ | փոշի |
| 15-50              | 0.1                                   | 0.04           | 3.0           | 0.4  |

Տաշիր քաղաքում 01.01.2006թ. դրությամբ մթնոլորտային օդն աղտոտող արդյունաբերական օբյեկտները չկան: Քաղաքում գործում են մի քանի ՄՊԸ-ներ, որոնք օդը չեն աղտոտում և թափոններ չեն առաջացնում:

Մթնոլորտային օդի աղտոտվածություն է առաջացնում քաղաքի կենտրոնով անցող Երևան-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման միջաշտակալ ավտոմայրուղով իրականացվող տարանցիկ փոխադրումները:

Ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի (տես օգտագործված գրականությունը) մայրուղիների ինտենսիվության մեծացման և բնակչության լրիվ դեմոգրաֆիկական տարողունակության տեղաբաշխման պայմաններում քաղաքում արտանետումների քանակը կարող է հասնել՝ ածխածնի օքսիդինը՝ 2.5-15 հազ. տոննա/տարի, իսկ ագոտի երկօքսիդինը՝ 0.37-1.5 հազ.տոննա/տարի:

Փողոցային ցանցը նույնպես պատճառ է հանդիսանում աղմուկի դիսկոմֆորտային պայմանների առաջացմանը: Հաշվի առնելով, որ աղմուկի էվոլյուցիոն չափման համար տվյալներ չկան, կատարվել են հաշվարկներ աղմուկի մակարդակի որոշման համար՝ օգտագործելով աղմուկի աղբյուրի ակուստիկ բնութագրերն ըստ գործող ստանդարտների և մեթոդական հանձնարարականների միջինացված տվյալների (մանրամաս տրված է «Տրանսպորտի հեռանկարային զարգացումը» ենթագլխում): Քաղաքի բնակելի գոտում աղմուկի հաշվարկային մակարդակը կհասնի 52.0-54.5 դԲ (թոյլատրելի նորմերը՝ 55 դԲ ցերեկը, 45 դԲ գիշերը):

Մթնոլորտային օդի և աղմուկի մակարդակի աղտոտվածության օջախների ազդեցությունը փոքրացնելու նպատակով նախագծում նախատեսված է.

- Արդյունաբերական օբյեկտների վերագործարկում և նորերի կառուցում միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող առաջավոր տեխնոլոգիաներով:

- Տարանցիկ միջաշտակալ ճանապարհի դուրսբերում քաղաքից:
- Հասարակական կանաչ զանգվածների մեծացում՝ հասցնելով նորմատիվային չափերին, ճանապարհների, փողոցների և այլ օբյեկտների (արդյունաբերական, ագրարարդյունաբերական օբյեկտներ, գերեզմանոցներ) սանապահական գոտիների կանաչապատում (տրված է «Քաղաքի հատակագծային կառուցվածքը» ենթագլխում և համապատասխան գծագրում):

**II-7.3. Մակերևութային և խորքային ջրերի պահպանություն**

- Տաշիր քաղաքի տարածքով հոսում է Տաշիր գետը, իսկ քաղաքային տարածքի (հիմնականում Տաշիր գետի աջափնյա մասը) տեղադրված է Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրի արևելյան մասում:
  - Հանքավայրի խոշոր ջրատար հորիզոնը, որը սնվում է հունավ լեռներից, ուղղված է դեպի հարավ-արևելք և բեռնաթափվում է Տաշիր և Ձորագետ գետերի հովիտներում: Ջրատար հորիզոնը բեռնաթափվում է աղբյուրների երեք հզոր խմբերով (Լովոսեցևո՝ 505.2 /վրկ/, Ալյայուտիկ՝ 345.5 /վրկ/, Կիզկալայի (Մխթալա)՝ 653.0 /վրկ/ պաշարներով), որոնք օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:
    - Բացի վերը նշված հիմնական ջրատար հորիզոնից, մակերևութային 0.5-10 մ խորության վրա տարածված է այլուժիլա-պրոյուվիալ ստովածքների հետ կապված ջրատար հորիզոն (0.5-25.0 մ հզորությամբ), որի պաշարները կազմում են 24.7 /վրկ/ «B» խմբով: Այդ ջրերը հորատանցքերի միջոցով կարող են օգտագործվել ոչ կենտրոնացված ոռոգման նպատակով:
      - Տարածված է նաև հրաբխային ստովածքների հետ կապված ջրային հորիզոն՝ 28.8 /վրկ/ (C1-խմբի):
  - Լոռու խմելու ջրերի հանքավայրի և Տաշիր գետի ջրերն աղտոտվում են Տաշիր քաղաքի կոմունալ-կենցաղային ջրերից, որոնք կոյուղատարով հեռացվում են և առանց մաքրման լցվում Տաշիր գետը: (ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Լոռու մարզային կենտրոնի պետի նամակը):
    - Այսպիսով, քաղաքի և շրջակա բնակավայրերի ոչ լրիվ կոյուղացման, գոյություն ունեցող կոյուղատարի մաշվածության և մաքրման կայանի բացակայությունը վտանգ է սպառնում խմելու ջրի հանքավայրին և Տաշիր գետին:
  - Տաշիր գետը սկիզբ է առնում հունավ լեռներից, քաղաքի հարթ տարածքով հոսում է դանդաղ՝ առաջացնելով ճահճապատ տեղամասեր: Գետը սնվում է գրունտային (30 %), ձնհալքի (20-25 %) և անձրևաջրերով: Գարնանային հորդացումները սկսվում են ապրիլի կեսերից և վերջանում հունիսի վերջին տասնօրյակում:
    - Տաշիր գետը նաև հեղեղաբեր է, հեղեղները կարող են վնաս հասցնել շրջակա միջավայրին: Քաղաքի տարածքում գետի ափերը ամրացված են հենապատերով, գետի լայնությունը համապատասխանում է հեղեղների, վարարումների առավելագույն ելքերին: Բայց գետի հունը ծանրաբեռնված է բերվածքներով, որի հետևանքով առավելագույն ելքերը կարող են ողողել քաղաքի տարածքը: Առաջնահերթ անհրաժեշտ է գետի հունի մաքրում, հենապատերի վերանորոգում:
      - Այսպիսով, քաղաքի և շրջակա բնակավայրերի և խորքային ջրերն աղտոտումից պաշտպանելու համար նախատեսված է.
        - Արդյունաբերական և ագրոարդյունաբերական օբյեկտների տեղադրում միջազգային ստանդարտներին համապատասխանող, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաներով, օբյեկտների սանալահիպանման գոտիների ապահովում:
        - Կոյուղու ցանցի վերանորոգում, վերագինում՝ կոյուղու մաքրման կայանի կառուցումով քաղաքի հարավային հատվածում միջազգային ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիաներով (ապահովելով սանիտարական պահպան գոտին), իրականացնելով կեղտաջրերի եռաստիճան մաքրումը (մեխանիկական, ֆիզիկական-քիմիական, կենսաբանական), հետագա խորը մաքրումով:
        - Ջրամատակարարման ցանցի վերակառուցում, վերագինում՝ ջրամատակարարման գոտիների հաստատումով:
        - Ջրի որակի ապահովման նպատակով բակտերիոլոգիական և քիմիական լաբորատորիաների կառուցում և վերակառուցում:
        - Ջրամատակարարման քլորակայանների վերակառուցում, սոր տիպի քլորատորների տեղադրում:
        - Ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի տվյալների բազայի ստեղծում:
        - Տաշիր գետի հունի մաքրում, հենապատերի վերանորոգում:
        - Հակահեղեղային միջոցառումների իրականացում (Տաշիր գետի աջափնյա վտակների վրա):

**II-7.4. Տարածքային և հողային ռեսուրսների պահպանություն**

**II-7.4.1. Տարածքային ռեսուրսների պահպանություն**

Տաշիր քաղաքը տեղակայված է Լոռու սարահարթի վրա, Տաշիր գետի հովտում: Քաղաքի տարածքը հարթ է, բացարձակ բարձրությունները տատանվում են 1475-1530 մ, միջին բարձրությունը՝ 1507 մ: Քաղաքային տարածքը շրջապատված է գյուղատնտեսական նշանակության բարձր որակի հողերով: Միայն քաղաքի հյուսիսային, հյուսիսարևմտյան, հյուսիսարևելյան, հարավարևմտյան մասերում տարածված են ցածրաբժեք արոտավայրեր: Տարածքի եկոլոգիական հավասարակշռության պահպանման, տարաբնակեցման համակարգի անհավասարակշռության աստիճանական վերացման, ինչպես նաև գյուղատնտեսական հողերի պահպանման նպատակով քաղաքի համար սահմանված է տարածքային աճի սահմանափակման ռեժիմ՝ ներքաղաքային տարածքային ռեզերվների օգտագործմամբ (քաղաքի հյուսիսային, հյուսիս-արևմտյան, հարավ-արևմտյան, հարավ-արևելյան հատվածներում):

Բնակելի բոլոր թաղամասերի համար ընտրված են բնակչության և կառուցապատման նորմերին համապատասխանող խտություններ, մշակված են ինժեներական նախապատրաստման միջոցառումներ՝ տարածքների կայունությունն ապահովելու նպատակով:

**II-7.4.2. Հողաբուսական ծածկույթի պահպանություն**

● Տաշիր գետի գետահովիտը, որտեղ տեղադրված է Տաշիր քաղաքը, գտնվում է լեռնատափաստանային գոտում: Գոտու հողերը հիմնականում օգտագործվում են որպես խոտհարքներ: Այդ հողերը հաճախ կոչվում են «Ճալաքարային սևահողեր», քանի որ դրանց կտրվածքում 25-50 սմ խորության վրա կուտակված են կավախառն ճալաքարային շերտերը: Հողերը հիմնականում օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով (խոտհարքեր, վարելահողեր): Տաշիր քաղաքում տնամերձ հողամասերն օգտագործվում են որպես այգիներ և բանջարանոցներ: Գոտու բուսական ծածկույթը ներկայացված է մարգագետնատափաստանային բուսական խմբակցություններով: Խոտհարքներում գերիշխում են կատվաբարձը, անմոռուկը, թթվիները, խոշոր կակաչները, անիսոնը, իրանուկները, պարսկական լվածաղիկը և օշոշը: Ռեիեֆի առավել գոգավոր մասերում կան լճակներ, որոնցիցի մեծ մասն արդեն բուսակալված են բոշխի կամ ջրոսպի թափուտներով:

Միանգամայն հնարավոր է միջամտել լճակների (քաղաքի հյուսիսային, հարավային մասերում) հետագա բուսակալման պրոցեսին և ընդհատել այն՝ կորստելով ու դուրս հանելով կուտակված օրգանական գանգվածը, որը կարելի է օգտագործել որպես օրգանական պարարտանյութ կամ վառելիք:

Լճակների պահպանումն ունի լանդշաֆտային և ջրատնտեսական նշանակություն:

- Տաշիր քաղաքի հողածածկույթին վնաս են հասցնում Տաշիր գետի և դրա վտակների (հատկապես աջափնյա) հեղեղումները: Սույն նախագծով մշակված են հակահեղեղային միջոցառումներ (տրված է I-3.2.1.5. ենթաբաժինում):
- Հողածածկույթին վնաս են հասցնում նաև կենցաղային կոշտ թափուկները: Տաշիր քաղաքում գոյություն ունեցող (քաղաքից 3 կմ հարավ, Երևան-Տաշիր ճանապարհի ձախ կողմում) հարմարեցված աղբավայրը չի համապատասխանում սանալահիպանման նորմերին: Նախագծով աղբամշակման պահանջը հաշվարկված է ըստ գործող նորմերի (ՏՊՈՒ 2 07.01.89) գոյություն ունեցող (9.5) և հեռանկարային (25.0 հազ.) բնակչության համար:

աղ. N <-7.

| Կենցաղային կոշտ թափուկներ                                 | Կենցաղային աղբը 1 մարդ/տարի հաշվարկով (կգ) | 9.5 հազ. բնակչ. համար (հազ. տոննա/տարի) | 25.0 հազ. բնակչ. համար (հազ. տոննա/տարի) |
|---|--|---|--|
| Քաղաքում ընդհանուր քանակը հասարակական շենքերի հաշվառումով | 200-250                                    | 2.3                                     | 6.2                                      |

Նախագծով նախատեսված է սոր աղբավայրի քաղաքից հարավ-արևելք ընկած տարածքում (նախկին անասնապահական ֆերմայի տեղում) սանալահիպանման նորմերին համապատասխան:

- Հողային ծածկույթը, ինչպես նաև մակերևութային և խորքային ջրերն աղտոտվում են նաև տնամերձ և սեփականաշտորված հողամասերում, որտեղ մանր հողակտորների պայմաններում անկանոն և չկառավարվող է դարձել հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը:
- Նախագծով նախատեսվում է պարարտանյութերի և թունաքիմիկատների կենտրոնացում համայնքի ենթակայության տակ՝ համապատասխան տեխնոլոգիաներով պահեստների կառուցումով, ինչպես նաև մասնագիտական մակարդակով պարարտանյութերի և թունաքիմիկատների չափաբաժինների որոշում, որը հնարավոր է փոքր և միջին ֆերմերային տնտեսությունների կայունացման ճանապարհով:
- Հողային ծածկույթի, ինչպես նաև մակերևութային և խորքային ջրերի աղտոտման աղբյուր են հանդիսանում գերեզմանոցները: Տաշիր քաղաքի գերեզմանոցը գտնվում է քաղաքի արևմտյան մասում, արդյունաբերական գոտում: Գերեզմանոցի սանալահիպանման գոտին պահպանված է, ունի ռեզերվային տարածք: Գերեզմանոցը ցանկապատված է:
- Որպես առաջնահերթ միջոցառում նախատեսվում է ցանկապատի պարագծով կանաչապատում:
- Հողերի աղտոտման տեսակետից առավել վտանգավոր է ավտոմոբիլային տրանսպորտի գործունեությունը, որը հիմնականում պոլիբրոմացված արոմատիկ ածխաջրածինների (ԳՎԱ) աղբյուր է: Արտանետումների քանակը Տաշիր քաղաքում տրված է II-5.4. «Տրանսպորտի հեռանկարային զարգացումը» ենթաբաժինում:
- Ավտոտրանսպորտից հողերի աղտոտման աղբյուրը փոքրացնելու նպատակով նախատեսված է տարանցիկ ճանապարհի դուրս բերում քաղաքից, ճանապարհների և փողոցների սանալահիպանման գոտիների կանաչապատում, ինչպես նաև հասարակական կանաչի մեծացում՝ հասցնելով գործող նորմերին:

- Այսպիսով, հողաբուսական ծածկույթը դեգրադացումից, աղտոտումից պաշտպանելու նպատակով սույն նախագծով նախատեսվում է.
  - Հակահեղեղային միջոցառումներ,
  - Լոր աղբավայրի տարածքում, ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած, միջազգային ստանդարտներին համապատասխանող աղբամբարի կառուցումով (փոքր մոդուլներով):
  - Հասարակական կանաչ տարածքների համապատասխանեցում գործող նորմերին:
  - Տարբեր օբյեկտների (արդյունաբերական, ագրոարդյունաբերական օբյեկտներ, պահեստներ, գերեզմանոցներ, աղբավայրեր, ճանապարհներ, փողոցներ) սանազանական գոտիների սահմանում և կանաչապատում:
  - Փոքր և միջին չափի ֆերմերային տնտեսությունների ստեղծում՝ ագրոտեխնիկական, ագրոմեխանիկական միջոցառումների իրականացման հնարավորությունների ստեղծում:

### II-7.5. Պատմամշակութային հուշարձանների պահպանություն

Տաշիր քաղաքի դիրքը երևան-Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական և Տաշիրը Գյումրի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի հետ կապող հանրապետական նշանակության ճանապարհների խաչմերուկում, քաղաքի շրջակայքի, ինչպես նաև տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների առկայությունը, տարածաշրջանի համայնքների գոյություն ունեցող և նախագծվող կապերը Տաշիր քաղաքի հետ հնարավորություն են տալիս քաղաքը դիտարկելու որպես հենակետային բնակավայր:

Տաշիրի սույն նախագծով նախատեսված ռեկրեացիոն ենթագոտու պատմամշակութային հուշարձանների վերահսկողությունը և տուրիստական երթուղիների կազմակերպումն իրականացնելու համար (հուշարձանների անվանացանկը և բնութագրերը տրված են «Տարածքի համալիր գնահատականը» ենթագլխում):

Սույն նախագծով «Պատմամշակութային հուշարձաններ» գծագրի վրա (ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության տվյալներով) տրված են.

- Հուշարձանների բուն տարածքները, որտեղ արգելվում են ցանկացած շինարարական կամ այլ բնույթի աշխատանքներ,
- Հուշարձանների խմբային պահպանման գոտիները,
- Մշակութային շերտի պահպանման գոտիները (պեղման գոտի),
- Պոտենցիալ պեղման գոտիները:

Վերջին երեք գոտիներում ցանկացած շինարարական աշխատանքներ կարելի է սկսել միայն պեղումների ավարտից հետո: Նախագծով պահպանվում են բոլոր վերը նշված գոտիների սահմանված ռեժիմները:

### II-8. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ

#### Ներածություն

Քաղաքի տարածքի ինժեներատեխնիկական նախապատրաստումը, տարերային և տեխնածին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների իրականացումը նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորման ապահովմանը:

Քաղաքացիական պաշտպանության կարևորագույն միջոցառումներից է բնակչության պատասխարումը ապաստարաններում, որոնք ներկայումս քաղաքի տարածքում բացակայում են: Գլխավոր հատակագծում ներկայացված ապաստարանների անհարժեշտ ծավալները հաշվի առնելով պետք է ստեղծվեն ապաստարաններ, դրանք պահվեն պատրաստ վիճակում և օգտագործվեն առաջին իսկ անհրաժեշտության դեպքում:

Քաղաքի գլխավոր հատակագծում քաղաքացիական պաշտպանության հարցերին լուծումներ տալու համար հիմք են հանդիսացել «Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նախագծման «Гражданской»-ի ВСН ГО - 38-82 և ВСН ГО - 38-83 հրահանգները»:

#### Ընդհանուր բնութագիրը

Տաշիր քաղաքը գտնվում է Թումանյան երկաթուղային կայարանի հյուսիսարևմտյան կողմում, 47 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջավոր ճյուղը պանրագործությունն է, որը հիմնված է զարգացած անասնապահության և համապատասխանորեն կերային կուլտուրաների լայնորեն մաշկման վրա:

Քաղաքում գործում են երեք հանրակրթական միջնակարգ դպրոց և պրոֆտեխնուսումնարան:

#### Տարերային վտանգավոր երևույթները

Տաշիր քաղաքը ՀՀԸՆ-ՈՒ 2.0294 ՀՀԸՆ-ՈՒ 2. 0306 նորմատիվ սեյսմիկ շրջանացման քարտեզների համաձայն, տեղակայված է երկրորդ գոտում, որտեղ հնարավոր ուժեղ երկրաշարժերի դեպքում գրունտների հորիզոնական առավելագույն արագացումները գնահատված են 0,3 g. ինտենսիվությունը 8-9 բալ: Քաղաքը տեղակայված է Ձորագետի Տաշիր վտակի ավազանում, որտեղ գեոմորֆոլոգիական տեսակետից փոքր բեցություններով ներկայացված սարահարթ է: Տարածքին բնորոշ են մակերեսային ողողումները, սեզոնային հատկապես գետերի զարնանային հեղեղումներն ու առափնյա տարածքների ջրածածկումները:

#### Տեխնածին վտանգավոր երևույթները

Տաշիր քաղաքում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան:

Քաղաքում տեխնածին արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում՝

- կոմունալ և կենցաղային գազատարները,
- քաղաքի խմելու ջրագծերը, էներգամատակարարման և կոյուղագծերը,
- կամուրջները,

Տեխնածին արտակարգ իրավիճակներից խուսափելու համար անհարժեշտ է՝

- քաղաքի համար կառուցել կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան և ապահովել դրա արդյունավետ աշխատանքը.

- ապահովել քաղաքի կոմունալ, կենցաղային գազատարների, խմելու ջրագծերի կոյուղագծերի, էներգամատակարարման գծերի, ճանապարհների անխափան աշխատանքը՝ ժամանակին կատարելով դրանց պլանային նախագուշակական վերանորոգման պրոֆիլակտիկ աշխատանքները.

- բենզազագացվորման կայանները տեղակայել գոյություն ունեցող նորմաների համաձայն.
- արտակարգ իրավիճակներում քաղաքի բնակչության նվազագույն կարիքները բավարարելու նպատակով ստեղծել խմելու ջրի պահուստային պաշարներ.

- բնակչության պաշտպանության նպատակով կառուցել և կահավորել ապաստարաններ.
- բարձրացնել էլեկտրաէներգետիկ համակարգերի հուսալիությունը՝ բացառելով բնակչության էլեկտրամատակարարման երկարատև անջատումները.

- բնակարանների գազով տաքացման համար օգտագործել վառարաններ, որոնք ունեն գազի այրման արգասիքների երաշխավորված հեռացման հնարավորություն.

- ապահովել երկաթուղով թունավոր, հրդեհապայթյունավտանգ նյութերի տեղափոխման անվտանգությունը:

#### Նախագծի հիմնական դրույթները

- Քաղաքի բնակչության թվաքանակը՝ 17,3 հազար, (հեռանկարայինը՝ 25.0 հազ. մարդ),

- Քաղաքի տարածքը՝ 327 հա,

- Հարկայնությունը՝ 1-5 հարկ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքը գտնվում է սեյսմիկ վտանգի գոտում, նախատեսվում են վտանգավոր օբյեկտների, բնակելի շենքերի և բնակչության կենսապահովման օբյեկտների պաշտպանության ուղղված միջոցառումներ:

- Արտակարգ իրավիճակներում քաղաքի տարածքի ռազմապաշտպանության և կենսագործունեության կայունության բարձրացման համար նախագծում նախատեսված է տարբեր ֆունկցիոնալ գոտիների և համայնքի տրանսպորտային ցանցի մանրամասն լուծումներ:

- Մայրուղիների և փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, ընդունված է նվազագույնը 12.0 մ, որպեսզի շենքերի և կառույցների փլուզման դեպքում ապահովվի փրկարարական ստորաբաժանումների մոտեցումը:

- Ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրված է քաղաքի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խողաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում:

- Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, համատեղված է խմելու և հակահրդեհային ծախսերը մեկ ջրատարով:

- Նախատեսվում է քաղաքի ռադիոֆիկացում և հեռախոսաֆիկացում:

#### Քաղաքի բնակչության պատասխարումը

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատասխարումը պետք է իրականացվի հետևյալ պաշտպանական կառույցներում՝  
 - Ստորգետնյա հատուկ շինություններում՝ ապաստարաններում, նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում:  
 - Բնակելի ֆոնդի տարածքներում՝ առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես ապաստարաններ:  
 Բնակչության պատասխարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝  
 - Պաշտպանական կառույցների վաղորդ կառուցումը:  
 - Պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում:  
 - Պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը:  
 - Արագ կառուցվող ապաստարանների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:  
 Արտակարգ իրավիճակներում քաղաքի կենսագործունեությունն ապահովող ձեռնարկությունների ապաստարաններում պատասխարվում են նշված ձեռնարկությունների աշխատակիցները:  
 Նկուղային և այլ խորացված տարածքներում, պատասխարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում պատասխարվում է մնացած բնակչությունը:  
 Տաշիր քաղաքում ապաստարաններ չկան: Անհրաժեշտ է ապաստարանները նախատեսել ըստ ներկայացվող հաշվարկի:

**Բնակչության ապաստարաններով ապահովման հաշվարկ**

Տաշիր քաղաքի ներկայիս բնակչության թիվը կազմում է 17,3 հազար մարդ:

աղ. N <-8.

| N  | Բնակչության խմբեր   | Ներկա ժամանակահատվածում |                                   | Հաշվարկային ժամկետում |                                   |
|----|---|-------------------------|-----------------------------------|-----------------------|-----------------------------------|
|    |   | Թվաքանակը (հազ. մարդ)   | Ենթակա են պատասխարման (հազ. մարդ) | Թվաքանակը (հազ. մարդ) | Ենթակա են պատասխարման (հազ. մարդ) |
| 1  | 2   | 3                       | 4                                 | 5                     | 6                                 |
| 1. | Աշխատակարար գտնվող բնակիչներ  | 6,5                     | 5,4                               | 9,7                   | 8,0                               |
| 2. | Տանը գտնվող չաշխատող բնակիչներ  | 4,3                     | 3,9                               | 7,5                   | 6,9                               |
| 3. | Ուսման վայրում գտնվող ուսանողներ, դպրոցականներ, նախադպրոցական երեխաներ      | 3,6                     | 3,4                               | 4,2                   | 3,9                               |
| 4. | Տնային պայմաններում գտնվող ուսանողներ, դպրոցականներ, նախադպրոցական երեխաներ | 2,9                     | 2,9                               | 3,6                   | 3,5                               |
|    | Ընդամենը  | 17,3                    | 15,6                              | 25,0                  | 22,3                              |

**Ապաստարանների ընդհանուր մակերեսների հաշվարկ՝ ըստ խմբերի**

աղ. N <-9.

| N  | Բնակչության խմբեր                                     | Ներկա ժամանակահատվածում |  | Հաշվարկային ժամկետում |  |
|----|---|-------------------------|--|-----------------------|--|
|    |   | Բնակչության թվաքանակը   | Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ <sup>2</sup> | Բնակչության թվաքանակը | Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ <sup>2</sup> |
| 1  | 2   | 3                       | 4  | 5                     | 6  |
| 1. | Նախադպրոցական տարիքի երեխաներ՝ իրենց խնամակալների հետ | 5200                    | 6240   | 8000                  | 9600   |
| 2. | Քաղաքի մնացած բնակչությունը                           | 12100                   | 9075   | 17000                 | 12750  |
|    | Ընդամենը  | 17300                   | 15315  | 25000                 | 22350  |

**Ծանոթագրություն.**

- Անհրաժեշտ ծավալով ապաստարանների ընդհանուր մակերեսը հաշվարկվել է գործող նորմաների համաձայն: Նախատեսվող մակերեսների չափերում հաշվի են առնվել նաև սանիտարական, պահեստային և այլնի համար նախատեսվող անհրաժեշտ օժանդակ մակերեսները:

**Բնակչության իրազեկումը և տեղեկացումը**

Պաշտպանական կառույցներում բնակչության պատասխարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով՝  
 - շչակի անընդհատ հնչեցման դեպքում («Օդային տագնապ» ազդանշան) բնակչությունն անմիջապես պատասխարվում է պաշտպանական կառույցներում:

- շչակի անընդհատ հնչեցման դեպքում («Ուշադրություն բոլորին» ազդանշան) բնակչությունը պարտավոր է միացնել հեռուստացույցները և ռադիոընդունիչները, որոնցով փրկարարական պետական մարմինների կողմից տրվում են հաղորդագրություններ տեղանքի քիմիական կամ ճառագայթային վարակի սպառնալիքի կամ դրանց առաջացման և բնակչության գործողությունների մասին ու գործում՝ համաձայն այդ հաղորդագրությունների:

Ստանալով համապատասխան ազդանշան՝ պաշտպանական կառույցներն սպասարկող խմբերի և օդակների անձնակազմերը բերվում են պատրաստակառության և ժամանելով իենց աշխատատեղերը, պաշտպանական կառույցները պատրաստում են պատասխարվողների ընդունման համար:

Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության պատասխարման համալիր միջոցառումներ:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատասխարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված պլանների համաձայն:

Աշխատանքային հերթափոխի աշխատողներն ու ծառայողներն օբյեկտների համապատասխան պաշտոնատար անձանց ղեկավարությամբ զբաղեցնում են պաշտպանական կառույցները՝ համաձայն օբյեկտի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության պետի կողից նախապես մշակված պլանների, իսկ անհատական բնակարաններում ապրողները՝ իրենց հարմարեցված նկուղները և այլ շինությունները:

**Բնակչության տարահանումը**

Քաղաքի վրա հակառակորդի անմիջական հարձակման դեպքում բնակչության լրիվ տարահանում չի պլանավորվում: Բնակչության հրատապ վերաբնակեցումը քաղաքի առանձին տարածքներից հնարավոր է հակառակորդի կողմից հարձակման ժամանակակից միջոցների օգտագործման դեպքում, որի ընթացքում կարող են առաջանալ քիմիական, ճառագայթային, մանրէաբանական վարակի օջախներ:

Տարերային աղետներից բնակչության համար առավել մեծ վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, որոնց դեպքում որպես պաշտպանության հիմնական ձև հանդիսանում է բնակչության տարահանումը անվտանգ վայրեր:

Աղետից հետո իրականացվում է այն շենքերի բնակիչների տարահանումը, որոնցում բնակվել հնարավոր չէ:

Տեխնածին աղետների դեպքում պաշտպանական հիմնական ձևը բոլոր միջոցներով բնակչության դուրս բերումն է, տարահանումը վարակման օջախից քամու հակառակ ուղղությամբ:

Ներկայումս Տաշիր քաղաքի բնակչության տարահանման պլանը մշակման ընթացքի մեջ է և վերջնական որոշված չեն տարահանման ուղիներն ու բնակավայրերը, որոնք քաղաքից պետք է ունենան առնվազն 20 կմ հեռավորություն: Հարցի լուծման համար պետք է հաշվի առնվեն տարահանման հետևյալ ձևերն ու միջոցները՝

- քաղաքի բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարայուններով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարայուններով, ինչպես նաև երկաթուղային շարժակազմերով:

- առանձին դեպքերում տարահանման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

**Արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքի կառավարման կազմակերպումը**

Աղետի սպառնալիքի կամ առաջացման վտանգի դեպքում կառավարումն իրականացվում է քաղաքի կառավարման կետից (քաղաքապետի աշխատասենյակ) և Լոռու մարզային փրկարարական վարչությունից:

Օպերատիվ խումբը Ժ+45 րոպեի ընթացքում զբաղեցնում է հիմնական կառավարման կետը և Ժ + 60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն:

Մարզային փրկարարական վարչության անձնակազմը Ժ+45 րոպեի ընթացքում վամանում է և Ժ + 60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն և անհրաժեշտ փրկարարական աշխատանքեր:

Աղետի սպառնալիքի կամ առաջացման դեպքում կառավարումը կազմակերպվում է Լոռու մարզպետի կողմից և իրականացվում է կառավարման հիմնական կետից: Անհրաժեշտության դեպքում կառավարումն իրականացվում է պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

Անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՍ) պահանջվող քանակի հաշվարկ՝ ըստ տարիքային խմբերի

աղ. N <-10.

|    |   |                 |   |
|----|---|-----------------|---|
| <2 | Բնակչության թվաքանակը՝ ըստ տարիքային խմբերի | Ընդամենը (մարդ) | Պահանջվող ԱՊՍ-ի քանակը (հատ) և մակերեսը |
|----|---|-----------------|---|

|    |                                   |               |                             |                            |
|----|-----------------------------------|---------------|-----------------------------|----------------------------|
|    |                                   |               | Քանակը գումարած 10% պահուստ | Մակնիշը                    |
| 1. | 0-2 տարեկան                       | 1700          | 1870                        | Ս.Հ                        |
| 2. | 3-14 տարեկան                      | 6500          | 7150                        | թվ-5<br>թվ-7<br>(մանկական) |
| 3. | 15-18 տարեկան և ավելի<br>Ընդամենը | 9100<br>17300 | 10010<br>19030              | թվ-5, թվ-7                 |

- Բնակչությանը ԱՊՄ բաշխումը, համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 679 որոշման՝ իրականացվում է երկրորդ հերթին: Բաշխումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

**II-9. ՀՀ Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ\***

| Ցուցանիշները<br>1.   | Զախման միավորը<br>2.          | Գոյություն ունեցող<br>3.                     | Հեռանկարային<br>4.                           |
|--|-------------------------------|--|--|
| <b>Տարածք</b>  |                               |  |  |
| Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը                         |                               |  |  |
| ընդամենը, այդ թվում՝   | հա                            | 7609.49                                      | 7609.49                                      |
| <b>Քանակային հողեր</b> , որից.   | հա                            | 479.29                                       | 553.36                                       |
| բնակելի կառուցապատման  | - " -                         | 286.44                                       | 390.96                                       |
| հասարակական կառուցապատման  | - " -                         | 32.09  | 79.16  |
| խառը կառուցապատման   | - " -                         | 4.97   | 12.74  |
| Ընդհանուր օգտագործման հողեր, որից.   | - " -                         | 74.87  | 32.5   |
| ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ  | - " -                         | 10.0   | 32.5   |
| Այլ հողեր  | - " -                         | 80.92  | 38.0   |
| <b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր</b>            | - " -                         | 125.27                                       | 125.27                                       |
| Արդյունաբերական օբյեկտների   | - " -                         | 11.25  | 11.25  |
| գյուղատնտեսական արտադրական օբյեկտների  | - " -                         | 92.89  | 92.89  |
| Պահեստարանների   | - " -                         | 7.69   | 7.69   |
| ընդերքի օգտագործման  | - " -                         | 13.44  | 13.44**                                      |
| <b>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից</b>              | - " -                         | 34.57  | 34.57  |
| Էներգետիկայի   | - " -                         | 1.54   | 1.54   |
| Կապի   | - " -                         | 0.69   | 0.69   |
| տրանսպորտի   | - " -                         | 26.23  | 26.23  |
| կոմունալ ենթակառուցվածքների  | - " -                         | 6.10   | 6.10   |
| <b>Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝</b>  | - " -                         | 35.73  | 39.63  |
| առողջարարական նպատակներով նախատեսված   | - " -                         | 3.73   | 3.73   |
| հանգստի համար նախատեսված   | - " -                         | -  | 3.9  |
| պատմական եվ մշակութային  | - " -                         | 32.00  | 32.0   |
| <b>Հատուկ նշանակության</b>   | - " -                         | 208.39                                       | 208.39                                       |
| <b>Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից</b>  | - " -                         | 5760.84                                      | 5687.27                                      |
| վարելահող  | - " -                         | 2604.50                                      | 2602.0                                       |
| բազմամյա տնկաբոս   | - " -                         | -  | -  |
| խոտհարքներ   | - " -                         | 1626.67                                      | 1626.67                                      |
| արոտավայրեր  | - " -                         | 1403.9                                       | 1332.83                                      |
| այլ հողատեսքեր   | - " -                         | 125.72                                       | 125.72                                       |
| <b>Մետաղային հողեր</b>   | - " -                         | 888.06                                       | 883.66                                       |
| <b>Ձրային հողեր</b>  | - " -                         | 77.34  | 77.34  |
| <b>Պահուստային տարածքներ</b>   | - " -                         | -  | -  |
| <b>Դեմոգրաֆիկական տվյալներ</b>   |                               |  |  |
| բնակչության թիվը   | հազ. մարդ                     | 13.3   | 25.0   |
| բնակչության խտությունը   | հազ. մարդ/հա                  | 0.028  | 0.05   |
| <b>Քանակի ֆոնդ</b>   |                               |  |  |
| Ընդհանուր բնակելի ֆոնդ, որից.  | հազ. մ <sup>2</sup>           | 732.3  | 875.0  |
| Լոր բնակելի շինարարության հարաբերությունը ըստ հարկայնության                                | %                             | -  | 100  |
| Մակավահարկ   | %                             | -  | 95   |
| Բազմահարկ  | %                             | -  | 5  |
| <b>Բնակչության մշակութային ցարկային սպասարկման հիմնարկությունների համակարգ</b>             |                               |  |  |
| մանկական նախադպրոցական հիմնարկներ  | տեղ                           | 520  | 3903   |
| հանրակրթական դպրոցներ  | տեղ                           | 2744   | 4500   |
| հիվանդանոցներ  | մահճա-կայ                     | 50   | ***  |
| պոլիկլինիկաներ   | հերթում հաճախում              | 80   | ***  |
| <b>Տրանսպորտային սպասարկում</b>  |                               |  |  |
| <b>Ուղևորատար հասարակական տրանսպորտի գծերի երկարությունը՝</b>                              |                               |  |  |
| Արտաքին տրանսպորտ  | կմ                            | -  | -  |
| Ավտոբուս, միկրոավտոբուս  | ե-ե                           | -  | 13.9   |
| Ճակատային  | ե-ե                           | -  | -  |
| Մայրուղային ճանապարհների և փողոցների երկարությունը (ընդամենը)                              | կմ                            | 10.62  | 15.02  |
| Փողոցաճանապարհային ցանցի խտությունը  |                               |  |  |
| քաղաքային կառուցապատման սահմաններում   | կմ/կմ <sup>2</sup>            | 2.2  | 2.6  |
| Կամուրջներ, ուղեկամուրջներ   | հատ                           | 3  | 7  |
| <b>Խմելու ջրի և սառնամանիկի առկայությունը և բարելավումը</b>                                |                               |  |  |
| Ընդհանուր ջրօգտագործումը   | հազ. մ <sup>3</sup> /օր       | 6700.0                                       | 8083.0                                       |
| - տնտեսական - խմելու նպատակով  | ե-ե                           | -  | 5000.0                                       |
| - արտադրական կարիքների համար   | ե-ե                           | -  | 1250.0                                       |
| Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառուցվածքների հզորությունը                          | Վ/րկ                          | 140.0  | 140.0  |
| Ջրամատակարարման օգտագործման աղբյուրները  | ե-ե                           | Ակյունին, Բագում                             | Ակյունին, Բագում                             |
| Մաքուր ջրօգտագործումը  | Վ/րկ                          | -  | -  |
| այդ թվում տնտեսական-խմելու նպատակով  | մ <sup>3</sup> /օր            | -  | 6736.0                                       |
| <b>Կոյուղի</b>   |                               |  |  |
| Կեղտաջրերի ընդհանուր ելքը (ընդամենը), այդ թվում՝   | մ <sup>3</sup> /օր            | -  | 6000.0                                       |
| կենցաղային կոյուղի   | ե-ե                           | -  | 5000.0                                       |
| արտադրական կոյուղի   | ե-ե                           | -  | 1000.0                                       |
| Կոյուղու մաքրման կայանի արտադրողականությունը   | ե-ե                           | չկա  | 6000.0                                       |
| <b>Էլեկտրամատակարարում</b>   |                               |  |  |
| Էլեկտրաէներգիայի գումարային օգտագործումը այդ թվում՝  | հազ. կվտ. ժամ/տարի            | 5950.0                                       | 56450.0                                      |
| արտադրական օբյեկտների կարիքների համար  | ե-ե                           | 550.0  | 1200.0                                       |
| կոմունալ-կենցաղային կարիքների համար  | ե-ե                           | 5400.0                                       | 42500.0                                      |
| 1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործումը                                      | կվտ/ժամ տարի                  | 205  | 1700   |
| Էլեկտրաէներգիայի ցածր մակարդակի արդյունավետությունը  | ՍԿԱ                           | «Տաշիր»<br>110/35/10 կվ, 2x10.0<br>ենթակայան | «Տաշիր»<br>110/35/10 կվ, 2x10.0<br>ենթակայան |
| <b>Ցերմամատակարարում</b>   |                               |  |  |
| Ցերմամատակարարում  |                               | չի գործում                                   | լուրջ համակարգ                               |
| Բնակավայրի վառելիքային հաշվեկշռում զբաղի տեսակարար կշիռը                                   | %                             | 90   | 100  |
| Գազի օգտագործումը (ընդամենը), այդ թվում՝   | հազ. մ <sup>3</sup> /տարի     | 2526.0                                       | 5300.0                                       |
| Կոմունալ-կենցաղային կարիքների համար  | հազ. մ <sup>3</sup> /տարի     | 1945.0                                       | 3500.0                                       |
| Արտադրական կարիքների համար   | ե-ե                           | 581.0  | 1800.0                                       |
| <b>Տարածքի ինժեներական նախապատրաստումը</b>   |                               |  |  |
| Հեղեղատարի երկարությունը   | կմ                            | -  | 2.0  |
| Հեղեղապաշտպան պատնեշներ  | հատ                           | -  | -  |
| Գետափերի ամրացում և կարգավորում  | մ <sup>3</sup>                | 6  | 8  |
| <b>Կենցաղային աղբի ծավալը</b>  | հազ. տ. տարի                  | 2.3  | 6.2  |
| <b>Շրջակա միջավայրի պահպանությունը</b>   |                               |  |  |
| Մղբի այրման և աղբավերամշակման կազմակերպություններ  |                               | արքավայր                                     | արքավայր                                     |
| Մանիտարապաշտպանիչ գոտիներ աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից (ընդամենը) | հա                            | -  | 28.0   |
| այդ թվում՝ կանաչապատում  | հա                            | -  | 5.6  |
| Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը  | % սահմ. թույլատ. խտ.-ից (ՍՁԹ) | ՍՁԹ-ից ցածր                                  | ՍՁԹ-ից ցածր                                  |
| Ջրամբարների աղտոտվածության մակարդակը   | ե-ե                           | ՍՁԹ-ից ցածր                                  | ՍՁԹ-ից ցածր                                  |
| Հողի և ընդերքի աղտոտվածության մակարդակը  | ե-ե                           | ՍՁԹ-ից ցածր                                  | ՍՁԹ-ից ցածր                                  |

\* - կիրառված են համայնքի հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին գոյություն ունեցող ցուցանիշները՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.01.06 թվականի հաշվետվության

\*\* - տվյալները չեն լրացվում՝ հեռանկարային շահագործման ինտենսիվության կանխատեսման անհնարիության պատճառով

\*\*\* - Строительные нормы и правила, Градостроительство, Планировка и застройка городских и сельских поселений СНиП 2.07.01.-89, Москва, 1989 г.

**Գ Լ ՈՒ Խ III**

**ՏԱՇԻՐ ԲԱՂԱՔԻ ՏԱՐԱԾԵԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ԱՆՏՈՒՆԵՐԻ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Տաշիր քաղաքի գոտիավորման նախագիծը մշակվել է ըստ ՀՀ Զարգացչիության նախարարության ՄԲ ԱՇՁԲ-06/12-1 պայմանագրի, տեխնիկական առաջադրանքի և գոտիավորման կարգի պահանջների համաձայն:

- Գոտիավորման նախագծի հիմնորոշ սկզբունքներն են՝
- Փ գոյություն ունեցող ճարտարապետաքաղաքաշինական ավանդույթների պահպանումը,
- Փ պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի գեղագիտական անբողջական կերպարը խաթարող կառույցների աստիճանական վերացումը,
- Փ պատմամշակութային հուշարձանների պահպանման և դրանց առավել շահեկան օգտագործման ապահովումը,
- Փ կազմավորված միջավայրին անհարիր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների վերատեղաբաշխումը,
- Փ տրանսպորտային-հետիոտն ակտիվության կանոնակարգումը և կարգավորումը,
- Փ բնական այգեպարակային լանդշաֆտի վերականգնման, պահպանման և հետագա օգտագործման միջոցառումների իրականացումը,
- Փ թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, ավանդական արհեստների արտադրության, զբոսաշրջիկների սպասարկման ու գովազդի հետ կապված հնարավորությունների խրախուսումը:

**III-1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

**III-1.1. Գոտիավորման նախագծի իրավագործությունը**

Սույն գոտիավորման նախագիծը՝ հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, ծառայում է որպես քաղաքաշինական գործունեությունը կարգավորող հիմնական իրավական միջոց, սահմանելով բնակավայրի փաստացի և հեռանկարային օգտագործման և կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման նպատակով:

Գոտիավորման նախագիծը սահմանված յուրաքանչյուր գոտու համար անհրաժեշտ է մշակել միասնական կառուցապատման նախագիծ: Համապատասխան ընթացակարգով հաստատվելուց հետո, նախագիծը դառնում է գոտիավորման նախագծի անբաժանելի մասը և կատարում է նրա բոլոր գործառնությունները: Ընդ որում, հաստատվելուց հետո կառուցապատման նախագծի բոլոր դրույթները դառնում են առաջնային՝ տվյալ գոտու համար գոտիավորման նախագծի նախանշումների նկատմամբ:

**III-1.2. Գոտիավորման նախագծի հիմնական նպատակները**

Փ Հասարակության առողջության, անվտանգության, և բարեկեցության ապահովումը քաղաքաշինական գործունեության, հողատնտեսության և կառուցապատման գործընթացների կարգավորման և համակարգման միջոցով:

- Փ Զարգացի գարգացման ընթացքում առողջ և գրավիչ միջավայրի ձևավորման ապահովումը:
- Փ Հողօգտագործման տեսակների դասակարգումն ըստ դրանց նպատակային օգտագործման:
- Փ Շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանումը:
- Փ Զարգացի կազմավորված, պատմաճարտարապետական արժեք ներկայացնող հատվածների վերակառուցման և վերանորոգման խրախուսումը՝ միջավայրի առանձնահատուկ ճարտարապետական կերպարի պահպանմամբ:
- Փ Կազմավորված քաղաքաշինական միջավայրին համապատասխան գեղագիտական քաղաքակառուցության ապահովումը՝ ժամանակակից դիսանիկ գարգացման պահանջների հաշվառումով:

**III-1.3. Գոտիավորման նախագծի կիրառման բնագավառը**

- Գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝
- Փ Զարգացի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:
- Փ Գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակների և վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:
- Փ Գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

**III-1.4. Գոտիավորման համակարգի կառուցվածքը**

Գոտիավորման նախագիծը հիմնվում է «ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև» սկզբունքի վրա: Նախագիծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատրվող հետևյալ ձևերը՝

- Փ թույլատրվում է,
  - Փ չի թույլատրվում:
- Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

**III-1.5. Գոտիավորման նախագծի իրավական հիմքերն են**

- Փ Բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը
- Փ ՀՀ բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նորմերը,
- Փ Տաշիր քաղաքի գլխավոր հատակագիծը,
- Փ ՀՀ գործող օրենքները և ենթաօրենսդրական ակտերը:

**III-1.6. Գոտիավորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ**

Գոտիավորման նախագիծը քաղաքի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է քաղաքի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, գարգացման ուղղությունների, բոլոր տեսակի հողերի նպատակային օգտագործման, կառուցապատման ինտենսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ: Նախագիծում հաշվի են առնված նաև հողօգտագործման սխեմայում ներառված դրույթները:

**III-2. ՏԱՐԱԾԵՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՆՏՈՒՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ**

**III-2.1. Սահմաններ**

Նախագիծը տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծում առանձնացված գոտիավորման տարածքի սահմաններին: Տարածքի ընդհանուր մակերեսը 50 հա:

## **Գոտիավորման շրջանների (գոտիների) սահմանները**

Նախագծվող գոտիավորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

Ø Եթե գոտիավորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտիավորման շրջանի սահմանը.

Ø Եթե գոտիավորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,

Ø Եթե գոտիավորման շրջանի սահմանը անցնում է կիսում է ինչ որ մի առանձին տիրույթ, ապա գոտիավորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության կշռումով:

### **III-2.2. Կլիմայական պայմաններ**

Նախագծվող տարածքը գտնվում է շինարարակլիմայական չափավոր գոտում (հունվարի միջին ջերմաստիճանը՝ 0°C մինչև - 5°C, հուլիսինը՝ 16°C մինչև 20°C, հարաբերական խոնավությունը ձմռանը՝ 50-70%, ամռանը՝ 45-60%, քամու ուժովը՝ ամռանը՝ 2.5-3 մ/վրկ, ձմռանը՝ 3-5 մ/վրկ):

### **III-2.3. Հողածածկույթ**

Նախագծվող տարածքի հողածածկույթը բարենպաստ է կանաչապատման համար:

### **III-2.4. Ինժեներաերկրաբանական պայմաններ**

Քաղաքի տարածքի գետին հարող հատվածներում դիտվում է գրունտային ջրերի բարձր մակարդակ (0-3 մ), մակերևութային հոսք, հեղեղաբերություն (առաջարկված են պաշտպանության միջոցառումներ՝ լեռնային առուների կառուցմամբ):

### **III-2.5. Սեյսմատեկտոնական պայմաններ**

Ըստ սեյսմավտանգավորության աստիճանի տարածքում գրունտների հաշվարկված ա սեյսմիկ արագացումները տատնվում են 0.20-0.25 g (որը համապատասխանում է 8.0-8.25 բալի):

### **III-2.6. Ինժեներական ենթակառուցվածքներ**

#### **Ջրամատակարարում**

Տաշիր քաղաքի ջրամատակարարման վիճակն անբավարար է՝ ցանցի տեխնիկական անբարեկարգ վիճակի պատճառով: Առաջարկվում է ջրամատակարարման ցանցի վերագինում, վերակառուցում:

#### **Կոյուղացում**

Կոյուղատար ցանցը կառուցվել է տարիներ առաջ, տեխնիկական վիճակը խիստ անբավարար է, կոյուղու մաքրման կայանի բացակայության պատճառով կեղտաջրերը լցվում են գետը, ստեղծելով հակասանիտարական վիճակ: Կոյուղու ցանցը ենթակա է հիմնովին վերակառուցման: Նախատեսված է նոր մաքրման կայան՝ քաղաքի հարավային մասում:

#### **Էներգամատակարարում**

#### **Էլեկտրամատակարարում**

Քաղաքի էլեկտրամատակարարումն իրականացնում է ՀՀ «Հյուսիսային» էներգոցանց համակարգի «Տաշիր» էլեկտրական ցանցեր մասնաճյուղի կողմից: Էլեկտրամատակարարման աղբյուր են հանդիսանում «Տաշիր-1» 110/35/6 լարման ենթակայանը:

Գոտիավորման տարածքների էներգամատակարարումը կիրականացվի քաղաքի գործող էլեկտրամատակարարման համակարգին միացման միջոցով, որի պահանջը կապահովվի նշված աղբյուրներից: Նախատեսվում է համակարգի արդիականացում:

#### **Գազամատակարարում**

Քաղաքը գազիֆիկացված է, կատարվում են վերագազաֆիկացման աշխատանքներ: Գազամատակարարումն իրականացնում է ՀՀ գազամատակարարման համակարգի բարձր ճնշման 500 մմ տրամագծով գազատարի ԳԲԿ-ի հատվածից:

Գոտիավորման տարածքների գազամատակարարումը կիրականացվի նախատեսվող գազակարգավորիչ կետերի միջոցով:

#### **Ջերմամատակարարում**

Մինչև 1991 թվականը քաղաքում գործել է կենտրոնացված ջերմային համակարգ, հարկաշատ, բնակելի, առողջապահական, կրթական շինությունների ջերմային կարիքների բավարարման համար, որն իրականացվել է նախկինում գործող կաթսայատների միջոցով, Ներկայումս այդ կաթսայատները, հայտնի պատճառներով, չեն գործում: Սարքավորումները և ջերմամատակարարման ցանցը շարքից դուրս են եկել:

Նախատեսվում է ջերմային համակարգը վերականգնել՝ լոկալ փոքր հզորության կաթսայատներից: Գոտիավորման տարածքի բազմաօժանոթ կառուցապատման սեկտորներում ջերմամատակարարումը կիրականացվի նշված լոկալ կաթսայատների միջոցով, սակավաօժանոթ թաղամասերում՝ սպալեկենտրոնացված ջերմամատակարարման՝ լոկալ ջեռուցմամբ:

#### **Կապ**

Տաշիր քաղաքի հեռախոսային կապն իրականացվում է «Արմենթել» ՓԲԸ մասնաճյուղի կողմից:

### **III-3. Շրջակա միջավայրի պահպանություն**

Տաշիր քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի մշակման փուլում նախատեսված են միջոցառումներ գոտիավորման տարածքների հողածածկույթի, մակերևութային և խորքային ջրերի, մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ:

### **III-4. Գոտիավորման նախագծի կազմը**

Գոտիավորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը: Նախագիծը ներառում է

Ø Գործառնական գոտիավորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառնական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները:

Ø Ծավալատարածական գոտիավորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառմամբ:

### **III-5. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները**

Հոդերը գոտիավորված են ըստ հիմնական և օժանդակ գոտիների:

#### **Հիմնական գոտիներ\***

Հիմնական են համարվում հողերի գոտիավորումը ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումների:

Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ հիմնական գոտի:

Քաղաքի գոտիավորման տարածքում ըստ նպատակային նշանակության առանձնացված են հետևյալ հիմնական գոտիները.

- Բնակավայրերի հողեր,
- Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,
- Հատուկ պահպանվող տարածքների հողեր,
- Անտառային հողեր,
- Ջրային հողեր:

**Օժանդակ գոտիներ\***

Օժանդակ է համարվում հողամասերի գոտիավորումը՝ ըստ գործառական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների: Հիմնական գոտիներն իրենց հերթին ստորաբաժանվել են աստիճանական զարգացման և համալիր հատակագծման հետևյալ օժանդակ գոտիների ըստ թույլատրելի օգտագործումների\*:

Աստիճանական զարգացման գոտիների առանձնացման հիմնական նպատակն է որոշակի տարածքների փուլ առ փուլ երկարաժամկետ զարգացման և կառուցապատման խրախուսումն ու երաշխավորումը: Սահմանվում են հետևյալ աստիճանական զարգացման հիմնական գոտիները՝

- Բնակելի կառուցապատման գոտի,
- Խառը կառուցապատման գոտի
- Հասարակական գործառնությունների զարգացման գոտի
- Ընդհանուր օգտագործման տարածքների գոտի (հասարակական կանաչ)
- Հասարակական սպասարկման և առևտրի գոտի
- Անտառապուրակային գոտի
- Բուժական գոտի
- Ուսումնական գոտի
- Հանգստի համար նախատեսված գոտի
- Բուժերային գոտի
- Ինժեներական ենթակառուցվածքների գոտի

Համալիր հատակագծման օժանդակ գոտիների առանձնացման հիմնական նպատակներն են՝

- խրախուսել տարածքի բազմաբնույթ օգտագործումը համալիր նախագծման միջոցով,
- ապահովել համաքաղաքային համալիրների օպտիմալ տեղաբաշխումը,
- ներդաշնակորեն ինտեգրել հատուկ նախագծվող համալիրները կազմավորվող քաղաքաշինական միջավայրում:

\* - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05.05.98 թ., վավերացված ՀՀ նախագահի կողմից 26.05.98 թ., Գլուխ VI, հոդված 14

Սահմանվում են հետևյալ համալիր հատակագծման հիմնական գոտիները՝

- Առևտրի համաքաղաքային գոտի,
- Տնավաճառային գոտի,
- Արտաքին տրանսպորտի գոտի:

Ստորև տրված է հողերի օժանդակ գոտիավորումը

|   |
|---|
| Անհատական բնակելի կառուցապատման գոտի, ԱԿԳ<br>Բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտի, ԲԿԳ<br>Խառը կառուցապատման գոտի, ԽԿԳ<br>Հասարակական-վարչական կառուցապատման գոտի, ՀԿԳ<br>Հասարակական սպասարկման և առևտրի գոտի, ՀՍԱԳ<br>Հասարակական օգտագործման կանաչ գոտի, ՀՕԿԳ<br>Ինժեներական ենթակառուցվածքների գոտի, ԻԵԳ<br>Բուժական գոտի, ԲԺԳ<br>Ուսումնական գոտի, ՈԲԳ<br>Ռեկրեացիոն գոտի, ՌԳ<br>Տնավաճառային գոտի, ՏԳ<br>Արտաքին տրանսպորտի գոտի, ԱՏԳ<br>Արտադրական և կոմունալ-պահեստային գոտի, ԱԳ<br>Բուժերային գոտի, ԲՖԳ<br>Անտառապուրակային գոտի, ԱՆՊԳ |
|---|

**Ծանոթություն.** Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեցող գոտիների (համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, հասարակական կենտրոնի, քաղաքային մուտքի ազդեցության տարածման) առաջադրած պահանջների, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման (բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, Էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների և այլն), տարբեր տիպի կառուցապատումների, հաղորդակցության ուղիների, դրանց կառուցվածքների և ինժեներական ենթակառուցվածքների ազդեցության, սանապահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ:

**Գոտիներում հիմնական օգտագործման ձևերն են՝**

**1. Բնակելի կառուցապատում**

- Ø Առանձնատներ տնամերձ հողամասերով:
- Ø Բազմաբնակարանոց տներ:

**2 Հյուրանոցային ծառայություններ՝**

- Ø Հյուրանոցներ (սահմանափակ կոնտինգենտի համար, մինչև 200 տեղ),
- Ø Մոթելներ (առանց սահմանափակումների),
- Ø Հյուրանոցներ, մոթելներ, քեմփինգներ սահմանափակված մինչև 20 տեղ,
- Ø Հանրակացարաններ:

**3. Կրթական հաստատություններ**

- Ø Մանկապարտեզներ, մանկամսուրներ :
- Ø Միջնակարգ դպրոցներ:
- Ø Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ:
- Ø Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ:

**4. Բուժական հիմնարկություններ**

- Ø Բուժական կաբինետներ,
- Ø Պոլիկլինիկաներ:

**5. Վարչական, ֆինանսական հիմնարկություններ և ծառայություններ**

- Ø Մարզային և քաղաքային նշանակության վարչակառավարման հիմնարկներ,
- Ø Անհատական գրասենյակներ (օֆիսներ):
- Ø Բանկեր, բորսաներ և դրամավարկային այլ հաստատություններ, դրանց գրասենյակներ:
- Ø Փոստատներ, կապի բաժանմունքներ:
- Ø Ոստիկանական տեղամասեր:
- Ø Հրշեջ ծառայություններ,
- Ø Քաղաքացիական պաշտպանություն:
- Ø Ապաստարաններ:

**6. Կենցաղ սպասարկման առաջնային ծառայություններ**

- Ø Կարսավիրանոցներ,
- Ø Զիմաքրման ընդունման կետեր, լվացքատներ,
- Ø Կոշիկի, հագուստի և կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ,
- Ø Հասարակական բաղնիքներ, սաունաներ,
- Ø Հասարակական սանհանգույցներ,
- Ø Աղբարկղեր:

**7. Հասարակական օգտագործման և մարզական հաստատություններ**

- Ø Գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ, արվեստի սրահներ,
- Ø Ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ,
- Ø Թատրոններ և կինոթատրոններ ,
- Ø Բուսաբանական, կենդանաբանական, մշակույթի, հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ,
- Ø Սեղանի թենիս, բիլիարդի դահլիճներ, բոուլինգ դահլիճներ, մարզադահլիճներ, ջրավազաններ և այլ մարզական կառույցներ,
- Ø Մարզադաշտեր, խաղադաշտեր,
- Ø Մասնավոր բացօթյա ռեկրեացիոն կառույցներ՝ լողի, թենիսի և այլ ակումբներ,
- Ø Դուրակներ անիվավոր չմուշկների և այլնի համար,
- Ø Հրածագարաններ:

**8. Առևտրական օբյեկտներ**

- Ø Սուպերմարքեթներ, հանրախանութներ, առևտրի կենտրոններ,
- Ø Մանրածախ առևտրի, խանութներ, տաղավարներ, կրպակներ,
- Ø Ավտոպահեստամասերի վաճառք,
- Ø Տոնավաճառներ, ֆերմերային շուկաներ (բացառությամբ կենդանիների վաճառքի),
- Ø Կենդանի ձկների վաճառք,
- Ø Բացօթյա մանրածախ, մեծածախ առևտուր,
- Ø Կենդանիների վաճառք:

**9. Հասարակական սննդի օբյեկտներ**

- Ø Ավանդական ուտեստների խոհանոց, պանդոկներ, խորտկարաններ, մառաններ, ճաշարաններ,
- Ø Ռեստորաններ, սրճարաններ և բարեր ոչ ավելի քան 20 նստելատեղով,
- Ø Բացօթյա ռեստորաններ, բարեր, սրճարաններ,
- Ø Ռեստորաններ, սրճարաններ և բարեր (առանց սահմանափակումների),
- Ø Արագ պատրաստվող ուտեստների խորտկարաններ:

**10. Արտադրական օբյեկտներ**

- Ø Արդյունաբերական օբյեկտներ,
- Ø Արտադրական օբյեկտներ, որոնք գործունեությունը կապված չէ աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի, մթնոլորտի աղտոտման (ծուխ, գազեր) հետ,
- Ø Փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի, մթնոլորտի աղտոտման (ծուխ, գազեր) հետ,
- Ø Հացի, հրուշակեղենի, ոչ ոգելից ըմպելիքի, սննդամթերքների փոքրածավալ արտադրություն,
- Ø Գյուղատնտեսական մթերքների արտադրություն,
- Ø Տնայնագործական արտադրություն (վերամշակում, վերանորոգում, նորոգում, ներկում, մաքրում, սարքավորումների հավաքում, սեփական արտադրանքի առևտուր:

**11. Ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ**

- Ø Ավտոբուսային կայարաններ,
- Ø Տրանսպորտի հավաքակայաններ,
- Ø Բենզալցավորման կայաններ,
- Ø Ավտոկայանատեղեր:

**12. Գյուղատնտեսական**

- Ø Գյուղատնտեսական մթերքների վերամշակում, արտադրություն,
- Ø Գյուղատնտեսական աշխատանքներ (այգեգործություն),
- Ø Գյուղատնտեսական աշխատանքներ (անասնապահական համալիրներ՝ ընտանի կենդանիների բուծում),
- Ø Տնկարաններ, անտառային տնտեսություն:

**13. Ինժեներական ենթակառուցվածքներ և սարքավորումներ**

- Ø Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարներ (ՕԿՁ),
- Ø Ոչ մետաղական (պոլիէթիլենային, բետոնե) ստորգետնյա խողովակաշարեր,
- Ø Մետաղական խողովակաշարեր (երկաթբետոնե, թուջե),
- Ø Ջրամատակարարման բաշխիչ հորեր,
- Ø Կոյուղու ցանցային հորեր,
- Ø Վերգետնյա հաղորդալարեր,
- Ø Մալուխային էլեկտրահաղորդազծեր,
- Ø Էլեկտրական ենթակայաններ,
- Ø Ավտոմատ գազաբաշխիչ կայան (ԱԳԿ),
- Ø Գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ),
- Ø Փոքր հզորության լոկալ կաթսայատներ մինչև 5 ՀԿ/ժամ,
- Ø Հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային),
- Ø Կապի ավտոմատ հեռախոսային կայան:

**14. Ոչ հիմնական շինություններ**

- Ø Տաղավարներ,
- Ø Ճարտարապետական փոքր ձևեր:

**III-6. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՄԱԿ**

| Օգտագործման ձևեր                                 | ԱԿԳ | ԲԿԳ | ԽԿԳ | ՀԿԳ | ՀՕԿԳ | ՀՍԱԳ | ՏԳ | ԻԵԳ | ԲԺԳ | ԱՆՊԳ | ՈՒԳ | ԱՏԳ | ԱԳ | ԲՖԳ | ՈԳ |
|--|-----|-----|-----|-----|------|------|----|-----|-----|------|-----|-----|----|-----|----|
| <b>Բնակելի կառուցապատման ձևեր</b>                |     |     |     |     |      |      |    |     |     |      |     |     |    |     |    |
| Առանձնատներ տնամերձ հողամասերով                  | ●   |     | ●   |     |      |      |    |     |     |      |     |     |    |     |    |
| Բազմաբնակարանանոց տներ                           |     | ●   | ●   |     |      |      |    |     |     |      |     |     |    |     |    |
| <b>Հյուրանոցային ծառայություններ</b>             |     |     |     |     |      |      |    |     |     |      |     |     |    |     |    |
| Հյուրանոցներ (մինչև 200 տեղ)                     |     |     |     | ●   |      | ●    |    |     |     |      |     |     |    |     | ●  |
| Մոթելներ (առանց սահմ.)                           |     |     |     |     |      | ●    |    |     |     |      |     |     |    |     | ●  |
| Ճանապարհամերձ տներ (վարձ. տրվող գյուղ.տներ)      | ●   |     | ●   |     |      |      |    |     |     |      |     |     |    |     |    |
| Հյուրանոցներ, մոթելներ (սահմանափակ կոնտինգենտով) | ●   | ●   | ●   | ●   |      |      |    |     |     |      |     | ●   |    |     |    |
| Հանրակազմակերպություններ                         |     | ●   | ●   |     |      |      |    |     |     |      | ●   |     |    |     |    |





### III-7. ԳՈՏԻՆԵՐ

#### **1. Անհատական բնակելի կառուցապատման գոտի (ԱԿԳ)**

Այս գոտին առանձնացվում է հիմնականում արդեն կազմավորված առանձնատնային կառուցապատում ունեցող թաղամասերի վերակառուցման, կանոնակարգման համար:

##### **1.1. Թույլատրված օգտագործման ձևեր**

###### **Բնակելի**

Ø Առանձնատներ տնամերձ հողամասերով:

###### **Հյուրանոցային**

Ø Հյուրատներ (սահմանափակ հզորությամբ),  
Ø Վարձակալությամբ տրվող առանձնատներ:

###### **Բուժական հաստատություններ**

Ø Բուժական կաբինետներ:

###### **Վարչական, ֆինանսական հիմնարկություններ և ծառայություններ**

Ø Անհատական գրասենյակներ (օֆիսներ):  
Ø Զառարկայական պաշտպանության ապաստարաններ:

###### **Բուժական**

Ø Բուժական կաբինետներ:

###### **Կենցաղ սպասարկման առաջնային ծառայություններ**

Ø Վարսավիրանոցներ,  
Ø Զինմաքրման ընդունման կետեր, լվացքատներ,  
Ø Կոշիկի, հագուստի, կենցաղային տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ,  
Ø Հասարակական բաղնիքներ,  
Ø Աղբարկղեր:

###### **Առևտրական**

Ø Մանրածախ առևտրի խանութներ, տաղավարներ, կրպակներ:

###### **Հասարակական սնունդ**

Ø Ռեստորաններ ոչ ավելի քան 20 նստելատեղով,  
Ø Սրճարաններ և բարեր (սահմանափակ նստելատեղերով):

###### **Արտադրություն**

Ø Փոքր բիզնեսի արտադրություններ, որոնք կապված չեն աղմուկի, պայթուցիկ, հրդեհավտանգ նյութերի և մթնոլորտի աղտոտման հետ,  
Ø Հացի, հրուշակեղենի, ոչ ոգելից ըմպելիքի, մթերքների (բացի մսից) փոքրածավալ արտադրություն,  
Ø Տնայնագործական արտադրություն, սեփական արտադրանքի առևտուր,  
Ø Արհեստագործական արտադրամասեր և արհեստանոցներ (ավանդական իրերի արտադրություն):

###### **Հաղորդակցություններ, ավտոծառայություններ և տրանսպորտային կառույցներ**

Ø Ավտոկանգառներ,  
Ø Ավտոտնակներ,  
Ø Բենզալցավորման կայաններ:

###### **Գյուղատնտեսություն**

Ø Գյուղատնտեսական աշխատանքներ (այգեգործություն)՝ ներառյալ ընտանի կենդանիների բուծումը,  
Ø Տնկարաններ:

###### **Ինժեներական սարքավորումներ**

Ø Վերգետնյա հաղորդալարեր,  
Ø Գազակարգավորիչ պահարանային կետեր,  
Ø Հեռախոսային կապի բաշխիչ կետեր,  
Ø Կոյուղու ցանցային հորեր,  
Ø Ջրամատ. բաշխիչ հորեր,  
Ø Մալուխային էլեկտրահաղորդագծեր,  
Ø Փոքր հզորության լոկալ կաթսայատներ,  
Ø Ստորգետնյա խողովակաշարեր:

###### **Ոչ հիմնական շինություններ**

Ø Ճարտարապետական փոքր ձևեր:

###### **Կառուցապատման չափորոշիչներ**

Առանձնատներ՝ տնամերձ հողամասերով,  
Ø Հողամասի մակերես (նվազագույն) - 400-600 քմ  
Ø Մեկ կառուցապատման միավորի զբաղեցրած տարածք - հողամասի ընդհանուր մակերեսի 1/3-ից ոչ ավելի,  
Ø Հողամասի ճակատի նվազագույն լայնություն - 20 մ:

###### **Կառուցապատման ծավալատարածական կարգավորիչներ**

Ø Շենքերի / շինությունների բարձրությունը (առավելագույն) - 8 մ  
Ø Շենքերի / շինությունների զբաղեցված տարածք (առավելագույն) - 50%  
Ø Հողամասի անջրանցիկ առավելագույն տարածք - 70%  
Ø Հողամասի նվազագույն կանաչ ծածկույթ - 30%

#### **2. Բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտի (ԲԿԳ)**

Այս թաղամասերը նախատեսվում են քաղաքի կենտրոնական միջուկում հողի արժեքի բարձրացմանը զուգընթաց հողն առավել արդյունավետ օգտագործելու (բարձր խտությամբ կառուցապատման իրականացմամբ), ինչպես նաև քաղաքային միջավայրին հատուկ բնակելի կառուցապատման զարգացմանը նպաստելու և խրախուսելու համար:

##### **2.1 Թույլատրված օգտագործման ձևեր**

###### **Բնակելի**

Ø Բազմաբնակարան տներ՝ առանց տնամերձ հողամասերի:

###### **Հյուրանոցային**

Ø Հյուրանոցներ (սահմանափակ),  
Ø Հանրակացարաններ:

###### **Կրթական հաստատություններ**

Ø Վճարովի և կիրակնօրյա դպրոցներ:

**Բուժական հաստատություններ**

Ø Բուժական կաբինետներ

